

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ
ՌԷԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



«ՆՍԹ Արքիթեքշուր Ստուդիո» ՍՊԸ
Իսահակ Ներսիսյան



Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	5
2. Հավելվածներ.....	5
3. Հապավումներ.....	5
4. Հիմնադրության փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը.....	5
4.1 Հայաստանի Հանրապետության հիմնադրության փաստաթղթին առնչվող միջազգային օրենսդրություն.....	5
4.2 Հայաստանի Հանրապետության ոլորտը կարգավորող իրավական ակտերը.....	7
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք.....	7
4.3. ՀՀ կառավարության որոշումները.....	9
5. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրության փաստաթղթի ՌԷԳ գործընթացին կարգավորման հիմքերը.....	11
6. ՌԷԳ շրջանակի սահմանում.....	13
7. Հիմնադրության փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, կապը և (կամ) համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրության փաստաթղթերի հետ.....	16
8. Հիմնադրության փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեության բնութագրերը, ռեսուրսային պահանջները, և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիները.....	20
8.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	21
8.2. Ռեսուրսային պահանջներ.....	24
9. Հնարավոր ազդեցության ենթակա տարածքը, պայմանները, խոչընդոտները.....	27
9.1. Հնարավոր ազդեցության ենթակա տարածք.....	27
9.2. Տարածքը շինարարության համար ունի որոշակի սահմանափակումներ և անբարենպաստ պայմաններ.....	29
10. Շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության ներկա վիճակը, սոցիալական գործոնները և խնդիրները.....	44
10.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	44
10.2. Սելամիկա և երկրաբանություն.....	48
10.3. Կլիմա և օդային ավազան.....	49
10.4. Հողային ռեսուրսներ.....	56
10.5. Ջրային ռեսուրսներ.....	58
10.6. Կենսաբազմազանություն.....	62
10.7. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	66
10.8. Հատուկ պահպանվող տարածքներ.....	72
10.9. Սոցիալական գործոններ, սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները, բնակչություն և առողջապահական խնդիրներ.....	72

11. Բնակչություն, առողջապահական գործոններ.....	78
12. Հիմնադրության փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր տարբերակների (այդ թվում՝ գրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.	80
13. Հիմնադրության փաստաթղթի նախագծի դրույթների գործողության իրականացման և չիրականացման դեպքերում շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, այդ թվում՝ անդրսահմանային.	94
13.1. Օդային ավազան.	94
13.2. Հողային ռեսուրսներ.	95
13.3. Մակերևութային և ստորգետնյա ջրեր.	95
13.4. Կենսաբազմազանություն.	97
13.5. Թափոններ.	97
13.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	98
13.7 Արտակարգ իրավիճակներ. հաշվետվության.....	99
13.8 Աղմուկ. թրթռում.....	100
13.9 Մարդու առողջություն և անվտանգություն.	100
13.10 Սոցիալական գործոններ.	101
13.11 Լանդշաֆտ. Բարեկարգում.	102
13.12 Կանաչապատման ծրագիր.	103
14. Անդրսահմանային ազդեցություն.	111
15. Շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրության փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրության փաստաթուղթը մշակելիս.....	111
16. Հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը.	120
16.1 Օդային ավազան.....	120
16.2. Ջրային ռեսուրսներ.....	121
16.3. Հողային ռեսուրսներ. հողային	121
16.4. Կենսաբազմազանություն.	122
16.5. Թափոն.	122
16.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	123
16.7. Արտակարգ իրավիճակներ.	124
16.8. Աղմուկ և թրթռում.	125
16.9. Մարդու առողջություն և անվտանգություն. Մարդու առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է	125
16.10 Սոցիալական գործոններ.	126
16.11 Լանդշաֆտ, բարեկարգում. կանաչապատում.....	126

17. Հիմնադրության փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետևախազծային վերլուծության ծրագիրը.....	128
17.1 Մոնիթորինգը`	128
17.2. Հետևախազծային վերլուծություն.....	129
18. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....	130
19. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան.....	146
20. Հիմնադրության փաստաթղթի շրջանակներում իրականացվող գործունեությունների ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (գնահատման -, +, 0 ցուցանիշներով) ամփոփ աղյուսակ:.....	150
21. Գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների` ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.	152
22. Հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.....	153
23. Տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:	153
24. ՌԷԳ հաշվետվության շրջանակներում կատարվող առաջարկություններ.....	154
Գրականության ցանկ.....	156

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի ՌԷԳ հաշվետվություն:
Նախաձեռնող	ՀՀ ԿՍՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց, 22 շենք:
Նախաձեռնողի փաստացի գործունեության հասցեն	ՀՀ Երևան քաղաքի և ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի վարչական տարածք:
Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Իսահակ Ներսիսյան – (091) 382351 is.nersisyan@gmail.com ,
Նախագծող	«ՆՍԹ Արքիթեքչուր Ստուդիո» ՍՊԸ
ՌԷԳ հաշվետվության կազմող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ.

Հավելված 1. Ակադեմիական քաղաքի հատակագիծը:

Հավելված 2. Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի և Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները:

Հավելված 3. Առավուտ թերթի հայտարարությունը

3. Հապավումներ.

ԱՔ՝ ակադեմիական քաղաք:

ՌԷԳ՝ ռազմավարական էկոլոգիական գնահատում:

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

ՀՓ՝ հիմնադրությային փաստաթուղթ

ԹՄԱ՝ թույլատրելի սահմանային արտահոսք

4. Հիմնադրությային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը

4.1 Հայաստանի Հանրապետության հիմնադրությային փաստաթղթին առնչվող միջազգային օրենսդրություն

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
1	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն / Կարթագենա, 2000		2000	2004	

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
2	ՄԱԿ-ի "Կլիմայի փոփոխության մասին" շրջանակային կոնվենցիա (Նյու-Յորք, 1992թ.)	1994	1992	1993	1993թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
3	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)			2002	2003 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
4	"Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին" կոնվենցիա (Գենևա, 1979թ.)	1983		1996	1997 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
5	"Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին" կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	1997 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
	Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրություն (Կիև, 2003թ.)		2003		
6	ՄԱԿ-ի "Անապատացման դեմ պայքարի" կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	1997 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
7	ՌԷԳ-ի վերաբերյալ ԵՄ դիրեկտիվ (2001/42/EC)				27 հունիս 2001թ.
8	"Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին" կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	1999 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
9	"Օզոնային շերտի պահպանության մասին" կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	1999 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
	"Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին" արձանագրություն (Մոնրեալ, 1987թ.)	1989		1999	1999 թ. -ին վերագրանցվել է ՄԱԿ-ի կողմից
10	"Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության և արդարադատության մատչելիության մասին" կոնվենցիա (Օրիուս, 1998թ.)	2001	1998	2001	
11	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա 2000)			2004	
12	Մշակութային եվ քնության համաշխարհային ժառանգության պաշտպանության կոնվենցիա (Փարիզ 1972)			1993	
13	Էներգետիկ խարտիայի պայմանագիր (Լիսբոն 1994)			1997	

N	Համաձայնագիր, կամ արձանագրություն, անունը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություններ
	Էներգետիկ խարտիային կից՝ էներգետիկ արդյունաբերության հարցերի և էկոլոգիական հարակից ասպեկտների արձանագրություն (Լիսբոն 1994)			1997	
14	Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն 1979թ.)	1982	2006		
15	ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումները ընդունելու գործընթացին հասարակայնության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա:				

4.2 Հայաստանի Հանրապետության ոլորտը կարգավորող իրավական ակտերը.

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

(2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (ՀՕ—293-Ն, 2007թ. նոյեմբեր 28) կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի գործունեության իրավական, կազմակերպական և տնտեսական հարաբերությունները, սահմանում է ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի պետական կարգավորման հիմունքները, ինչպես նաև կարգավորում է երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի փոխհարաբերությունները պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ. ՀՕ-522-Ն)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության

իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր

կազմակերպարարական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանում, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանում և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)-Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (2001 թ.) –սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002թ.) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

4.3.ՀՀ կառավարության որոշումները.

- ❖ ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 21դեկտեմբերի 2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության հունվարի 30-ի 2003 թ. «Հայաստանի Հանրապետությունում՝ վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշումը:
- ❖ ՀՀ կառավարության 08.02.2018թ. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 108- Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշում:
- ❖ Առողջապահության նախարարի 2002թ.մարտի 6-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմեր,
- ❖ Առողջապահության նախարարի 2006թ.մայիսի 17-ի N 533-Ն հրամանով հաստատված «Աշխատատեղերում,բնակելի և հասարակական շենքերում թրթռման /վիբրացիայի/» հիգիենիկ նորմեր:
- ❖ Առողջապահության նախարարի 2007թ.մայիսի 22-ի N 236-Ն հրամանով հաստատված «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեղակայմանը, կառուցվածքին և

շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր:

- ❖ Առողջապահության նախարարի 2006թ.մայիսի 17-ի N 534-Ն հրամանով հաստատված «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր:
- ❖ Առողջապահության նախարարի 2018թ.հոկտեմբերի 27-ի N 25-Ն հրամանով հաստատված «Մանկապատանեկան մարզադպրոցների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող պահանջներ» սանիտարական կանոններ,
- ❖ Առողջապահության նախարարի 2009թ.ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական գուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և նորմեր:
- ❖ Առողջապահության նախարարի 2012թ.սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» սանիտարական կանոններ և նորմեր:
- ❖ Առողջապահության նախարարի 2002թ.դեկտեմբերի 25-ի N 876-Ն հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» սանիտարական կանոններ և նորմեր:
- ❖ ՀՀ կառավարության 21.04.2023 թվականի «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N523-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 21.04.2023 թվականի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ» N592-Ն որոշում:

5. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրությային փաստաթղթի ՌԷԳ գործընթացին կարգավորման հիմքերը.

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 21դեկտեմբերի 2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման համաձայն:

ՌԷԳ-ի ենթակա են սոցիալ-տնտեսական զարգացման, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրությային փաստաթղթերի նախագծերը, որոնք սույն օրենքի 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների կամ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված նախագծերի իրականացման հիմքեր են պարունակում: Հիմնադրությային փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության չափանիշները սահմանվում են ՌԷԳ կարգով: Հիմնադրությային փաստաթղթի նախագծի ՌԷԳ-ը

և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրությային փաստաթղթի ընդունումը:

2. ՌԷԳ-ի իրականացման փուլերն են՝

1) ՌԷԳ շրջանակի որոշումը.

2) ՌԷԳ հաշվետվության կազմումը.

3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրությային փաստաթղթում:

3. Նախաձեռնողը՝

1) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փուլերում խորհրդատվության համար դիմում է լիազոր մարմին, առողջապահության բնագավառի կառավարման լիազոր մարմին, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով հիմնադրությային փաստաթղթի բնագավառը, դիմում է նաև սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բնագավառների կառավարման լիազոր պետական մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ. Սույն հիմնադրությային փաստաթուղթը Քաղաքաշինության և տարածքային զարգացման ոլորտի է, և համաձայն Օրենքի այն ենթակա է ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Համաձայն ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման պահանջների համաձայն:

Հիմնադրությային փաստաթղթի՝ ՌԷԳ հաշվետվությունը պետք է ներառի՝

1) հիմնադրությային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, առկայության դեպքում նաև կապը կամ համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրությային փաստաթղթերի հետ.

2) ՌԷԳ հաշվետվության ամփոփ բովանդակությունը, որը ներառում է տեղեկատվություն նախաձեռնողի մասին, հիմնադրությային փաստաթղթի ամփոփ նկարագիրը, հիմնադրությային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների հանրամատչելի, համառոտ նկարագիրը.

3) հիմնադրությային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի վնասակար ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմացնելու համար միջոցառումները.

4) հիմնադրությային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը:

5) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության ներկա վիճակը, սոցիալական գործոնները և խնդիրները.

6) շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրությային փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրությային փաստաթուղթը մշակելիս.

7) հիմնադրությային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության իրականացման և չիրականացման դեպքերում շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, այդ թվում՝ անդրսահմանային.

8) հիմնադրությային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր այլընտրանքային տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.

- 9) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը.
- 10) հիմնադրությային փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման և հետնախագծային վերլուծության ծրագիրը.
- 11) սույն հավելվածի 2-րդ կետում նշված գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.
- 12) հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.
- 13) տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:

6.ՌԷԳ շրջանակի սահմանում.

Շրջանակի սահմանման նպատակը-Շրջանակի սահմանումը թույլ է տալիս վեր հանել հիմնադրությային փաստաթղթին վերաբերող՝ շրջակա միջավայրի, մարդու առողջության պահպանման և կայուն զարգացման ոլորտում այն խնդիրները, որոնք մանրամասն կվերլուծվեն ՌԷԳ-ի գործընթացում:

Շրջանակի սահմանման գործընթացում որոշվել է գնահատման տարածքային ծածկույթը, այն տեղակայվելու է երկու տեղամասերում՝ Երևան քաղաքի 17-րդ թաղամասին հարող տարածքը (Աջափնյակ համայնքի հյուսիս-արևմտյան հատվածում), որի գերակշռող մասը պետական կամ համայնքային սեփականություն է, ինչպես նաև Մասունիկ համայնքից հատված հարավ-արևելյան կողմում: Տարածքների գումարային մակերեսը կազմում է շուրջ 682.9 հա:

Շրջանակի սահմանման գործընթացում որոշվել է շահագրգիռ կողմերը, որոնք ներգրավվել են ՌԷԳ գործընթացում:

- ✓ Պատվիրատու՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ Երևանի քաղաքապետարան, Աշտարակ համայնք:
- ✓ Պետական կառավարման մարմիններ՝ Առողջապահության նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Ներքին գործերի նախարարություն, նկատի ունենալով, որ նախարարությունը ներառում է արտակարգ իրավիճակների ստորաբաժանումները, Պաշտպանության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե:

Առաջնորդվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով վերը թվարկված գերատեսչություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին ՌԷԳ իրականացնող թիմը դիմել է գրությամբ, խնդրելով ներկայացնել իրենց դիրքորոշումը, առաջարկությունները, հնարավոր խնդիրներն ու սահմանափակումները հիմնադրությային փաստաթղթի նախագծի վերաբերյալ:

Խնդրել ենք ներկայացնել նաև գլխավոր հատակագծի նախագծի հնարավոր կապը տվյալ ոլորտին վերաբերող հիմնադրությային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ:

Շահագրգիռ կողմերի կողմից տրամադրված տեղեկատվության վերլուծություն. ՌԷԳ հաշվետվության կազմման շրջանակներում ներգրավել են տարբեր գերատեսչություններ, որոնց կողմից տրամադրվել են կարծքիներ և առաջարկություններ.

Առողջապահության նախարարություն՝ 24.10.2025թ. N ՎԳ/04/35220-25 գրությամբ ներկայացրել է ոլորտը կարգավորող փաստաթղթերի ցանկը և առաջարկել առաջնորդվել ներկայացված իրավական ակտերի պահանջներով: Ներկայացված ցանկը ամբողջությամբ ուսումնասիրվել և ներառվել է Կառավարության որոշումներ բաժնում:

Շրջակա միջավայրի նախարարություն՝ N5/26.20/12136 պատասխան գրությամբ ներկայացրել է, որ ռազմավարական էկոլոգիական գնահատումն անհրաժեշտ է իրականացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք), Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան: Նշված հարցերը կդիտարկվեն փաստաթղթերի ամբողջական փաթեթն օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարություն մուտքագրվելուց և փորձաքննական գործընթացն սկսվելուց հետո:

Կրթության, Գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (N 01/449 26) ներկայացվել է, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում ՀՀ ԿԳՄՄ նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտական արշավախումբը (ղեկ. Հ. Միմոնյան) ս.թ. հոկտեմբերի 15-ից պեղումներ է իրականացնում ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Միլիկյան թաղամասում գտնվող բնակատեղիում՝ ըստ պեղումների հայտին կից պլան-սխեմայի (պետ. ցուցիչ՝ 1.1.2, պահպանական գոտու տարածքը՝ 1,6 հա):

Պեղումների արդյունքում բացահայտվել է քարակերտ ճարտարապետությամբ Երևանի, թերևս նաև Հայաստանի ու Հարավային Կովկասի հնագույն հուշարձաններից մեկը՝ Միլիկյան բնակատեղին: Մինչ այժմ պեղվել է ավելի քան 20՝ բոլորձն հատակագծով, զանգվածեղ քարերից կառուցված հիմնապատերով, 2-6 մ տրամագծով կացարաններ, առաջարկվել է շարունակել պեղումները և իրականացնել միջոցառումներ հնագիտական բնակատեղիի պահպանմանն ուղղված:

Նշվել է նաև, որ տարածքում առկա է նաև բնության մեկ հուշարձան՝ քարե պատերով ջրվեժ, որը կարելի է հիմնությամբ ներառել կառուցապատման նախագծում:

Էկոնոմիկայի նախարարություն՝ N/24675-2025 գրությամբ ներկայացրել է, որ առաջարկություններ, դիտողություններ չունի, և որ նշված տարածքներում որևէ ներդրումային ծրագիր չի իրականացնում:

Երևանի Քաղաքապետարան՝ N 17/150018-25 գրությամբ ներկայացրել է, որ ՀՀ կառավարության 21.12.2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի ՌԷԳ շրջանակի որոշման փուլի ընթացքում քաղաքապետարանի կողմից իրականացվել է հանրային իրազեկում՝ քաղաքապետարանի պաշտոնական կայքի և օրենքով սահմանված տեղեկատվության տարածման այլ միջոցներով (մամուլ, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային նշանակության շենքերի ցուցատախտակներ):

Տեղեկացվել է նա, որ որ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի մինչև 2030 թվականի գլխավոր հատակագծի՝ Ակադեմիական քաղաքի տարածքը ներկայացված է որպես խառը կառուցապատման տարածք:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 21.12.2025թ. NԲՂ/14.1/39134-2025 գրություն- տեղեկացվել է որ հիմնադրությային նախագիծը ներկայացվել է ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ, Երևանի քաղաքապետարան, մատակարար ընկերություններ, ներկայացվել է ընկերությունների կարծիքը և առաջարկությունները:

Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ –Նշել է, որ դիտարկվող տարածքում առկա են Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության 220 կՎ լարման 3 հատ էլեկտրահաղորդման

գծերի 16 հենարաններ:

Միննույն ժամանակ տեղեկացնում եմ, որ 2025 թվականի հոկտեմբերի 03-ից սկսվել է հենարանների տեղափոխման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ- ներկայացրել է, որ ներկայացված տարածքում գազատարեր չկան և մոտակա ծրագրերում գազատարեր նախատեսված չէ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ- ներկայացրել է համապատասխան տեխնիկական պայմանները, ինչը պետք է հաշվի առնվի հիմնադրությային փաստաթղթի նախագծային լուծումներում:

«Մելիորացիա» ՓԲԸ- Ներկայացրել է, որ նշված տարածքներում իրենց հաշվեկշռում կոլեկտորադրենաժային ցանցեր առկա չեն:

«VEOLIA Ջուր» - ներկայացրել է տարածքին առնչվող ջրագծերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

«Արագածոտն» ՋՕ ընկերություն-տեղեկացրել է, որ նշված տարածքով անցնում են Քասախ- Էջմիածին ջրանցքը, Մերձավանին պատկանող ոռոգման փակ ցանցը և Սասունիկի ոռոգման ներտնտեսային ցանցը:

«Ջրառ» ՓԲԸ - տեղեկացրել է, որ նշված տարածքում իրենց հաշվեկշռում հաշվառված հիդրոտեխնիկական կառույցներ առկա չեն:

«Երևան» ՋՕ ընկերություն – տրամադրել է տեղեկատվություն, որ Ակադեմիական քաղաքի համար հատկացված տարածքով անցնում է կառուցվող Նոր Դավա ջրանցքի շարունակությունը՝ Հայֆիլմից մինչև գերեզմանների տարածք:

«Արագածոտնի մարզպետ» - Նախագծի վերաբերյալ որևէ առաջարկություն չի ներկայացրել:

ԳԱԱ-ի Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ ներկայացվել է տեղեկատվության տարածքում կարմիր գրքային բուսատեսակների բացակայության վերաբերյալ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն- նշել է, որ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունի, այն առնչություն չունի Սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող հիմնադրությային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ:

Նշել է, որ, առաջնորդվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-ից 19-րդ հոդվածներով սահմանված դրույթներով և պահանջներով, հատուկ ուշադրություն դարձնելով օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերին, Ակադեմիական քաղաքի ողջ տարածքը, մասնաշենքերի մուտքերը և բոլոր սենքերը պետք է հարմարեցված լինեն և ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ և միջավայր:

ՀՀ Ներքին գործերի նախարարության «Մեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ /27.10.2025թ. 100/2614/ -նշել է, որ համաձայն «Մեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-376-Ն Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթների գլխավոր հատակագծի համար իրավական հիմք կարող է լինել Լիազոր մարմնի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից հաստատված սեյսմամիկրոշջանցման քարտեզը, որի կիրառությունը քաղաքաշինական համալիրների համար, որոնք կազմում ունեն 596-ն որոշման 4-րդ

հավելվածով սահմանված N3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետում ընդգրկված հատուկ և կարևոր նշանակության օբյեկտներ, նախագծման ժամանակ կատարվում է շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում:

Հաշվի առնելով, որ Ակադեմիական քաղաքի աշխարհագրական տեղակայումը և այն հանգամանքը, որ տարածքի ամենամոտ կետը գտնվում է Երևանյան խզվածքից մոտ 3կմ հեռավորության վրա, հավանական է երկրաշաշժի օջախի ուղղվածության ազդեցության դրսևորում, երբ գրունտի տատանումների բնույթը երկրաշարժի ժամանակ զգալիորեն կախված է այն ուղղությունից, որով տարածվում է ձեղքագոյացման պրոցեսը բեկվածքում: Այդ ուղղությամբ տատանումները կարող են լինել շատ ավելի ուժեղ քան կանխատեսվում է սեյսմիկ ալիքների մարման ստանդարտ մոդելներով: Ուստի առաջարկում է նախագծային հաշվարկներում և սեյսմիկ վտանգի գնահատման գործընթացում դիտարկել նշված ազդեցության հնարավորությունը:

ՀՀ պաշտպանության նախարարություն 04.12.2025թ. ՊՆ1510-ԳԲ/14403- գրությամբ նշել է, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ և նկատառումներ չկան:


Կադաստրի Կոմիտե 1310.NU@/19028+2025թ. գրությամբ ներկայացրել է՝ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման N 2 հավելվածի համաձայն՝ Կադաստրի կոմիտեի նախաձեռնությամբ օրթոֆոտոհատակագծերի (օրթոլուսանկարների) հիման վրա 2023 թվականին կադաստրային քարտեզում իրականացվել է Երևան քաղաքի և սահմանակից համայնքների վարչական սահմանների ճշգրտման աշխատանքներ՝ համայնքների համաձայնեցմամբ, որի շրջանակներում ուղղվել է Երևան քաղաքի սահմանագծի հատվածը, ինչպես նաև Ակադեմիական քաղաքի տարածքի հատակագիծը:

Ամփոփում. Համաձայն՝ պետական կառավարման մարմիններից և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկատվության, հաշվի առնելով տարածքի գտնվելու վայրը, բնույթը, մասշտաբը, շահագործման պայմանները, հիմնադրությային փաստաթղթի գործողությունների շրջանակը, կիրառման ազդեցության աստիճանը, այլ հիմնադրությային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ համընկնում չկա: Այն համահունչ է Երևան քաղաքի և Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի տարածքային հեռանկարային զարգացման ծրագրերին:


Գերատեսչությունների կողմից բարձրացված բոլոր հարցադրումները քննարկվել են նախագծող կազմակերպության հետ, ՌԷԳ-ում և նախագծային փաստաթղթերում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ և լուծումներ:

7. Հիմնադրությային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, կապը և (կամ) համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրությային փաստաթղթերի հետ.

Ակադեմիական քաղաքի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, Աջափնյակ և Դավթաշեն համայնքների արևմտյան եզրին, ընդգրկում է նաև Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքի արևելյան հատվածը՝ ընդհանուր առմամբ 682.9 հեկտար տարածք: Նշված տարածքի մոտ 90%-ը գտնվում է Երևան քաղաքի վարչական սահմաններում, իսկ 10%-ը՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում:



Նկար 1.1. Ուտումասիրվող տեղամասի իրավիճակային պլան (Մ-ք 1:35 000)





ՆԿ.47 «Ակադեմիական քաղաքի» տեսքը հյուսիսից



ՆԿ.48 1-ին ռասի ռադիոառնագրի

Նպատակը- ՀՀ Երևան քաղաքի և ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի ընտրված վարչական տարածքներում Ակադեմիական քաղաքի կառուցումը պայմանավորված է ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով ամրագրված բուհերի խոշորացման և գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորման գործընթացով: Այն կառուցվելու է «ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս (gmp International GmbH Architects and Engineers)» ընկերության կողմից մշակված հայեցակարգային նախագծի՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի գլխավոր հատակագծի և գոտեորման նախագծի հիման վրա: Հիմնադրությային փաստաթուղթը միտված է Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրում Ակադեմիական քաղաքի հիմնադրմանը, որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական միջավայրի ապահովման եղանակ: «Ակադեմիական քաղաք» ծրագրի մշակման, իրականացման, համակարգման և հետագա կառավարման մարմին է հանդիսանալու Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ):

«Ակադեմիական քաղաք» նախագիծը նախատեսում է ժամանակակից հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայրի ստեղծում, որում բուհական կրթությունը կազմակերպվելու է անմիջականորեն զուգահեռելով հետազոտություններին՝ այդպիսով ապահովելով գիտելիքի և հմտությունների ձեռքբերումն ու ամրապնդումը կիրառության մեջ և իրական համատեքստում:

Ակադեմիական քաղաքի կազմում ներառվելու է նաև մտավոր ժամանցի և մշակութային հաղորդակցման ենթակառուցվածքներ, որոնք դառնալու են նաև նախագծի հանրային վերափոխման գործիքներից մեկը:

«Ակադեմիական քաղաք»-ի ստեղծումը հանդիսանում է մի շարք նպատակների ապահովման միջոց: Հիմնական նպատակներն են ունենալ առնվազն չորս բուհ՝ միջազգային վարկանիշային լավագույն 500-ի մեջ, կրկնապատկել օտարերկրյա ուսանողների թիվը՝ բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգի միջազգային հեղինակությունը: Այս թիրախների իրացումն անխուսափելիորեն առաջ է բերում համապատասխան ենթակառուցվածքների պահանջ, որոնցից են ուսումնառության կազմակերպման արդի պայմանները, ժամանակակից գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ լաբորատոր, նախատիպավորման, փորձարկման և այլ ենթակառուցվածքները, մարզական, հանգստի, գրադարանային, հանրակացարանային և այլ միջավայրերը, որոնք մրցունակ հետազոտությունների և բարձրագույն կրթական համակարգի նախապայման են:

Ակադեմիական քաղաքի տարածքում, հնարավորություն կլինի ֆիզիկապես տեղակայել մինչև 16 բուհ՝ Օրենքով նախատեսված մինչև ութ պետական խոշորացված բուհ և մինչև ութ մասնավոր կամ միջազգային բուհ: Այստեղ տեղափոխվելու են նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, Հիմնադրամը, ինչպես նաև ըստ նպատակահարմարության՝ ոլորտին առնչվող այլ պետական և մասնավոր կառույցներ:

Առնչվող հիմնադրությային փաստաթղթեր: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի մինչև 2030 թվականի գլխավոր հատակագծի՝ Ակադեմիական քաղաքի տարածքը ներկայացված է որպես խառը կառուցապատման տարածք:

Պետական կառավարման մարմիններին ուղղված գրություններում խնդրվել է ներկայացնել Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի հնարավոր կապը համապատասխան ոլորտին վերաբերող հիմնադրությային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ: Ստացված պատասխանների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ոլորտային ծրագրային փաստաթղթային դրույթների հետ չկան հակասություններ և անհամապատասխանություններ: Համաձայն ՀՀ կառավարության 1323-Ն որոշման, տարածքը ճանաչվել է գերակա շահ և մասնավոր սեփականատերերի հետ հարաբերությունները կկարգավորվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեության բնութագրերը, ռեսուրսային պահանջները, և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիները.

Սույն ներդրումային ծրագրում ներառված է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասը, Աջափնյակ և Դավթաշեն համայնքների արևմտյան եզրը, ինչպես նաև Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքի արևելյան հատվածը՝ ընդհանուր առմամբ 682.9 տարածք: ՌԷԳ շրջանակներում ներառված տարածքում նախատեսվում է Ակադեմիական քաղաքի կառուցում՝ երկու փուլով: Ակադեմիական քաղաքը դիտարկվում է ոչ միայն որպես ուսումնական ու գիտական տարածք, այլև մտավոր ու մշակութային ժամանցի համար նախատեսված միջավայր, որը պետք է գործի 24-ժամյա ռեժիմով: Նախատեսված է բուհական տարբեր կլաստերներ՝ Տեխնոլոգիական, Բժշկական, Դասական, Ուսումնական, Արվեստների և Սպայական, Միջազգային, որոնք ներառելու են գրասենյակային և այլ հասարակական, մարզական ու գիտահետազոտական կենտրոններ, կրթական գործընթացի կազմակերպման համար համապատասխան տրանսպորտային, հետիոտնային, ինժեներական և սոցիալ-մշակութային ենթակառուցվածքներով: Ակադեմիական քաղաքի տարածքում նախատեսվելու են տեղակայել

մինչև 16 բուհ՝ Օրենքով նախատեսված մինչև ութ պետական իտշորացված բուհ և մինչև ութ մասնավոր կամ միջազգային բուհ: Այստեղ տեղափոխվելու են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, Հիմնադրամը, ինչպես նաև ըստ նպատակահարմարություն՝ ռաբտին առնչվող այլ պետական և մասնավոր կառույցներ:

Առաջին փուլը ներառում է երկու ենթափուլ՝ փուլ 1.1. և փուլ 1.2, իսկ 2-րդ փուլն իրականացվում է ամբողջական: Այդ փուլերի շրջանակներում իրականացվելու են նաև Ակադեմիական քաղաքին առնչվող ինժեներական ենթակառուցվածքներ:

8.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը. Ակադեմիական քաղաքի կառուցապատման շինարարական աշխատանքների իրականացման համար որոշվել է հետևյալ ժամանակացույցը՝

- Առաջնային (Ա) - Մինչև 2030թ-ը կամ մինչև 5 տարի – Փուլ 1.1
- Միջին (Մ) - Մինչև 2035թ-ը կամ 5 -10 տարի – Փուլ 1.2
- Երկարաժամկետ (Ե) - Մինչև 2040 թ-ը կամ 10-15 տարի – Փուլ 2



Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակներում, բացի ուսումնական ձեռնարկություններից նախատեսվում են.

- **ջրային գանգվածներ,**
- տրանսպորտային համակարգ,
- տվյալայնացման տեղիներ,
- առևտրային և սննդի կետեր,
- բուժհաստատություններ, առողջության կենտրոններ,
- երեխաների խնամքի և զարգացման կենտրոններ,
- անվտանգության արդիական համակարգ,
- այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Ակադեմիական քաղաքի կառուցումը նախատեսվում է երկու փուլով:

Կառուցապատվող ընդհանուր տարածքը կազմում է 2 600 310 մ²:

Օգտատերերի ընդհանուր քանակը կազմում է 112 768 մարդ, այդ թվում ուսանողների քանակը՝ 70 937 մարդ:

Առաջին փուլը ներառում է երկու ենթափուլ:

Ենթափուլ 1.1՝ ընդամենը 599 489մ² կառուցապատվող տարածք, որը ներառում է.

- Տեխնոլոգիական կլաստեր՝ 395 785մ²
- Միջազգային համալսարան՝ 27 864 մ²
- Հանրակացարաններ 4250 ուսանողի համար՝ 98 260 մ²
- Հասարակական մշակութային կենտրոն՝ 77 580 մ²

Տեխնոլոգիական կլաստերը ներառում է Հայաստանի տեխնիկական համալսարանը և Գիտահետազոտական կենտրոնը:

Հայաստանի տեխնիկական համալսարան ունի հետևյալ կազմը՝

- Ճարտարապետության և դիզայնի դպրոց,
- Հաշվողական տեխնիկայի, տեղեկատվության և տեխնոլոգիաների դպրոց,
- Գյուղատնտեսական տեխնոլոգիաների/կենսաբանական գիտությունների դպրոց,
- Կառավարման դպրոց,
- Գիտական ինստիտուտների հետազոտողների համար նախատեսված գրասենյակներ

Գիտահետազոտական կենտրոնը ներառում է՝

- Կայուն նյութերի և շրջանաձև համակարգերի ինստիտուտ
- Ինտելեկտուալ համակարգերի և առաջադեմ գործիքավորման ինստիտուտ
- Առաջադեմ քիմիայի և դեղագործական գիտությունների ինստիտուտ
- Տվյալների և թվային ենթակառուցվածքների կենտրոն
- Կենսատնտեսական և սննդի համակարգերի ինստիտուտ
- Դիմացկանության վերլուծության և աշխարհագրական բանականության ինստիտուտ
- Գիտության և արդյունաբերության համար արհեստական բանականության և ռոբոտաշինության կենտրոն
- Համօգտագործվող նորարական տարածքներ
- Նախատիպի պատրաստման հարմարություններ
- Տեխնիկական ավագ դպրոց

Նախատեսված է գյուղատնտեսական համալիր նաև ընդհանուր տարածքներ, որը ներառում է բարեր ու սրճարաններ, հանգստի գոտիներ, ոչ ֆորմալ ուսուցման տարածքներ վարչական շենք և այլն:

Միջազգային համալսարան՝ Համալսարան 1, ընդհանուր տարածքներ /բար, սրճարան, հանգստի գոտիներ և այլն/, տեխնիկական տարածքներ:

Հանրակացարաններ՝ սենյակներ, համատեղ տարածքներ, ընդհանուր տարածքներ /բար, սրճարան, հանգստի գոտի/:

Հասարակական մշակութային կենտրոն՝

Ագորա Հայաստան Հասարակական կենտրոն /համերգասրահ, կոնֆերանս, թվային գրադարան, համայնքային դահլիճ և այլն/, ընդհանուր տարածքներ, տեխնիկական տարածքներ:

Ապագա Հայաստան՝ գրադարան, մեդիայի և մշակույթի փոխանակման կենտրոն, լաբորատորիա, ձեռներեցության և նորարարության ինկուբատոր և այլն:

Նորարարություն Ներքուս՝ AAC Փոխանակում - Առևտրային կենտրոն
Համալսարանական, փուլ 1.1՝ Հրշեջ կայան, ոստիկանության բաժին, վարչական շենք,
տեխնիկական տարածքներ:
TOD (տրանզիտամեդ զարգացում)՝ ավտոբուսի կայարան, սպասասրահ տեխնիկական
տարածքներ:

Ենթափուլ 1.2՝ ընդամենը 817 978 մ² կառուցապատվող տարածք, որը ներառում է.

- Ուսումնական կլաստեր՝ 210 554 մ²
- Արվեստի կլաստեր՝ 101 147 մ²
- Միջազգային համալսարաններ՝ 83 592 մ²
- Աշխատակազմի կացարաններ՝ 31 836 մ²
- Հանրակացարաններ 3650 ուսանողի համար՝ 84 388 մ²
- Հյուրանոց՝ 30 720 մ²
- Բազմաֆունկցիոնալ մարզահամալիր՝ 75 500 մ²
- Տրանզիտամեդ զարգացում՝ 4 069 մ²
- Սպայական կլաստեր՝ 196 171 մ²

Ուսումնական կլաստեր՝ Մանկավարժական համալսարան, Հետազոտական կենտրոն,
ընդհանուր տարածքներ, տեխնիկական տարածքներ:

Արվեստի կլաստեր՝ Արվեստների համալսարան, Հետազոտական կենտրոն, ընդհանուր
տարածքներ, ավագ դպրոց, օպերային ստուդիայի շենք՝ նվագախմբային դահլիճով 300տեղ,
համերգասրահ 200տեղ, փոքր համերգասրահ 100տեղ, բացօթյա համերգասրահ, տեխնիկական
տարածքներ:

Միջազգային համալսարաններ՝ Համալսարաններ 1, 2, 3, ընդհանուր տարածքներ /բար,
սրճարան, հանգստի գոտիներ և այլն/, տեխնիկական տարածքներ:

Աշխատակազմի կացարաններ - բնակարաններ, տեխնիկական տարածքներ, ընդհանուր
տարածքներ:

Ուսանողական հանրակացարաններ՝ սենյակներ, համատեղ տարածքներ, ընդհանուր
տարածքներ /բար, սրճարան, հանգստի գոտի/:

Հյուրանոց՝ հյուրասենյակներ, ընդհանուր տարածքներ/սրճարան, ռեստորան,
մարզասրահ և այլն/, տեխնիկական տարածքներ:

Մարզահամալիր- նստատեղերին առնչվող տարածքներ, ընդհանուր տարածքներ,
տեխնիկական տարածքներ, մանրածախ առևտրի տարածքներ:

TOD (տրանզիտամեդ զարգացում), ավտոբուսի կայարան, սպասասրահ:

Սպայական կլաստեր՝ ՀՀՊՆ Վ.Մարգարյանի անվան ռազմական ակադեմիա,
Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան, Ներքին գործերի
նախարարության կրթահամալիր, Ացգային անվտանգության գիտությունների կենտրոն, ՊՆ
պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, սպայական կլաստերի ընդհանուր
օգտագործման հասարակական և սպորտային գոտի:

ԱՔ ծրագրով նախատեսվող «սպայական» կլաստերը նախատեսվում է տեղակայել
հարավ-արևմտյան հատվածում, ստեղծելով տարածական անջատում քաղաքի ընդհանուր
կառուցվածքից, ելնելով անվտանգային պահանջներից:

Փուլ 2.0՝ ընդամենը 1 182 845 մ² կառուցապատվող տարածք, որը ներառում է.

- Միջազգային համալսարաններ՝ 111 456 մ²
- Բժշկական կլաստեր՝ 197 485 մ²
- Դասական կլաստեր՝ 461 917 մ²
- Հանրակացարաններ 11200 ուսանողի համար՝ 258 944 մ²
- Հասարակական սպորտային կենտրոն՝ 49 500 մ²
- Գրասենյակային Կլաստեր - Համալսարանական Կլաստեր՝ 85 795 մ²
- Տրանզիտամենտ զարգացում՝ 17 747 մ²

Միջազգային համալսարանը ներառում է չորս համալսարաններ :

Բժշկական կլաստեր՝ բժշկական համալսարան, հետազոտական կենտրոն, համալսարանական հիվանդանոց, ընդհանուր տարածքներ, տեխնիկական տարածքներ:

Դասական կլաստեր՝ դասական համալսարան, հետազոտական կենտրոն, ավագ դպրոց, ընդհանուր տարածքներ, տեխնիկական տարածքներ:

Ուսանողական հանրակացարաններ՝ սենյակներ, համատեղ տարածքներ, ընդհանուր տարածքներ /բար, սրճարան, հանգստի գոտի/:

Համալսարանական-դպրոցներ/500 աշակերտ/, մարզական կենտրոն, ստարտափ ինկուբատոր, տեխնիկական տարածքներ, վարչական շենք:

TOD (տրանզիտամենտ զարգացում), երկաթուղային կայարան, մետրոյի կայարան, ավտոբուսի կայարան, արագ ավտոբուսային տրանզիտ:

Ակադեմիական քաղաքի կազմում ներառվելու է մտավոր, ժամանցի և մշակութային հաղորդակցման ենթակառուցվածքներ, որոնք դառնալու են նաև նախագծի հանրային վերափոխման գործիքներից մեկը:

8.2.Ռեսուրսային պահանջներ.Ակադեմիական քաղաքի կառուցման փուլում օգտագործվելու են հողային և ջրային ռեսուրսներ:

Ջրային ռեսուրսներ. Ակադեմիական քաղաքի համար կառուցվելու է նոր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր: Քաղաքի անխափան ջրամատակարարումն ապահովվելու համար նախատեսվում է կառուցել նոր ջրամատակարարման համակարգ: Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող ջրամատակարարման համակարգի՝ ջրագծի կառուցումը պետք է համապատասխանեցվի «ՎԵՈԼԻԱ Ջուր» ՓԲԸ-ի տեխնիկական պայմանների հետ, նախապես ստանալով ջրամատակարարման տեխնիկական պայմանը:

Ջրահեռացում. տարածքում բացակայում է ջրահեռացման համակարգը: ՌԷԳ շրջանակներում նախատեսվում է մաքրման կայանների տեղադրում՝ կեղտաջրերի հեռացման համար: Պետական ծրագրի շրջանակներում նախատեսվում է կենտրոնացված մաքրման կայանի կառուցում, մինչ այդ նախատեսվում է համապատասխան հզորության մաքրման կայանների տեղադրում՝ ըստ ծրագրով նախատեսված փուլերի:

Հողային ռեսուրսներ. ՌԷԳ շրջանակներում նախատեսվող գործունեությունները իրականացվելու են 682.9 հա տարածքի վրա: Երևանի տարածքում այդ հողատեսքերի նպատակային նշանակությունը խառը կառուցապատման է, Սասունիկում դրանք ունեն տարբեր գործառնական նշանակություն՝ արտավայրեր, վարելահողեր, այլ հողատեսքեր:

Մինչև հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործունեությունների իրականացումը նախատեսվում է կատարել տարածքում առկա մասնավոր ընկերությունների, բնակիչներին պատկանող հողատարածքների, ձեռնարկությունների, շինությունների, հանքերի, տարբեր գերատեսչություններին պատկանող ենթակառուցվածքների հաշվառում:

Համաձայն ՀՀ կառավարության 1323-Ն որոշման NN 1,2,3 հավելվածներով Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ

բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ: Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվող գործողությունների որոշ տարածքները, որոնք ներառում են մասնավոր ընկերությունների, գյուղացիների կողմից օգտագործվող հողատարածքները, գերակա շահ կճանաչվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ծրագրի շրջանակներում՝ փոխհատուցման հնարավորությունով: Ենթակառուցվածքների փոփոխությունների դեպքում համապատասխան գերատեսչությունների հետ կկնքվեն պայմանագրեր՝ ըստ փուլերի վերջիններիս ապամոնտաժման, տեղափոխման նպատակով:

Մինչև նախատեսվող գործունեությունների իրականացումը տարածքում կկատարվեն քանդման, ապամոնտաժման, հարթեցման աշխատանքներ՝ ըստ փուլերի:

Տարածքի ուսումնասիրման համար կատարվել է երկրաբանահետախուզական ուսումնասիրություններ, ինչպես նաև նախկինում և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների հաշվետվությունների նյութերի հավաքում և ամփոփում, եզրակացության կազմում:

Էներգամատակարարում. Շինարարության առաջին փուլում ակադեմիական քաղաքի էներգետիկ ենթակառուցվածքի կազմում նախատեսվում է 110/20 կՎ սնուցող նոր ենթակայանի կառուցում՝ 2×40 ՄՎԱ հզորությամբ, որը միացվում է գոյություն ունեցող 110 կՎ օղային գծերին: Ենթակայանի չափերն ընդունված են 60×30 մ: 110/20 կՎ ենթակայանից 20 կՎ բաշխիչ կետերը՝ ներդրված տրանսֆորմատորային ենթակայաններով, սնուցվում են ճառագայթային մալուխային գծերով: Միացումները պետք է կատարվեն համապատասխան տեխնիկական պայմանների հիման վրա: Էլեկտրաէներգիայի փոխանցման համար կօգտագործվի ժամանակակից ուժային մալուխներ՝ ալյումինե երակներով և խաչաձև կապված պոլիէթիլենային (XLPE) մեկուսացմամբ, որոնք բնութագրվում են բարձր հոսքատարական ունակությամբ, ջերմակայունությամբ և խոնավության ցածր ներծծմամբ: Մալուխների տեղադրումը նախատեսվում է կատարել միջազգային ստանդարտների և տեղական նորմատիվ պահանջների հիման վրա, կիրառելով Մուլտիդուկտային խողովակաշար: Մուլտիդուկտային համակարգի կիրառումը թույլ է տալիս ապահովել ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա թողունակության և ծառայությունների պահանջները՝ առանց նոր մայրուղային փորման աշխատանքների: Նախագիծը ստեղծում է ամուր հիմք ժամանակակից կրթական, գիտական և տեխնոլոգիական միջավայրի համար:

Գազամատակարարում, ջեռուցում, ջերմամատակարարում. Ակադեմիական քաղաքի գազամատակարարումը կատարվելու է համաձայն՝ 31.10.2025թ «Գազայրոմ Արմենիա»ՓԲԸ-ի կողմից տրված հ.01/18.1/8077-2025 տեխնիկական պայմանի: Քաղաքի գազամատակարարման սնման աբյուր է հանդիսանում ԳԲԿ-ԱՇՏԱՐԱԿ բաշխիչ կայանը, որի հեռավորությունը նախագծվող քաղաքից մոտ 10կմ է: Ելնելով գազի ծախսի չափաքանակից պետք է նախատեսել օդափոխության, ծխահեռացման համապատասխան համակարգեր: ԱԶ-ի ջեռուցման և ջերմամատակարարման համար չի դիտարկվում անհատական գազային ջեռուցումը, նախատեսելով օպտիմալ լուծում, որը բավարարում է և՛ էներգախնայողության, և՛ անվտանգության չափանիշներին, հանդիսանում է բարձր ՕԳԳ ունեցող համակարգերի կիրառումը/արևային էներգիա, հողմաէլեկտրակայաններ և այլ/, որոնք կնվազեցնեն սպառվող էլեկտրաէներգիայի քանակը, պահպանելով ջերմային հարմարավետությունը: Ջեռուցման և ջերմամատակարարման նպատակով կկիրառվեն այլընտրանքային էներգիայի ստացման աղբյուր, մանավորապես շենքերի տանիքներում արևային վահանականների տեղադրումը, ջերմային պոմպերի օգտագործումը:

Ջերմամատակարարման համակարգերի կառուցումը պետք է բավարարի ՀՀ Կառավարության 05.09.2002թ. N1384-ն որոշմամբ սահմանված ռազմավարության պահանջները, որոնց թվում առաջնային են էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը, ինչպես

նաև ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշման պահանջները:

Տրանսպորտային հասանելիությունը. դեպի «Ակադեմիական քաղաք» ավտոմոբիլային տրանսպորտի մոտեցումն ապահովում է Երևան-Աշտարակ Մ1 ճանապարհը (M1), որը Հայաստանի մայրաքաղաք Երևանը միացնում է հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիին՝ շարունակվելով դեպի Բավրա և Հայաստան-Վրաստան պետական սահման: ԱՔ-ի հետ կապն ապահովելու համար կպահանջվի նոր տրանսպորտային բազմաստիճան հանգույցների կառուցում՝ մոտ 1,5 կմ երկարությամբ:

Տարածքի տրանսպորտային հասանելիությունը և զարգացման հնարավորությունը ապահովելու տեսանկյունից կարևոր է Երկաթուղու առկայությունը, ստեղծելով արագ կապ մայրաքաղաքից դեպի «Ակադեմիական քաղաք»: Տարածքով է անցնում է երկաթուղու Միլիկյան-Պոռշյան հատվածը: Երկաթուղու շարունակությունը դեպի հյուսիս հասնում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պոռշյան գյուղական բանակավայրը: Չնայած, որ այն կառուցվել է խորհրդային տարիներին, արդյունաբերական բեռների տեղափոխման նպատակով, սակայն երկար տարիներ չի շահագործվել և գտնվում է բարձիթողի վիճակում: Այն վերագործարկելու համար կպահանջվի լայնածավալ շինարարական աշխատանքների և ֆինանսական խոշոր ներդրումների իրականացում:

Աջափնյակ մետրոյի կայարանի գործարկումը բացառիկ նշանակություն կունենա Երևանի քաղաքաշինական և տրանսպորտային զարգացման առումով: Այն կարող է մեծ ազդեցություն ունենալ դեպի Ակադեմիական քաղաք տրանսպորտի կազմակերպման համար: Մետրոյի նոր ուղին կմիացվի Հրազդանի կիրճով: Ակադեմիական քաղաքի ներսում տեղաշարժը կունենա հատուկ կարգավորում՝ կազմակերպելով հեծանիվներով, էլեկտրական տրանսպորտով և այլ եղանակներով:

Ակադեմիական քաղաքի կառուցման սանիտարապաշտպանիչ և պահպանման գոտիները. ՌԷԳ հաշվետվության շրջանակներում դիտարկվել է քաղաքի կառուցմանն առնչվող սանիտարապաշտպանիչ գոտիները, առաջնորդվելով ՀՀԸՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ-ի պահանջները: Նախատեսվող գործունեությունների իրականացման փուլում անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 06 հրամանի հավելվածով սահմանված գործունեության տեսակներին առնչվող սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը.

- 1) առաջին (I) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 1000 մ,
- 2) երկրորդ (II) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 500 մ,
- 3) երրորդ (III) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 300 մ,
- 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ,
- 5) հինգերորդ (V) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 50 մ:

Ակադեմիական քաղաքի կառուցման արևելյան հատվածը հարում է Միլիկյան գերեզմանատան տարածքի սահմաններին և հետագա կառուցապատման համար անհրաժեշտ է կառուցապատվող տարածքների և գերեզմանատան սահմանների միջև ստեղծել

սանիտարական կանաչապատված գոտի 300 մ շառավղով: Անհրաժեշտության դեպքում, տարածքը ցանկապատել և ցանկապատի ամբողջ երկայնքով կանաչապատել՝ ծառերով: Անհրաժեշտ է, որ համապատասխան որոշումով արգելվի հետագա թաղումները հարակից գերեզմանոցում, ելնելով մարդու առողջության և անվտանգության պահպանման անհրաժեշտությունից:

Երկաթուղային գծի տեղափոխման, հետագա կառուցապատման համար անհրաժեշտ է հաշվի առնել.

«Երկաթուղային գծի յուրաքանչյուր կողմում երկաթուղու պաշտպանական գոտու արտաքին սահմանագծի հեռավորությունը երկաթուղային գծի առանցքից սահմանվում է 50 մետրից ոչ պակաս՝ համաձայն «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի:

9. Հնարավոր ազդեցության ենթակա տարածքը, պայմանները, խոչընդոտները.

9.1. Հնարավոր ազդեցության ենթակա տարածք.

Ակադեմիական քաղաքի (ԱՔ) համար ընտրված տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում Աջափնյակ վարչական շրջանին հարող հատվածում, ինչպես նաև Սասունիկ համայնքի հարավ-արևելյան հատվածում: Նշված տարածքի մոտ 90%-ը (620.1հա) գտնվում է Երևան քաղաքի վարչական սահմաններում, իսկ 10%-ը՝ (62.8հա) Սասունիկում: Տարածքում առկա են շինաղբի կուտակման վայրեր, հասարակական նշանակության շենքեր, երկաթգիծ, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր՝ հենասյուններով:

ԱՔ-ի տեղանքը Մասիս-Նուռնուս երկաթուղու Սպանդարյան-Պոռշյան հատվածի երկաթուղին բաժանում է երկու հիմնական՝ պայմանական արևելյան և արևմտյան հատվածների: Դրանցից յուրաքանչյուրն ունի հետագա կառուցապատման համար բարենպաստ և ոչ բարենպաստ առանձնահատկություններ: Երկաթուղու «Սպանդարյան» կայարանից դեպի արևմուտք ընկած հատվածն սահմանակցում է Ակադեմիական քաղաքի «սպայական» կլաստերի տեղակայման տարածքի հետ: Այստեղ այժմ խառը կառուցապատման գոտի է, որտեղ գտնվում են «Մեծն Տիգրան» աշխարհագորային գնդի ուսումնական կենտրոնը, կա կենդանիների կացարան, և այլ արտադրական, սպորտային կամ առևտրային բնույթի տարբեր չափերի կառույցներ:

Տարածքում դեռ խորհրդային տարիներից կատարվել են ընդերքի ուսումնասիրման աշխատանքներ, գտնվել են բազալտի և տուֆի պաշարներ, որի արդյունքում այստեղ ձևավորվել են մի քանի հանքարդյունաբերական հանգույցներ, պարբերաբար բաց եղանակով շահագործվել են հանքեր: Տարածքից հյուսիսային հատվածում գտնվում է «Սպանդարյանի տուֆի և բազալտի հանքավայրը»: Տարածքում կան քարի չշահագործվող հանքեր, որոնք զբաղեցնում են շուրջ 47,1 հա տարածք կամ տարածքի 7%-ը:

Տարածքում կան նաև ճահճանման տարածքներ, որոնք ինչպես նաև լքված և գործող բազալտի հանքեր, որոնք ենթակա են ռեկուլտիվացիայի:

Տարածքում առկա է արհեստական ջրամբար 30x40 չափերի, որն առաջին փուլերում դեռևս պահպանվելու է:

Հողամասերի շուրջ 45%-ն ունեն բնակելի նշանակություն, իսկ մնացածը գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ նշանակության հողատեսքեր են: Տարածքի հողամասերի գերակշռող մասը համայնքային սեփականություն են, իսկ մյուս հատվածները՝ պետական, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող տարածքներ են: Ներկայումս տարածքը համեմատաբար դժվար հասանելի է և մեկուսացված է ընդհանուր քաղաքային

ենթակառուցվածքներից: Տարածքին կից անցնում է Երևան-Աշտարակ Մ1 մայրուղին, որից Ակադեմիական քաղաքի սահմանի հեռավորությունը շուրջ 0,5կմ է: Մայրուղու և ԱԶ-ի սահմանների միջև հատվածը ողջ երկայնքով պատկանում է մասնավոր սեփականատերերի և ենթարկվում է ինտենսիվ կառուցապատման: Մայրուղուն հարող տարածքների գերակշռող մասը օգտագործվում են հյուրանոցային/հանգստի, արտադրական կամ գրասենյակային նպատակներով: 1-3 կմ տրամագծով գտնվող խոշոր բնակելի համալիրներն են՝ Վառձազի թաղամասը, Ամերիկական, Դեֆանսը: Ակադեմիական քաղաքի տարածքի արևելյան սահմանին կից տարածքները որոշակի չափով կառուցապատված են ցածրահարկ բնակելի կառույցներով: Ակադեմիական քաղաքի հետ սահմանակից են Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքը (կարճ սահմանագծով) Կոտայքի մարզի Լաիրի համայնքում գտնվող Պոռշյուն գյուղական բնակավայրը (հյուսիսային կողմից) և Արմավիրի մարզի Փարաքար համայնքը: Ակադեմիական քաղաքի սահմանից որոշակի հեռավորության վրա են գտնվում Բաղրամյան, Այգեկ և Մերձավան բնակավայրերը:



Տարածքում առկա են պատմամշակութային և բնության հուշարձաններ, որոնք նախատեսվում է ինտեգրել ճարտարապետական լուծումներում:

Տարածքում կատարված պեղումների արդյունքում բացահայտվել է քարակերտ ճարտարապետությամբ Երևանի, թերևս նաև Հայաստանի ու Հարավային Կովկասի հնագույն հուշարձաններից մեկը՝ Միլիկյան բնակատեղին: Մինչ այժմ պեղվել է ավելի քան 20՝ բոլորակա հատակագծով, զանգվածեղ քարերից կառուցված հիմնապատերով, 2-6 մ տրամագծով կացարաններ: Տարածքում առկա են նաև դամբարաններ, որոնք ԿԳՄՄ-ի համաձայնությամբ կտեղափոխվեն այլ տարածքներ:

Տարածքում առկա է «Քարե պատերով ջրվեժ» բնության հուշարձանը, որը ևս ինտեգրման կարիք ունի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատվել «Ակադեմիական քաղաք» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), որի իրականացման նպատակով 2024թ. օգոստոսի 22-ի ՀՀ կառավարության 1323-Ն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նկարագրված՝ Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Մասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ:

Համաձայն «Արագածոտն» ՋՕ ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության տարածքով անցնում են Քասախ-Էջմիածին ջրանցքը, Մերձավանին պատկանող ոռոգման փակ ցանցը և Մասունիկի ոռոգման ներսնտեսային ցանցը:

Համաձայն «VEOLIA Ջուր» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության ներկայացրել է տարածքում առկա են բազմաթիվ ջրագծեր:

Համաձայն «Երևան» ՋՕ ընկերության գրության տարածքով է անցնում Նոր Դավա ջրանցքի շարունակությունը:

ԱՔ-ի արևմտյան հատվածում՝ երկաթուղուց դեպի արևմուտք հատվածն՝ ունի համեմատաբար հանգիստ տեղագրություն, շինարարության համար բարենպաստ պայմաններ են, ունի համեմատաբար հանգիստ տեղագրություն ու հարթ ռելիեֆ: Դա նվազեցնում է հողային աշխատանքների և շինարարության ծախսերը: Այն չի հարում Միլիկյան գերեզմանատանը: Արևմտյան հատվածի սահմաններից դուրս դեպի արևմուտք, հյուսիս և հարավ ուղղություններով տարածքները ներկայումս իրացված չեն, ինչը հնարավորություն է ստեղծում ապագայում այս ուղղությամբ քաղաքի զարգացման համար: Չկառուցապատված հարակից հողամասերի առկայությունը հնարավոր է դարձնում ազատ և լայնածավալ հանրային կամ ինստիտուցիոնալ նշանակության կառույցների նախագծումն ու տեղաբաշխումը:

Տարածքի արևելյան հատված (270 հա) ունի բարենպաստ պայմաններ, գտնվում է մայրուղուն մոտ, ինչն ապահովում է ուղիղ մուտքի հնարավորությունը: Մա ամուր կապ է ստեղծում քաղաքի հետ և ապահովում է առկա հասարակական տրանսպորտով տարածքի հասանելիությունը՝ նույնիսկ երկաթուղու հնարավոր վերագործարկումից, կամ մետրոյի Աջափնյակ կայարանի գործակումից առաջ: Արևելյան հատվածի տարածքի և մոտակա բնակավայրերի միջև փոխադարձ ինտեգրման և համագործակցության ներուժ կա: Այս հատվածի բարձրադիր տեղագրությունը տեսարաններ է բացում դեպի լեռներ և շրջակա լանդշաֆտ՝ ավելացնելով տարածական և գեղագիտական առումով դրա գրավչությունը:

Ակադեմիական քաղաքի սահմանն անցնում է հարավից շրջանցելով Էրզիր Ավանգարդ Ավան բնակելի համալիրը:

Հյուսիս-արևմուտքից S-1-2 ճանապարհով Ակադեմիական քաղաքի, Աջափնյակի և մայրաքաղաք Երևանի տարածքների սահմանները զուգահեռաբար երիզվում են Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սահմանագծով: S-1-2 ճանապարհը շարունակելով դեպի հյուսիս հասնում է Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքի Մասունիկ գյուղական բնակավայր:

Այսպիսով տրանսպորտային կապերի հեշտ հասանելիությունը, տարածքի հեռանկարային զարգացման ներուժը, քաղաքային հանրային կյանքում ինտեգրման հնարավորությունների առկայությունը, ջրային/կանաչ միջանցքների ստեղծման մեծ ներուժը, բնական և գյուղատնտեսական գեղատեսիլ տարածքների հետ ինտեգրվածությունը, ազատ չուրբանիզացված տարածքների՝ ընդլայնման մեծ ներուժը, հարակից բնակելի տարածքների հետ միախառնումը, աղտոտվածության համեմատաբար ցածր մակարդակը, ինչպես նաև ներդրումային բարձր գրավչությունը ստեղծում են բարենպաստ պայմաններ Ակադեմիական քաղաքի կառուցման համար:

9.2.Տարածքը շինարարության համար ունի որոշակի սահմանափակումներ և անբարենպաստ պայմաններ:

- Տարածքը մեկուսացված է քաղաքային միջավայրից, որը նվազեցնում է վերջինիս յուրացման մատչելիությունը, թույլ են զարգացած տրանսպորտային կապերը:
- Շրջակա ենթակառուցվածքների հետ ինտեգրված չլինելը դժվարեցնում է քաղաքային կապը՝ պահանջելով խոշոր ենթակառուցվածքային ներդրումներ:
- Առաջնահերթ կառուցապատման համար այս հատվածը համեմատաբար ևս ոչ բարենպաստ է, քանի որ այն հեռու է գտնվում դեպի ԱԲ տանող հիմնական ճանապարհից՝ Երևան-Աշտարակ Մ1 մայրուղուց (մայրուղուց մինչև երկաթուղի հեռավորությունը կազմում է շուրջ 2,5 կմ): Դա սահմանափակում է հարակից տարածքներից արևմտյան հատվածի մատչելիությունը և լոգիստիկ ներուժը՝ ուղիղ ազդելով ներդրումային հետաքրքրության վրա:
- Տարածքում առկա են ոչ խմբավորված և հողատարածքի տարբեր հատվածներում ցրված բազմաթիվ տարբեր լարման բարձրավոլտ էլեկտրահաղորդման օղային գծեր և մալուխներ, որոնց տեղափոխությունը թանկարժեք է ու բարդ: Որոշում է կայացվել տեղափոխել էլեկտրահաղորդման օղային գծերը, խմբավորել ստեղծելով էներգետիկ միջանցք իր պահպանման գոտիով: Էլեկտրահաղորդման գծերի տեղափոխումը հնարավորություն կտա ազատել մոտ 47.3 հա տարածք
- Տարածքում հայտնաբերվել են պատմամշակութային արժեք ունեցող հնագիտական շերտեր, բնակատեղի, որոնց անխաթար պահպանման լուծումները առաջնահերթություն են պահանջում:
- Տարածքում երկաթուղու երկու կողմերով հաստատվում է անվտանգության գոտի՝ 100 մ խորությամբ յուրաքանչյուր կողմից, սահմանափակելով քաղաքաշինական գործունեությունը այս հատվածում:
- Տարածքի հարավ-արևելյան սահմանի մի հատվածը հարում է Սիլիկյան գերեզմանատան /300հա մակերես/ սահմաններին, որի սանիտարապաշտպանիչ գոտին ներխուժում է Ակադեմիական քաղաքի տարածքի մեջ՝ սահմանափակելով շուրջ 26 հա տարածքի օգտագործումը: Այդ նպատակով նախատեսվում է կառուցապատվող տարածքների և գերեզմանատան սահմանների միջև ստեղծել սանիտարական կանաչապատված գոտի 300 մ շառավղով:
- Տարածքում է գտնվում այժմ այլևս չշահագործվող հանքեր, որոնց շահագործումը կատարվել է բաց եղանակով, ինչի հետևանքով տարածքի որոշ հատվածներում գոյացել են ռելիեֆի խզման հատվածներ: Հանքի փոսերի խորությունները որոշ հատվածներում հասնում են 20մ-ի, որը զգալի խոչընդոտ է սահմանափակում է տարածքով մարդկանց և տրանսպորտի տեղաշարժը, դարձնելով կառուցապատման և հատկապես ճանապարհաշինության համար ոչ բարենպաստ կամ պայմանական բարենպաստ: Նախատեսվում է կատարել հանքերի ռեկուլտիվացիա:
- Ակադեմիական քաղաքի տարածքի օգտագործման համար անբարենպաստ գոտիների միացյալ մակերեսը կազմում է ընդհանուր տեղամասի 21%-ը կամ 148 հա մակերես: Անբարենպաստ գոտիների դիրքն ու երկրաչափությունը աղճատում են նոր քաղաքի կառուցման համար նախատեսված տարածքի ամբողջականությունը, խոչընդոտելով միասնական հատակագծային կառուցվածք ստանալու հնարավորությանը:

Դժվարություններ կան ինչպես տարածքի իրացման առումով այնպես էլ Հրազդանի կիրճի պատմամշակութային հուշարձանների պահպանության առումով: Տարածքում կան մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքներ:

«ԳԵՈՌԻՄԿ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ-ի կողմից 2024թ. հուլիսի 1-ից օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում Ակադեմիական քաղաքի և հարակից տարածքի՝ 727 հա կառուցման

տարածքում, երկրաբանահետախուզական աշխատանքներ: Նախնական փուլում հավաքագրվել և վերլուծվել են տվյալ տարածքին վերաբերվող ֆոնդային և արխիվային ինժեներաերկրաբանական տվյալները, երկրաբանական ֆորմացիաների հպման եզրերը /կոնտակտները/ ճշտվել են ըստ առկա տվյալների և միջին և բարձր լուծաչափի արբանյակային լուսանկարների վերծանման հիման վրա: Դաշտային աշխատանքների ընթացքում տարածքում փորվել են ընդհանուր 2545.4գծ.մ 183 հորատանցք՝ 8մ-ից մինչև 35 մ տարբեր խորությունների տիրույթում:

Հտվաքագրվել և վերլուծվել են Շրենտ քաղաքի տարածքի սեյսմիկ վտանգի գնահատման ու սեյսմիկ միկրոշրջանացման (ՄՄՇ) նախկինում իրականացված հետազոտությունները, հաշվի են առնվել ուսումնասիրվող գոտու և հարակից տարածքների տեկտոնական և սեյսմիկ առանձնահատկությունները, որոշվել են սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզի կազմման համար դաշտային աշխատանքների անհրաժեշտ ծավալները ըստ շինարարության տեղամասի չափսերի և հետազոտությունների մասշտաբի, որի ընտրությունը կախված է ինժեներաերկրաբանական պայմաններից:

Կատարվել է 727 հա տարածքի տեղադիտական զննում, 39 հորատահանուկի նմուշարկում, բնութագրում, գրունտների լաբորատոր փորձարկումներ, լաբորատոր քիմիական ուսումնասիրություններ, մակերևութային սեյսմիկ ալիքների բազմակապուղի վերլուծության մեթոդով (MASW) չափումներ: Կազմվել է 1:5000 մասշտաբի ինժեներաերկրաբանական շրջանցման և սեյսմիկ միկրաշրջանցման քարտեզներ:

Տարածքի արտադրական գոտու վիճակագրություն



ՊՖ.1 Արմատական աղբյուրների ելքեր



ՊՖ.3 Ի-ճի լցակայանը



ՊՖ.7 Է Կոնսոն հատված





ՊՆ.7. ԽՈՒՆԵՐԱՆԵՐ



ՊՆ.8. ԲԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ



ՊՆ.9. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.10. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.11. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.12. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.13. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.14. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.15. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.16. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.17. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.18. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.19. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ



ՊՆ.20. ԵՐԱՅԻ ԵՎ ԶԱՐԻ ԳՐԱՆԻՏԻՆԵՐ

Կատարվել է տվյալների ամփոփ հավաքագրում, մշակում, վերլուծություն, հաշվետվության պատրաստում և ինժեներա-երկրաբանական նյութերի փորձաքննության եզրակացության կազմում:

Կլիմա.Շրջանի կլիման երկու տիպի է, չոր ցամաքային, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով, չոր ցամաքային տաք ամառներով և բարեխառը ցուրտ ձմեռներով:

- Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է + 42°C.
- Քարհանքի արևմտյան թևում, բարձրացման վրա, բացված է մինչև 6մ տեսանելի հզորության գետաքարերի շերտ:
- Օդի նվազագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է - 31°C.:
- Մթնոլորտային տեղումների միջին տարեկան գումարը կազմում է 400 մմ:
- Քարհանքի արևմտյան թևում, բարձրացման վրա, բացված է մինչև 6մ տեսանելի հզորության գետաքարերի շերտ: Գերիշխում են հյուսիս-արևելյան ուղղության քամիներ 2.8 մ/վ արագությամբ, 20 տարին մեկ անգամ հնարավոր է քամու արագության ուժեղացում մինչև 21 մ/վ:
- Ձյան ծածկույթի բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը՝ 70 կգու/մ2:
- Հողի սառչման առավելագույն խորությունը կազմում է 54-70 սմ:

Գեոմորֆոլոգիա. Հետազոտվող տեղամասը և հարակից տարածքները բնութագրվում են ինչպես չափազանց հարթ ռելիեֆով, այնպես էլ ժամանակավոր գետակների թեք լանջերով: Գեոմորֆոլոգիայի տեսանկյունից հետազոտվող տեղամասը գտնվում է Եղվարդի սարավանդի հարավ-արևելյան եզրամասում, Երևանյան գոգահովտից դեպի Արարատյան լճակուտակումային հարթավայրի անցման գոտում: Մակերևույթը հարթ է, հատված է ժամանակավոր գետակներով և ունի ընդհանուր թեքություն դեպի հարավ: Նշված տարածքը մտնում է երկու գլխավոր մորֆոկառուցվածքային միավորների կազմի մեջ, այն է Արարատյան կումուլյատիվ /կուտակումային/ հարթավայրը և Կոտայքի-Եղվարդի հրաբխային սարավանդը: Նախատեսվող «Ակադեմիական քաղաքի» տարածքը բնութագրվում է պարզ գեոմորֆոլոգիայով: Ռելիեֆի ձևերից տարածքում առկա են բլուրները, թմբերը, իջվածքները, սարահարթերի լանջերը, ձորերը, գրավիտացիոն և երոզիոն-հոդմանահարման լանջերը և այլն: Ակադեմիական քաղաքի տարածքում ըստ տեղամասերի՝ հանքերի ինտենսիվ շահագործման և շինարարական աշխատանքների հետ անտրոպոգեն գործոնի ազդեցության արդյունքում առաջացել են բազմապիսի արհեստական ռելիեֆի ձևեր (կարյերներ):

Հետազոտվող տարածքի ռելիեֆի մակերևույթի նիշերը կազմում են 952.9–1160.9 մ: Գլխավոր ջրային երակ են հանդիսանում Հրազդան և Քասախ գետերը:

Երկրաբանական կառուցվածքը. նկարագրվող շրջանը հիմնականում կազմված է ինչպես տարահասակ հրաբխային ապարներից, այնպես էլ ժամանակակից նստվածքներից: Տարածաշրջանի երկրաբանական կտրվածքը ներկայացվում է հասակային հերթականությամբ՝ ներքևից վերև:


Վերին պլիոցեն. (N21) Ներկայացված է անդեզիտներով և բազալտային անդեզիտներով, մուգ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն, խարամացած, անհամաչափ ծակոտկեն, ճեղքավորված, տեղ-տեղ մեծաբեկորային, հոդմանահարված խճի աստիճանի հրաբխային խարամի և ավազի ենթաշերտերով և ոսպնյակներով: Տարածված են ուսումնասիրվող տարածքի հարավային եզրամասերում, ունեն սահմանափակ տարածում: Բացահայտված հզորությունը 2.0-23.0 մետր է: **Ստորին և միջին Չորրորդական** գոյացումներ (Q1-2 ar1-1). Արագած լեռան առաջին հոսքի ստորին ենթաշերտը: Այդ դարաշրջանին վերաբերվում են բազալտային անդեզիտներ, դոլերիտային բազալտներ՝ խարամացված բազալտային անդեզիտների ենթաշերտերով, որոնք տարածված են տարածքի կենտրոնական և արևմտյան մասերում նաև Հայֆիլմի տեղամասում: Դրանք ներկայացված են մուգ մոխրագույն, խիտ, խոռոչավոր, ճեղքավորված, տեղ-տեղ բեկորային, որոնք ծածկված են Արագած լեռան առաջին հոսքի երկրորդ ենթաշերտով և չորրորդական հասակի ստվածքներով:

Ստորին և միջին Չորրորդական գոյացումներ (Q1-2 ar1-2). Արագած լեռան առաջին հոսքի երկրորդ ենթաշերտը: Ծածկում է առաջին հոսքի ստորին ենթաշերտը: Ներկայացված է բազալտային անդեզիտներով, բազալտային տրախիանդեզիտներով և անդեզիտներով մուգ


մոխրագույն, խիստ ծակոտկեն, ճեղքավորված, տեղ-տեղ մեծաբեկորային: Տարածված են տեղամասի կենտրոնական և արևելյան մասերում:

Միջին Չորրորդական գոյացումներ (Q2a2). Տուֆեր Երևանյան տիպի և պեմզա: Ծածկում են առաջին և երկրորդ հոսքերի ստորին ենթաշերտը: Աղյուսա-կարմիրից մինչև սև գույնի, մեծաբեկորային անջատումներով, ծակոտկեն, ճեղքավորված, հողա-փուխր տարատեսակների ենթաշերտերով, հիմքում տուֆային ավազներով: Ունեն սահմանափակ տարածում, հանդիպում են կենտրոնական մասում և Հայֆիլմի տեղամասում:

Չորրորդական գոյացումներ (e,edQ4). Էյուվիալ և Էյուվիալ-դեյուվիալ նստվածքներ: Ներկայացված են սպիտակահողերով: Կազմով համապատասխանում են խճա-մանրախճային գրունտի, բուզալտային կազմի մեծաքարերի պարունակությամբ, կարբոնատացված, սակավ խոնավ, կոշտ կոնսիստենցիայով կավավազային, ավազային լցունով, համարվում են նստող և գերենստող: Դիտարկվող շրջանում ունեն լայն մակերեսային տարածում և ամբողջությամբ ներկայացված են մայրցամաքային ֆացիայով:



Երկրաբանական պրոցեսների և երևույթները ներկայացված են լանջային և գծային էրոզիայով, ճահճացման և քարաթափման երևույթներով:



Տեկտոնահան կառուցվածքը. Հետազոտվող տարածքին հարակից խզվածքները ներկայացված են հետևյալ խզվածքներով.

- **Երևանի խորքային խզվածքը (YeF)** - Երևանի խորքային խզվածքի գոտին առաջին անգամ առանձնացվել ու նկարագրվել է Ա. Ասլանյանի կողմից, համաձայն որի Երևանի խորքային խզվածքը ձևավորվում է Տեկոր(Դիգոր) գետի գետաբերանի հատված-Կարմրաշեն կայարան-Աղավնաստուն գյուղ Փարաքար գյուղ-Այնթափ գյուղ, Աբովյան գյուղ, Դալար գյուղ-Արմաշ գյուղ-Նախիջևան գյուղ-ք. Ջուլֆա ուղղությամբ:


Հաշվի առնելով Երևանյան խզվածքի բացահայտ սեյսմիկ ակտիվությունը, երկրաբանական ակտիվության անալոգակի գործոնները բազմաթիվ ածխաթթվային աղբյուրների և տրավերտինային ելքերի տեսքը, ելնելով առավել պահպանողական տարբերակի սկզբունքից (առավելագույն ամենավատի) ուսումնասիրողների կողմից Երևանի խզվածքի գոտին համարվում է չորրորդական հասակի թաղված (թաքնված) գոտի, որը պահպանել է ժամանակակից սեյսմիկ ակտիվությունը:

- **Գառնիի ակտիվ խզվածքը (GF)**-Երևան քաղաքի համար ներկայացնում է առավելագույն սեյսմիկ վտանգ: Խզվածքի մոտակա թևը տեղադրված է քաղաքի հյուսիսային ծայրամասերից 10կմ հեռավորության վրա: Գառնիի խզվածքն ունի 198կմ ընդհանուր երկրաչափական և 299կմ ըստ սեզմոնոմների ընդհանուր երկարություն: Գառնիի խզվածքն ունի աջակողմյան կողաշարժի կինեմատիկա Յմ/տարի հորիզոնական տեղաշարժի արագությամբ: Գառնիի խզվածքը բնութագրվում է զգալի սեյսմիկ ակտիվությամբ:
- **Փարաքարի խզվածքը (PF)**-Երևանի հարավային ծայրամասերում, նոր գլխավոր պլանի սահմաններում, առանձնանում է Փարաքարի խզվածքի կարճ սեզմոնոմ: Փարաքար գյուղից անմիջապես հյուսիս վեր է հասնում 45-54մ բարձրությամբ զամբիթափ սկարայր՝ կազմված միջին միացենի և վերին պլիոցենի հրաբխածին-նստվածքային ապարներից: Սկարայի հյուսիսային լանջն ու գագաթը ծածկված են վերին պլիոցենի դոլերիտային բազալիտներից: Քարհանքի արևմտյան թևում, բարձրացման վրա, բացված է մինչև 6մ տեսանելի հզորության գետաքարերի շերտ:

«Ակադեմիական քաղաքի» նախատեսվող տարածքին ամենամոտ վտանգ ներկայացնող ակտիվ խզվածքը Գառնիի խզվածքն է (2-րդ սեզմոնոմը, GF2), հետևաբար այս հետազոտության մեջ իրականացվող հաշվարկներում ներառված են Գառնիի 2-րդ սեզմոնոմի (GF 2) հիմնական

պարամետրերը.

- ✓ մակերևութի վրա խզվածքի պրոյեկցիայի ամենամոտ հեռավորությունը՝ 20-30 կմ,
- ✓ սեզմենտի կլինեմատիկան՝ կողաշարժային, վարենտրային (SS/N),
- ✓ տևելումը՝ ուղղահայաց,
- ✓ M_{min} ՝ նվազագույն մագնիտուդը 6.9, M_{max} ՝ 7.3:



Սեյսմիկա.-կառարվել է մակերևութային սեյսմիկ ալիքների բազմակապուղի վերլուծություն (MASW) մեթոդով: Աշխատանքները ներառում էին գործիքային չափումներ թվային սեյսմիկ կայանների միջոցով:

Հիմք ընդունելով սեյսմիկ միկրոշրջանացման (ՄՄՇ) նախկինում իրականացված աշխատանքները՝ 2005 թ.-ին «ԳԵՈՒԻՄԿ» գիտահետազոտական ընկերության կողմից Երևան քաղաքի գլխավոր հատակագծի տարածքի համար ևս իրականացվել են սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքներ: Աշխատանքները ներառում էին գործիքային չափումներ թվային սեյսմիկ կայանների միջոցով: Չափումներ չեն իրականացվել քաղաքի հարավ-արևելյան մասում, որտեղ տարածված են ակտիվ սողանքները, քանի որ այդ տարածքները անբարենպաստ են շինարարության համար:

ՄՄՇ քարտեզի կազմման համար օգտագործվել են ինչպես գոյություն ունեցող ֆոնդային նյութերը, այնպես էլ տվյալ և նախորդող չորս տարիներում իրականացված նախագծերի ընթացքում կատարված դաշտային աշխատանքների արդյունքում ստացված նոր տվյալները (1:25000 մասշտաբ): ՄՄՇ աշխատանքների կատարման արդյունքում ստացվել են գրունտի առավելագույն հորիզոնական արագացումների հետևյալ արժեքները (հաշվի առնելով տեղային գրունտային պայմանները).

- քաղաքի հյուսիսային և կենտրոնական մասերի տարածքը բնութագրվում է արագացումների 0.25-0.4g արժեքներով, առանձին տեղամասերում՝ 0.4-0.5g:

- Քաղաքի հարավային և հարավ-արևելյան մասերի տարածքը բնութագրվում է արագացումների 0.4-0.5g արժեքներով, առանձին տեղամասերում՝ 0.3-0.4g:

$$V_{s_eq}(3.0-33.0) = 587 \text{ m/s}$$



© 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2033, 2034, 2035, 2036, 2037, 2038, 2039, 2040, 2041, 2042, 2043, 2044, 2045, 2046, 2047, 2048, 2049, 2050, 2051, 2052, 2053, 2054, 2055, 2056, 2057, 2058, 2059, 2060, 2061, 2062, 2063, 2064, 2065, 2066, 2067, 2068, 2069, 2070, 2071, 2072, 2073, 2074, 2075, 2076, 2077, 2078, 2079, 2080, 2081, 2082, 2083, 2084, 2085, 2086, 2087, 2088, 2089, 2090, 2091, 2092, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2098, 2099, 2100, 2101, 2102, 2103, 2104, 2105, 2106, 2107, 2108, 2109, 2110, 2111, 2112, 2113, 2114, 2115, 2116, 2117, 2118, 2119, 2120, 2121, 2122, 2123, 2124, 2125, 2126, 2127, 2128, 2129, 2130, 2131, 2132, 2133, 2134, 2135, 2136, 2137, 2138, 2139, 2140, 2141, 2142, 2143, 2144, 2145, 2146, 2147, 2148, 2149, 2150, 2151, 2152, 2153, 2154, 2155, 2156, 2157, 2158, 2159, 2160, 2161, 2162, 2163, 2164, 2165, 2166, 2167, 2168, 2169, 2170, 2171, 2172, 2173, 2174, 2175, 2176, 2177, 2178, 2179, 2180, 2181, 2182, 2183, 2184, 2185, 2186, 2187, 2188, 2189, 2190, 2191, 2192, 2193, 2194, 2195, 2196, 2197, 2198, 2199, 2200, 2201, 2202, 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2209, 2210, 2211, 2212, 2213, 2214, 2215, 2216, 2217, 2218, 2219, 2220, 2221, 2222, 2223, 2224, 2225, 2226, 2227, 2228, 2229, 2230, 2231, 2232, 2233, 2234, 2235, 2236, 2237, 2238, 2239, 2240, 2241, 2242, 2243, 2244, 2245, 2246, 2247, 2248, 2249, 2250, 2251, 2252, 2253, 2254, 2255, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2273, 2274, 2275, 2276, 2277, 2278, 2279, 2280, 2281, 2282, 2283, 2284, 2285, 2286, 2287, 2288, 2289, 2290, 2291, 2292, 2293, 2294, 2295, 2296, 2297, 2298, 2299, 2300, 2301, 2302, 2303, 2304, 2305, 2306, 2307, 2308, 2309, 2310, 2311, 2312, 2313, 2314, 2315, 2316, 2317, 2318, 2319, 2320, 2321, 2322, 2323, 2324, 2325, 2326, 2327, 2328, 2329, 2330, 2331, 2332, 2333, 2334, 2335, 2336, 2337, 2338, 2339, 2340, 2341, 2342, 2343, 2344, 2345, 2346, 2347, 2348, 2349, 2350, 2351, 2352, 2353, 2354, 2355, 2356, 2357, 2358, 2359, 2360, 2361, 2362, 2363, 2364, 2365, 2366, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2373, 2374, 2375, 2376, 2377, 2378, 2379, 2380, 2381, 2382, 2383, 2384, 2385, 2386, 2387, 2388, 2389, 2390, 2391, 2392, 2393, 2394, 2395, 2396, 2397, 2398, 2399, 2400, 2401, 2402, 2403, 2404, 2405, 2406, 2407, 2408, 2409, 2410, 2411, 2412, 2413, 2414, 2415, 2416, 2417, 2418, 2419, 2420, 2421, 2422, 2423, 2424, 2425, 2426, 2427, 2428, 2429, 2430, 2431, 2432, 2433, 2434, 2435, 2436, 2437, 2438, 2439, 2440, 2441, 2442, 2443, 2444, 2445, 2446, 2447, 2448, 2449, 2450, 2451, 2452, 2453, 2454, 2455, 2456, 2457, 2458, 2459, 2460, 2461, 2462, 2463, 2464, 2465, 2466, 2467, 2468, 2469, 2470, 2471, 2472, 2473, 2474, 2475, 2476, 2477, 2478, 2479, 2480, 2481, 2482, 2483, 2484, 2485, 2486, 2487, 2488, 2489, 2490, 2491, 2492, 2493, 2494, 2495, 2496, 2497, 2498, 2499, 2500, 2501, 2502, 2503, 2504, 2505, 2506, 2507, 2508, 2509, 2510, 2511, 2512, 2513, 2514, 2515, 2516, 2517, 2518, 2519, 2520, 2521, 2522, 2523, 2524, 2525, 2526, 2527, 2528, 2529, 2530, 2531, 2532, 2533, 2534, 2535, 2536, 2537, 2538, 2539, 2540, 2541, 2542, 2543, 2544, 2545, 2546, 2547, 2548, 2549, 2550, 2551, 2552, 2553, 2554, 2555, 2556, 2557, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2564, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2570, 2571, 2572, 2573, 2574, 2575, 2576, 2577, 2578, 2579, 2580, 2581, 2582, 2583, 2584, 2585, 2586, 2587, 2588, 2589, 2590, 2591, 2592, 2593, 2594, 2595, 2596, 2597, 2598, 2599, 2600, 2601, 2602, 2603, 2604, 2605, 2606, 2607, 2608, 2609, 2610, 2611, 2612, 2613, 2614, 2615, 2616, 2617, 2618, 2619, 2620, 2621, 2622, 2623, 2624, 2625, 2626, 2627, 2628, 2629, 2630, 2631, 2632, 2633, 2634, 2635, 2636, 2637, 2638, 2639, 2640, 2641, 2642, 2643, 2644, 2645, 2646, 2647, 2648, 2649, 2650, 2651, 2652, 2653, 2654, 2655, 2656, 2657, 2658, 2659, 2660, 2661, 2662, 2663, 2664, 2665, 2666, 2667, 2668, 2669, 2670, 2671, 2672, 2673, 2674, 2675, 2676, 2677, 2678,






ԳԵՈՌԳԻՍԿԻ ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԴՐԱՆ


38

[illegible]



Ըստ սեյսմիկ հատկությունների՝ երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքում, տարածքի գրունտները բնութագրվում են I (առաջին) և II (երկրորդ) կարգերով: Համաձայն ՀՀՇՆ Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմերի ((ՀՀՇՆ 20.04, 2020 թ.)՝ գրունտային պարմանների k_0 գործակիցը՝ 0.8 և 1.0 է՝ համապատասխանաբար գրունտների I (առաջին) և II (երկրորդ) կարգերի համար: Հետևաբար I (առաջին) կարգի գրունտների դեպքում գրունտի սպասվող առավելագույն արագացումը $A=0.4g \cdot 0.8=0.32g$ է, իսկ II (երկրորդ) կարգի համար՝ $A=0.4g \cdot 1.0=0.4g$: Հետևաբար «Ակադեմիական քաղաքի» նախատեսվող տարածքում գրունտի սպասվող առավելագույն արագացումը գտնվում է $A=0.32g-0.4g$ միջակայքում: Քանի որ ուսումնասիրվող տարածքում ռելիեֆով պայմանավորված առանձնանում են բլուրներ, ձորակներ, ինչպես նաև 150-ից ավելի թեքությամբ լանջեր, համաձայն ((ՀՀՇՆ 20.04, 2020 թ.), կետ 5.26 «Շինարարության համար անբարենպաստ հրապարակներ») նորմերի, այդ տեղամասերի համար գրունտների սեյսմիկ արագացման հաշվարկային մեծություններն ընդունվում են բազմապատկելով 1.2 գործակցով: Հետևաբար այդ տեղամասերի համար գրունտի սպասվող առավելագույն արագացումն ընդունում է $A=0.384g$, և $0.48g$ արժեքները:

Ուսումնասիրվող տարածքում գրունտների սեյսմիկ կարգը որոշելու համար, հաշվի են առնված ((ՀՀՇՆ 20.04, 2020 թ.) նորմերը ($0.87^\circ V_9$), համաձայն որի՝ լայնական ալիքների տարածման միջին արագություններն ընկած են 451.53 – 977.88 մ/վրկ. տիրույթում, հետևաբար՝ գրունտներն ըստ սեյսմիկ հատկությունների համապատասխանում են I և II կարգին՝ գրունտի սպասվող առավելագույն արագացումը $A=0.4g \cdot 0.8=0.32g$ է, իսկ II երկրորդ) կարգի համար՝ $A=0.4g \cdot 1.0=0.4g$:



Ինժեներա-երկրաբանական պայմանները. Ամբողջ տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցություն ունեցող մակերևութային փոխը բեկորային գրունտների զեննտիկական տեսակները ներառում են՝ էրալիալ, էրալիալ-դեյուլիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ և տեցումային տեսակները: Գրունտների երկրաբանա-քարաբանական կազմվածքի և ֆիզիկա-մեխանիկական հատկությունների ուսումնասիրման հիման վրա, ինչպես նաև օգտագործելով և վերլուծելով լաբորատորային աշխատանքների արդյունքները հետազոտությունների խորության սահմաններում՝ մինչև 35.0 մ, առանձնացվել է հետևյալ շերտերը:

Շերտ-1. Բուսանոց կավավազային կազմի, խճի պարունակությամբ: Ունի սահմանափակ տարածում, թույլ հզորության և այդ պատճառով չի մասնակցում ինժեներաերկրաբանական շրջանացմանը:

Շերտ-2. Լիցքային գրունտ, բազալտային կազմի մեծաքանակությամբ, շինարարական աղբ: Ունի լայն տարածում ուսումնասիրվող տարածքի մակերեսում: Հզորությունը մինչև

4,1 մ, Հանդիպում է Ե-BH-10, Ե-BH-12, Ե-BH-57 և այլ հորատանցքերում, և հանդիսանում է ուսումնասիրվող տարածքում վերին շերտը:

Շերտ-3. Խճա-մանրախճային գրունտ, կավավազային, ավազային լցոնով (ռալիտակահող): Ուսումնասիրվող տարածքում ունի լայն տարածում: Շերտի հզորությունը մինչև 6.6 մ է: Այդ գրունտներն ունեն նստման և ձևախախտման (դեֆորմացիայի) ունակություն: Հանդիպում է համարյա բոլոր հորատանցքերում: Տեղադրված են ստորադիր բազալտային անդեզիտների վրա: Համաձայն ՀՆԿ IV-2-82, §33-վ, Աղյուսակ 1-1-ի, II կարգի է:

Շերտ-4. Կավավազ, մանրախճի և խճի պարունակությամբ մինչև 30% խճավազի պարունակությամբ: Ուսումնասիրվող տարածքում ունի լայն տարածում: Շերտի հզորությունը մինչև 7.7 մ է: Բացահայտված է տարածքի տարբեր մասերում: Այդ գրունտներն նույնպես ունեն նստման և ձևախախտման (դեֆորմացիայի) ունակություն: Տեղադրված են ստորադիր բազալտային անդեզիտների վրա: Համաձայն ՀՆԿ IV-2-82, §33-վ, Աղյուսակ 1-1-ի, II կարգի է:

Շերտ-5. Բազալտային անդեզիտ մոխրագույն, ծակոտակա, տեղ-տեղ մեծաբեկորային, Ուսումնասիրվող տարածքում ունի լայն տարածում: Բացահայտված է տարածքի արևելյան

հատվածում: Շերտի բացահայտված հզորությունը մինչև 13.7 մ է: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §19, Աղյուսակ. 1-1-ի, VII կարգի են:

Շերտ-6. Խիճ, մանրախիճ, ավազակավային, կավավազային, ավազային լցնում: (խարամացված բազալտային անդեզիտներ): Շերտի բացահայտված հզորությունը ինչև 13.1 մ է: Բացահայտված է ամբողջ տարածքում: Հանդես են գալիս բազալտային անդեզիտների միջնաշերտախմբում, ենթաշերտերի, բների, ռապակների տեսքով: Տեղադրված է ստորադիր բազալտային անդեզիտների վրա: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §13, Աղյուսակ 1-1-ի, IV կարգի է:

Շերտ-7. Բազալտային անդեզիտ, մուգ մոխրագույն, խիտ, խոռոչավոր ճեղքավորված, տեղ-տեղ բեկորային: Շերտի բացահայտված հզորությունը մինչև 14.3 մ է: Բացահայտված է ամբողջ տարածքում: Գրունտները հանդիսանում են ժայռային հիմքի արմատական ապարները: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §19, Աղյուսակ. 1-1-ի, VII կարգի են:

Շերտ-8. Տուֆ դարչնագույնից-սև մեծաբեկորային անջատումներով, ծակոտկեն, ճեղքավորված: Ծածկում է բազալտային անդեզիտների հոսքերը: Ունի ստեմանափակ տարածում, հանդիպում են կենտրոնական մասում և Հայֆիլմի տեղամասում: Շերտի բացահայտված հզորությունը մինչև 8.4 մ է: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §19, Աղյուսակ. 1-1-ի, VII կարգի են:

Շերտ-9. Ավազակավ գորշից դարչնագույն: Ունի ստեմանափակ տարածում: Շերտի բացահայտված հզորությունը մինչև 5.2 մ է: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §34-վ, Աղյուսակ 1-1-ի, II կարգի է:

Շերտ-10. Ավազ գորշ և դարչնագույն տարբեր աստիճանի ցեմենտացած և խտացած, կավային գրունտների ենթաշերտերով: Ունի ստեմանափակ տարածում: Շերտի բացահայտված հզորությունը մինչև 2.7 մ է: Համաձայն ՇՆԿ IV-2-82, §34-վ, Աղյուսակ 1-1-ի, II կարգի է:

Շերտ-11. Դատարկություններ:

Գրունտի և հողերի բնութագիրը. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Հիդրոերկրաքիմիական լաբորատորիայում կատարվել է գրունտի քիմիական կազմության փորձեր կառուցապատվող տարածքում հողերի բետոնե, մետաղական, կապարե և ալյումինե մալուխային պատյանների նկատմամբ ագրեսիվության, ինչպես նաև գրունտի մզվածքի, հողերի աղակալվածության գնահատուման նպատակով:

Գրունտի մզվածքի քիմիական անալիզի արդյունքներ

N	Նմուշի համարը	1			2		
		b-BH-29 b29 H=3,2-3,6մ			b-BH-75 b75 H=1,5-1,8մ		
		մգ/100գ	մգ-էկվ/100գ	էկվ-%	մգ/100գ	մգ-էկվ/ 100գ	էկվ-%
1	NH ₄ ⁺	0,07			0,05		
2	Na ⁺	11,27	0,49	2,93	144,84	6,30	74,56
3	K ⁺	0,60	0,02	0,12	0,45	0,01	0,12
4	Ca ²⁺	305,35	15,24	91,04	33,88	1,69	20,00
5	Mg ²⁺	11,94	0,98	5,85	5,49	0,45	5,32
6	Fe ^{total}	0,11	0,01	0,06	0,055		
	Σ		16,74	100		8,45	100
10	Cl ⁻	2,62	0,07	0,42	1,64	0,05	0,59
11	SO ₄ ²⁻	770,74	16,05	95,88	371,17	7,73	91,48
12	HCO ₃ ⁻	36,60	0,60	3,58	36,60	0,60	7,10
13	NO ₃ ⁻	1,00	0,02	0,12	4,00	0,07	0,83
14	NO ₂ ⁻	0,05			0,13		
15	PO ₄ ³⁻	չի հայտ.			0,05		
	Σ		16,74	100		8,45	100
16	Ընդհ.հանք.	1140,35			598,355		
17	Ընդհ.կոչյուն.		16,22			2,14	
18	pH	6,97			8,10		
19	CO ₂ (ազրու.)	չի հայտ.			չի հայտ.		

N	Նմուշի համարը	3			4		
		b-BH-104			b-BH-127		
		b104 H=3,6-4,0մ			b127 H=1,0-1,2մ		
		մգ/100գ	մգ-էկվ/100գ	էկվ-%	մգ/100գ	մգ-էկվ/100գ	էկվ-%
1	NH ₄ ⁺	0,10	0,01	1,02	0,07		
2	Na ⁺	9,89	0,43	43,88	11,04	0,48	2,87
3	K ⁺	0,70	0,02	2,04	0,60	0,02	0,12
4	Ca ²⁺	7,49	0,37	37,76	305,35	15,24	91,04
5	Mg ²⁺	1,79	0,15	15,30	11,94	0,98	5,85
6	Fe _{total}	0,055			0,22	0,02	0,12
	Y		0,98	100		16,74	100
10	Cl	1,31	0,04	4,08	2,62	0,07	0,42
11	SO ₄ ²⁻	15,64	0,33	33,68	770,74	16,05	95,88
12	HCO ₃ ⁻	36,60	0,60	61,22	36,60	0,60	3,58
13	NO ₃ ⁻	0,50	0,01	1,02	1,50	0,02	0,12
14	NO ₂ ⁻	0,075			0,04		
15	PO ₄ ³⁻	0,07			0,03		
	Y		0,98	100		16,74	100
16	Ընդհանր.	74,22			1140,75		
17	Ընդհ.կուշտ.		0,52			16,22	
18	pH	8,49			7,50		
19	CO ₂ (ազրա.)	4,40			չի հայտ.		

N	Որոշվող թաղանթի	Միջազգային ստանդարտներ	ՀՀ-ում խմելու քաղցրահամ ջրերի համար ընդունված նորմեր, մգ/լ	ԱՀԿ կողմից ընդունված նորմեր
1	NH ₄ ⁺	ГОСТ-4192-82	Նորմավորված չէ	Նորմավորված չէ
2	Na ⁺	ISO-9964-3	200,0	200,0
3	K ⁺	ISO-9961-3	Նորմավորված չէ	Նորմավորված չէ
4	Ca ²⁺	ISO-6058	Նորմավորված չէ	Նորմավորված չէ
5	Mg ²⁺	ISO-6059	Նորմավորված չէ	Նորմավորված չէ
6	Fe _{total}	ISO-6362	0,3	0,3
7	Cl	ISO-9297	350,0	250,0
8	SO ₄ ²⁻	ISO-9280	500,0	250,0
9	HCO ₃ ⁻	ГОСТ-23268.3-78	Նորմավորված չէ	Նորմավորված չէ
10	NO ₃ ⁻	ISO-7896-3	45,0	50,0
11	NO ₂ ⁻	ГОСТ-419282	3,0	3,0
12	Ընդհ.համք.		1000,0	Նորմավորված չէ
13	Ընդհ.կուշտ.	ISO-6059	7,0	Նորմավորված չէ
14	pH		6-9	6,5-8,5

Ելնելով նմուշների գրունտի մզվածքի քիմիական անալիզի տվյալներից, նշված գրունտների կորոզիոն ագրեսիվությունը՝ մալուխի կապարի պատյանների նկատմամբ ցածր է: Բետոնի վրա նշված գրունտների ազդեցության աստիճանը թույլ ագրեսիվ է:

Հողերի դասակարգումն ըստ աղակալվածության աստիճանի՝ հաշվի առնելով թունավոր իոնների «ընդհանուր ազդեցությունը»: (Ն.Խ. Բազիլին, Է.Խ. Պանկով, 1970):

Աղակալվածության աստիճանը	Թունավոր իոնների ընդհանուր ազդեցությունը, արտահայտված մգ-էկվ Cl-ով (CO ₃ ²⁻ , HCO ₃ ⁻ , Cl ⁻ , SO ₄ ²⁻).
ոչ աղակալված	<0,3
թույլ աղակալված	0,31-1,0 (1,5)
միջին աղակալված	1,1 (1,6) - 3,0 (3,5)
բարձր աղակալված	3,1 (3,6) - 7,0 (7,5)
խիստ աղակալված	>7,0 (7,5)

Ելնելով վերը նշվածից, տվյալ գրունտի նմուշները՝ b-BH-29, b29, H=3,2-3,6մ (CU=2,945 մգ-էկվ/100գ), b-BH-127, b127, H=1,0-1,2մ (CU=2,945 մգ-էկվ/100գ) համարվում են միջին աղակալված: Նմուշներ b-BH-75, b75, H=1,5-1,8մ (CU=1,54 մգ-էկվ/100գ) թույլ աղակալված, b-BH-104, b104, H=3,6-4,0մ (CU=0,294 մգ-էկվ/100գ) ոչ աղակալված, ինչը համապատասխանում են ցածր տոքսիկության աստիճանին:

Հիդրոերկրաբանի (աղ.վարի)
Շանինյան Հ.Է.



Քիմիկոս-անալիտիկ
Գյուլնազարյան Շ.Ա.
Ջաբարյան Շ.Ս.

Գյուլնազարյան Շ.Ա.

Ջրաերկրաբանական պայմանները, Հետազոտությունների իրականացման պահին գրունտային ջրերի հորիզոն ոչ մի փորվածքում չի հայտնաբերվել: Ինչպես հրաբխային ասպարներում, այնպես էլ փուխը բեկորային գոյացումներում, մթնոլորտային տեղումների ներթափանցման շնորհիվ ջուրը թափանցում է դեպի խորքը: Միջլավային և ներլավային ջրերի մեծ մասը կուտակվում է

տարածաշրջանային ջրամերժ շերտի վերևում, որը ներկայացված է միոցենի կավային ստվարաշերտով: Ստորգետնյա ջրերը, ըստ նրանց տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանների, պատկանում են գրունտային տեսակին: Ուսումնասիրվող տեղամասում գրունտային ջրերը տեղադրված են 140 մետր խորության վրա:

Տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացումը. Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնութագրից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից՝ ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներա-երկրաբանական շրջաններ.

- բարենպաստ
- պայմանական բարենպաստ
- անբարենպաստ

Գրունտների և ԻԵՏ-ի ֆիզիկա-մեխանիկական հատկություններ- ըստ Երկրաբանա-լիթոլոգիական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների (Շերտեր 3 և 4), որոնք Խճամանրախճային գրունտ և կավավազ, մեծաքարերի պարունակությամբ, կոշտ կոնսիստենցիայով (սպիտակահող) են, գնահատվում են որպես նստող և գերնստող գրունտներ և չեն կարող հանդիսանալ որպես հիմնատակ շենքերի և շինությունների համար ու ենթակա են հեռացման:

Երկրաբանական և ինժեներաերկրաբանական պրոցեսները. Վտանգավոր ինժեներաերկրաբանական պրոցեսներ, այդ թվում՝ սողանքներ, սելավներ, հեղեղվող տեղամասեր և այլն, հետազոտման տեղամասում բացակայում են: Երկրաբանական պրոցեսները և երևույթներն արտահայտվում են հստակ տեսանելի լանջային երոզիայի /հողմնահարման/ տեսքով, և անանուն ձորակներում, որոնք տարածվում են հյուսիսից դեպի հարավ ուղղությամբ: Վտանգավոր պրոցեսները նաև ներկայացված են ճահճացման երևույթներով, որոնք տարածվում են հիմնական տարածքի հարավային մասում և «Հայֆիլմի» տարածքի հյուսիս-արևմտյան մասում: Ճահճացման երևույթները արհեստական (մարդածին) ծագում և հետևանք են գյուղատնտեսական գործունեության, տարածված են 9 հա տարածքի վրա: Վտանգավոր պրոցեսները ներկայացված են նաև քարաթափման երևույթներով, որոնք լայն տարածում ունեն գործող և լքված հանքերի կարյերների (40 հա) եզրերին: Դրանք նույնպես կրում են մարդածին բնույթ: Ուսումնասիրվող ամբողջ տեղամասում, 102 հա մակերեսով, տարածված են շինարարական թափոնների լցակույտներ:

«Ակադեմիական քաղաք» օբյեկտի տարածքի տեխնածին և երկրաբանական պայմանները ընդհանուր առմամբ բարենպաստ են:

10. Շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության ներկա վիճակը, սոցիալական գործոնները և խնդիրները.

10.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

Համաձայն 2024թ. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ Երևան քաղաքը տեղադրված է Հրազդան գետի երկու ափերին և զբաղեցնում է Արարատյան լճա - կուտակումային հարթավայրի հարավ - արևելյան եզրամասը: Երևան քաղաքի տարածքի առանձնահատկություններից է ռելիեֆի բարձրության նշանակալի տարբերությունները: Բարձրությունների բացարձակ նիշերը տատանվում են 830.0 (հարավ - արևմտյան մաս) և 1550.0 մետրի (հյուսիս - արևելյան մաս) սահմաններում: Բարձրության նիշերի տատանումները նշանակալի տարբերություն են ստեղծում քաղաքի տարբեր մասերի

միկրոկլիմայում: Քաղաքը գտնվում է Արաքս գետի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' - 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' - 44° 37' միջև, Երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալլանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19.7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19.1 կմ:

Հրազդան գետի հովտի աջ լանջերին տեղադրված են Եղվարդ-Քանաքեռի, իսկ ձախ լանջերին Կոտայք-Արաբկիրի հրաբխային սարավանդերը: Գետահովտի լանջերը կազմված են հրաբխային լավաներից, գառիթափ են և առանձին տեղերում ունեն 120-150մ խորության կիրճի տեսք: Հրազդան գետի կիրճում հանդիպում են նաև էրոզիոն դարավանդներ, որոնք առաջացել են անդեզիտա-բազալտների մեջ, որոնց բարձրությունը գետի ջրի մակարդակից 50-70 մետր է: Հրազդան գետի կիրճը ունի բարդ ռելիեֆ: Այստեղ հանդիպում են կտրուկ թեքության, գառիթափ ու աստիճանաձև լանջեր՝ առաջացած ոչ միայն լավաների շերտավախժամբ (հերթավախժամբ), այլև սողանքային աստիճաններից: Կիրճի լայնությունը հյուսիսային մասում կազմում է 1000-1200 մետր, դեպի հարավ լայնությունը փոքրանում է մինչև 200-300 մետր, ընդիույ մինչև Հաղթանակի կամուրջը (Հրազդանի մարզադաշտից ներքև):

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ YEREVAN - CAPITAL

Վարչական շրջաններ
District communities





Աջափնյակ	Ajapnyak
Ավան	Avan
Արաբկիր	Arabkir
Դավթաշեն	Daytashen
Էրեբունի	Erebuni
Կենտրոն	Kentron
Մալաթիա-Մեբասիա	Malatia-Sebastia
Նոր Նորք	Nor Nork
Նորք-Մարաշ	Nork-Marash
Նուբարաշեն	Nubarashen
Շենգավիթ	Shengavit
Քանաքեռ-Զեյթուն	Kanaker-Zeytun

Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք
- 2) հրաբխային սարահարթը ,
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Հրազդան, Գետտո և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը
- 4) Մշակված հողերը:

Ռելիեֆի ձևերից տարածքում առկա են բլուրները, թմբերը, տափարակները-իջվածքները, սարահարթերը և դարավանդները, կիրճերն ու ձորերը, գրավիտացիոն և էրոզիոն-հոդմնահարման լանջերը և այլն: Երևան քաղաքի տարածքում կապված տեղամասերի բոլոր շինարարական աշխատանքների հետ անտրոպոգեն գործոնի ազդեցության արդյունքում առաջացել են նաև բազմապիսի արհեստական ձորակներ:





Նկար 3.2 Ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզ

Երևան քաղաքի տարածքում ամենափոքր երկրաբանական միավորը Մատրին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին օրիգոցեն-ստորին միոցենից մինչև ժամանակակից հասակի շատ բարդ կառուցվածքի նստվածքների համախմբերը, որոնք ներկայացված են մայրցամաքային, հրաբխային, հրաբխա-նստվածքային և «նորմալ» նստվածքային ֆոցիաներով: Դրանք ներկայացված է տարբեր տեսակի և տարատեսք ինժեներա-երկրաբանական հատկանիշներով օժտված, ամենափոփոխից (ավազ, կավավազ) մինչև կիսաժայռային և ժայռային տպարաններով: Ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտներ, անդեզիտա-բազալտներ և տեղ-տեղ նրանց վրա տեղադրված կիսաժայռային նստվածքները՝ տուֆեր, առածնոսնում են մեծ ամրությամբ, բայց ունեն տեղադրման տարբեր պայմաններ և դրանց հետ կապված ճեղքավորվածությամբ: Դրանք լայն տարածում ունեն Եղվարդի և կոտայքի սարավանդների սահմաններում: Փոխյր գրունտների կապակցված և չկապակցված տարատեսակները՝ կավեր, ավազակավեր, կավավազներ, ավազներ, գլաքարային, ճալքաքարային, լայն տարածում ունեն քաղաքի տարածքի հարավային, հյուսիս-արևելյան և հատկապես հարավ-արևմտյան մասերում:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմանհարված, Էրզլուռ-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

10.2. Սեյսմիկա և երկրաբանություն.

Մեյամատեկտոնական տեսակետից Երևան քաղաքի տարածքը իրենից ներկայացնում է իջվածք/Երևանի իջվածք/, տեղադրված միջինարաքսյան միջլեռնային ճկվածքի սահմաններում: Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 ձև), իսկ ամենաերիտասարդը՝ Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղագրենվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ զրոնտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:



Սողանքներ. Երևան քաղաքի տարածքում լայն տարածում ունեն սողանքները և սողանքավտանգ տեղամասերը (լանջերը), փլվածքները, քարաթափերը, սելավների ու հեղեղների առաջացման բարձր հավանականությունը, ջրհեղեղումը, ճահճոտների առաջացումը: Քաղաքի ստեմաններում լայն տարածված են «սպիտակտեղ» զրոնտները,

կավային գրունտների մեծ մասը ցուցաբերում է գերնստման և ուռչելու հատկություններ: Փոշենման կավավազների և ավազների լայն տարածումը, սեյսմատեկտոնական տեսակետից շրջանի ակտիվությունը, անբարենպաստ և բարդ պայմաններ են ստեղծում տարածքի կապիտալ շինարարության իրացման համար: Սողանքները հիմնականում զարգացած են տարածքի այն մասերում, որտեղ լանջերի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը ներկայացված է կավային գրունտներով կամ այն մասերում, որտեղ շերտախմբի կազմում մասնակցում են կավային շերտերի տարատեսակներ, ստեղծելով սողանքային մակերեսներ: Սողանքային տեղաշարժերը հիմնականում կապված են Հրազդանի, գիպսատար և խայտաբղետ շերտախմբերի կավերի տարածման շրջանների (տեղամասերի) հետ, որտեղ դրանք ծածկված են բազալտների հաստաշերտերով, կամ Արաքսի բարձր դարավանդի ճալաքարա-կոպճային առաջացումներով: Ըստ հիմնական երկրաբանա-տեկտոնական գործոնի և աշխարհագրական տեղաբաշխման սողանքները և սողանքավտանգ տեղամասերը կարելի է բաժանել հետևյալ երեք խմբերի՝

- Հրազդանի խմբի սողանքներ և սողանքավտանգ տեղամասեր:
- Ջրվեժի խմբի սողանքներ և սողանքավտանգ տեղամասեր:
- Շորալայնային-Նուբարաշենի (Սովետաշեն) սողանքներ և սողանքավտանգ տեղամասեր:

Հրազդան գետի ջրերի և Արարատյան հարթավայրի գրունտային ջրերի խառնման տեղում ստորգետնյա ջրերը տեղադրված են 0-2 մետր խորությունների վրա և առաջացնում են ճահճացած և ջրավորված տեղամասեր, և պայմաններ է ստեղծում տարածքի ջրածածկման համար:

10.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշներով: Կլիմային բնորոշ են տաք, խիստ ցամաքային է, շոգ-չոր ամառները, չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկույթով ձմեռները: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով, որի շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Երևան քաղաքի Արաբկիր օդերևութաբանական կայանի և Աշտարակ համայնքի/ներառված է Սասունիկ բնակավայրը/ տվյալները: Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1113մ բարձրության վրա, գործունեության տարածքը՝ 952.9մ-1160.9մ բարձրությունների վրա, գտնվում է տաք կլիմայական գոտում: Առավելագույն ջերմաստիճանը կազմում է մոտ 41.9°C, ամենացուրտը՝ -28°C: Քամու միջին արագությունը կազմում է 0,7-2.8մ/վ: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը կազմում է 291մմ, միջին տարեկան հարաբերական

խոնավություն՝ 61%:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9
Աշտարակ	-3.2	-0.1	5.8	11.7	16.5	21.5	25.2	25.2	20.5	13.6	6.2	-0.2	11.9	-24.5	41.2

Օդի հարաբերական խոնավությունը

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
14. Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37
2. Աշտարակ	79	71	64	64	64	57	54	54	57	66	72	80	65	79	72	54	44

Մթնոլորտային տեղումները

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը օրական առավելագույն												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսների, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսների, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
14. Երևան «Արաբկիր»	28 25	31 28	38 44	52 34	54 47	27 47	18 34	8 22	13 47	29 34	29 48	27 26	354 48	153	201
2. Աշտարակ	27 24	30 24	36 28	55 39	59 45	33 30	20 45	11 22	13 32	34 43	29 40	30 22	377 45	152	225

Քամի


Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					Ըստ ուղղությունների			Անդրդիր կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
16. Երևան «Արարկիր»	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9						
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1				
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5						
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4				
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6						
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8				
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0						

3. Աշտարակ Կ	հունվար	4	21	22	11	16	12	10	4	-	2.0	Արլ	3.3	Արլ	2.2
		1.6	2.0	2.2	2.3	2.0	1.8	2.0	2.1						
	ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	-	2.7				
		3.7	2.8	2.6	2.8	2.8	2.7	2.9	2.8						
	հուլիս	4	26	23	11	12	11	9	4	-	3.2				
		4.4	3.5	3.3	3.2	3.2	2.6	2.7	3.2						
	հոկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	-	2.2				
		1.7	2.1	2.3	2.4	2.3	2.1	2.1	2.2						

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Օդային ավազան.

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է: Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ:

Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024 թ. Երևան քաղաքի օդային ավազան աղտոտող նյութերի միջին հնգամյա ֆոնային

կոնցենտրացիաները սահմանվել են.


Ազոտի երկօքսիդ՝ 0.026 մգ/մ^3

Ծծմբի երկօքսիդ՝ 0.017 մգ/մ^3




Ածխածնի օքսիդ՝ 1.5 մգ/մ^3

Փոշի՝ 0.142 մգ/մ^3

Երևան քաղաքում 2025թ. 3-րդ եռամսյակում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2025թ. 3-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն $1.1\text{-}3.4$ անգամ (61 օր), իսկ ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան $1.1\text{-}3.0$ անգամ (81 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (512 մկգ/մ^3) դիտվել է սեպտեմբերի 10-ին՝ Շենգավիթ համայնքում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (120 մկգ/մ^3)՝ սեպտեմբերի 8-ին՝ Կենտրոն համայնքում: Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օդոնի օրական և միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 8. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիաները, հուլիս-սեպտեմբեր 2025թ.



www.meteomonitoring.am

Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդուի միջին ամսական կոնցենտրացիաները նույն ժամանակահատվածի համար գտնվում են նորմայի ստեմաններում, չեն գերազանցել միջին ՄՅՎ՝ 30մկգ/մ²:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանություն և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են

մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Սասունիկ բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

10.4. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով հագեցած լանդշաֆտային գոտում: Կիսաանապատային գորշ հողերը զբաղեցնում են Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու ցածրադիր հատվածները, թույլ բլրալիքավոր հարթությունների 850-1250 մ բարձրության տարածքները: Կիսաանապատային գորշ հողերին բնորոշ է հումուսային հորիզոնների ոչ մեծ հզորությունը (25-40 սմ), քարքարոտությունն ու կմախքայնությունը, պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ, իսկ հողերի պրոֆիլի միջին մասերում ձևավորվում է կարբոնատային ցեմենտացած հորիզոն՝ 15-30 սմ հզորությամբ, որը խանգարում է մշակաբույսերի նորմալ զարգացմանը: Ունեն թույլ և միջին հիմնային ռեակցիա (рН=7,5-8,5): Այս հողերը ապահովված են շարժուն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլ և միջակ, կալիումով՝ միջակ և լավ:

Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:



22 Արագածոտնի մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լեռն ժայռերով: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ:

Համաձայն 22 Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Արագածոտնի մարզի նախալեռնային հատվածներում հողածածկույթը կազմում են կիսաանապատային գորշ, ինչպես նաև բաց և տիպիկ լեռնային շագանակագույն հողերը: Ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,3-1,33 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,53-2,72 գ/սմ³ սահմաններում: Մարզի 1400-1500մ բարձրությունների վրա տեղաբաշխված է չոր լեռնատափաստանային հատվածները: Հողածածկույթը կազմում են տիպիկ և մուգ լեռնային շագանակագույն, ինչպես նաև տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,22-1,25 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,6-2,63 գ/սմ³ սահմաններում:

1500 մետրից ավելի բարձրությունների վրա՝ բարձր լեռնատափաստանային տարածքներն են: Հողածածկույթը կազմում են կրազերծված լեռնային սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական

կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են:

Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենդանային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «Հողի որակին ներկայացվող պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N01-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան ամփոփ և 2025 թվականի 2-րդ եռամսյակում տեղեկագրերում բացակայում են Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը՝ գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

10.5.Ջրային ռեսուրսներ

Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Գետերից բացի քաղաքի տարածքում կան արհեստական ջրավազաններ՝ Երևանյան լիճը, Վարդավառի լիճը և մի շարք մանր ջրամբարներ: Քաղաքի ջրային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 141.9 հա:

Համաձայն Երևան քաղաքի 2024թ. հաստատված գլխավոր հատակագծի՝ Երևան քաղաքի ստորգետնյա ջրերը կապված են հետևյալ երկրաբանական և մորֆո-կառուցվածքային տարրերի հետ:

Ջրեր, հրաբխային սարավանդների սահմաններում:

1. Հրազդանի շերտախմբի սահմանագծի լավաների տակի ջրեր Քանաքեռավանի մոտ:
2. Գետառ գետի արտաբերման կոների ստորգետնյա ջրեր:
3. Ջրվեժ և Շորաղբյուր գետերի արտաբերման կոների ջրեր:
4. Հրազդան գետի հովտի ողողահունային առաջացումների ջրեր:
5. Հրազդան գետի վերողողահունային առաջացումների ջրեր:
6. Արաքս գետի բարձր վերողողահունային նստվածքների ջրեր, խայտաբղետ շերտախմբի սահմանագծում:
7. Խայտաբղետ շերտախմբի շերտային գրունտա-ճնշումային ջրեր և վերնաջրեր:
8. Արարատյան հարթավայրի գրունտային ջրեր:

Հրաբխային սարահարթի սահմաններում գտնվող ջրերը կապված են ռելիեֆի ծածկված գետահովիտներին և ռելիեֆի մյուս «բացասական» հին ձևերին: Սարավանդի

սահմաններում դրանք տեղադրված են 20.0-30.0 մետրից խորը: Այս ջրերը բեռնաթափվում են Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղադրված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի և Գետառ, Ջրվեժ գետերի արտաբերման կոնների հետ կապված հորիզոնները: Գետերի հիմնական սնման աղբյուրն է հանդիսանում մթնոլորտային տեղումների, ռոռզման և մյուս բազալտի հաստաշերտի մեջ ներթափանցող ջրերը, որոնք շրջանառում են Սարմատի կավերի սահմանագծում: Այս ջրատար հորիզոնի հզորությունը տատանվում է 2.0-5.0 մետրի սահմաններում: Դրանք տեղադրված են 1.0-10 մետր խորությունների սահմաններում: Այս ջրերը բեռնաթափվում են Հրազդան գետի հովտում փոքր աղբյուրների տեսքով: Մարդու տնտեսական գործունեությունը Հրազդան գետի գոտում բերել է երկրաբանական պրոցեսների նշանակալի ակտիվացման: Ինչպես հին, այնպես էլ «նոր» գործող սողանքներով «հատկապես հարուստ են կիրճի ձախափնյա լանջերը»:


Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ՀՀ տարածքով հասող ամենաերկար գետն է, անցնում է Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու 800մ բարձրության վրա թափվում է Արաքս գետը: Հանդիսանում է Արաքս գետի ձախ վտակը: Գետն ունի 141կմ երկարություն, ավազանի մակերեսը կազմում է 2650կմ², ունի մեծ անկում: Սկիզբ առնելով 1916 մետր բարձրությունից և հոսում է դեպի Երևան: Քաղաքի սահմանագծում գետը հոսում է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք նեղ ժայռային լանջերով 50-150 մ խորության կանիոնով: Գետի երկարությունը քաղաքի սահմանագծում 25 կմ է: Հրազդան գետի վտակներից են՝ Մարմարիկը, Դալար գետը, Ակունքը, Արագետը, Սարալանջը: Հրազդանի ձախ վտակներից է Գետառը, որը հավաքելով Կաթնաղբյուրի ջրերը, անցնում են Ավանի ձորով՝ ընդունում Ձորաղբյուր վտակը և Ջրվեժ գյուղի մոտերքից եկող հեղեղատները և Հրազդանի մեջ է թափվում Երևանի սահմաններում: Հրազդանի սնումը 62,5%-ով ստորերկրյա է, հորդացումները լինում են գարնանային, վարարումները՝ ամռանն ու աշնանը: Ջրի տարեկան հոսքը կազմում է 712 միլիոն մ³, տարեկան միջին ծախսը՝ 22,6 մ³/վրկ: Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Հրազդանի, Արգել, Արգնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը:

Քասախ գետը հոսում է Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերով: Երկարությունը 89 կմ է, ավազանի մակերեսը կազմում է 1480 կմ²: Քասախ գետի ակունքները երեք գետակներ են, որոնցից ձախ օժանդակը՝ Քարաղբյուրն է, որը սկիզբ է առնում Փամբակի լեռների հարավային լանջերից, աջակողմյան մյուս երկու՝ Դաքենդ և Ծաղկահովիտ գետակները սկիզբ են առնում Արագածի հյուսիսային լանջերից, հոսում Արագածի շրջանով: Քասախը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Վերին հոսանքի շրջանում գետի հունը մոտ 8 ամիս ցամաքում է: Մշտական հոսք ունի սկսած Ապարանից, քանի որ նրա մեջ թափվում են հորդառատ աղբյուրներից գոյացած մի քանի ջրառատ գետակներ: Քասախ գետը միջին հոսանքում ունի ջրառատ և սրընթաց հոսք, հատկապես Աշտարակի և Օշականի մոտերքում, որտեղ գետի հովիտը մինչև 200 մ բարձր հասնող խոր ձոր է: Մնումը ձնանձրևային է (76 %), հորդանում է ապրիլ-հունիս ամիսներին: Գլխավոր վտակներն են Գեղարքոտը, Շաղվարդը և Ամբերդը: Ջուրը մաքուր է, նախկինում ձկնառատ էր: Քասաղ գետի վրա կառուցված է Ապարանի ջրամբարը, որի ջրերն օգտագործվում են ռոռզման նպատակով:

Ստորգետնյա ջրերը Երևան քաղաքը խմելու ջուր ստանում է 9 ստորգետնյա աղբյուրներից,

որոնք տեղակայված են, հիմնականում, քաղաքի վարչական սահմաններից դուրս: Ջուրը մատակարարվում է քաղաքին գրավիտացիոն և ճնշումային ջրատարերով: Ջրվեժ և Շարաղբուր գետերի արտաբերման կոնների հյուսիսից, հարավ-արևելքից և հարավից սահմանափակվում է համապատասխանաբար Մարի Թաղի բլրաշարի հարավային ելուստների և էրոզիոն-հոդմնահարման ռելիեֆով, որը ներկայացված է միոցենի գիպսատար խայտաբղետ առաջացումներով: Հոսքի լայնությունը կազմում է 1.0 մինչև 2.6 կմ, ջրատար հորիզոնի հզորությունը տատանվում է 4.0 մինչև 27.0 մետրի սահմաններում: Հորիզոնի նման փոփոխությունը պայմանավորված է միոցենի ջրամերժ հատվածների պալեոեկլիֆի պայմաններով, այլովիալ-այրույթովիալ նստվածքների կուտակման ինտենսիվությամբ և այլ գործոններով: Հրազդան գետի վերոդոդաեռումային նստվածքների ստորգետնյա ջրերը զբաղեցնում են նրա ծայր-արևմտյան եզրամասը, որոնք կապված են Հրազդան գետի հարավային ավազանի հետ: Հարավից նրանց սահմանն է հանդիսանում Արարատյան հարթավայրի առաջացումները:

Արարատյան գրունտային ջրերն ունեն համատարած տարածում, զբաղեցնելով մոտ 8 կմ² մակերեսը:



Նկար 3.4. Առօրգետնյա ջրերի տարածման խորությունների ցարտեզ


Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Ակադեմիական քաղաքի տարածքում ստորջրյա հորիզոնները բացակայում են:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով:



61

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



10.6. Կենսաբազմազանություն

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում, շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով:



Բուսական աշխարհ. Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսակների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառա-բույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ռոռզման սոկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն),

2. Տոմիլյար (անտառատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անտառատային բուսատեսակները, կապար ցեղերի ներկայացուցիչները: Երևանի տարածաշրջանում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից է Շտերնբերգիա շնդեղածաղկային/*Sterbergia colchiciflora* Waldst. Et Kit./, Երևցակ Վանաստուրի/*Eryngium Wanaturii* Woronov/, Շովիցիա գեղապտուղ/*Szovitsia callicarpa* Fisch./, բուխեզերա

անութային/*Asperuginoides axillaris*/, Ձագոխոտ էգիկյան/*Erysimum eginense* Bornm/,
 Նվարդակ քեարաձե/*Lepidium lyratum* L./, Մեխակ քուռի/*Dianthus cyri* Fisch./, Իշակաթնուկ
 հալեպակտկտե/*Erythronium alexandrinum* L./ և այլն: Համաձայն ԳԱԱ-ի Ա.Թախտաջանի անվան
 բուսաբանության ինստիտուտի տեղեկատվության տարածքում կարմիր գրքային
 բուսատեսակները բացակայում են:



Շուրեթերգիա շնդեղածագային Երնջակ Վանատուրի

Արագածոտնի մարզի բուսական աշխարհ: Տարածաշրջանին բնորոշ է
 կիսաանապատային և տափաստանային բուսածածկույթը: Տարածքի բուսականությունը
 ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և
 տափաստանային մոլախոտային բուսականությամբ:

Տարածաշրջանում աճում է հաճարենի, կողնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի,
 հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի
 ազգակիցները՝ ցորենը, աշոբան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան
 հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և
 այլն:

Ապարանի տարածաշրջանում առկա են Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝
 Ճավշիր պարսկական/*Opopanax persicus* Boiss- CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(ii,iii,iv)/, Վարսագեղ
 հերմաֆրոդիտ/*Callitriche hermaphrodita* L- CR B 1 ab(iii) + 2 ab(iii)/, Երևանի
 ֆլորիստիկական շրջանից/Աշտարակ/՝ Մեխակ Քուռի/*Dianthus cyri* Fisch. & C.A.Mey/ EN
 B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)/, Թափառանիկ քառոցափ- *Sedum tetramerum* Trautv./ VU* B 1 ab(iii) + 2
 ab(iii)/, Հիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica* Fomin/ EN B 1 ab(i,ii,iii,iv,v) + 2
 ab(i,ii,iii,iv,v)/, Կոտուլախոտ բրգաձև- *Linaria pyramidata* (Lam.) Spreng/ CR B 1 ab(iii,iv) + 2
 ab(iii,iv)/ վտանգված և խոցելի տեսակները և այլն:



Կենդանական աշխարհ. Երևանի տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տեղյին մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր ատղաստաթիթեռներ:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակներ և տզեր:

Երևանյան տարածաշրջանում տարածված են 22 Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները՝ Օրդուբադյան սևամարմին/*Adelphinus ordubadenisis* Reitter/, Նեղ սևամարմին/*Laena constricta* Khnzorian/, Կարելիների մուսյլ արջաթիթեռ/*Axiopoena karelimi* Menetries/, Մեղու Դեսեպտորիա/*Megachile deseptoria* Peres/, Երկարալեզու մեղու/*Tetralonia magroglossa* Illiger/, Մալիսակապոչ արծիվ /*Haliaeetus albicilla* Linnaeus/, Ասիական լայնակաև չղջիկ/*Babastella leucomelas* Grerzschmar/ և այլն:



©K.Azhahabvian

Կարելիների մուսյլ արջաթիթեռ



Մեղու Դեսեպտորիա

Հանդիպում է «Սովորական երկարաթև չղջիկը», որը գրանցված է 22 Կարմիր գրքում: Արագածոտնի տարածաշրջանի Կենդանական աշխարհ: Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաթիս, գորշուկ, եղջերու և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իծը,

որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճուլ /*Pyrrhocorax graculus*/, կովկասյան մալրեհավ (*Tetrao tokosiewiczi*), տափաստանային արծիվ (*Aquila nipalensis*), և այլն:

Տարածաշրջանում կան սողուններից՝ Կույր օձ (*Typhlops vermicularis*), Վզեղսավոր(Լյրենիս *Eirenis collaris*), Գյուրգա(*Vipera lebetina*), Կովկասյան ազամա(*Laudakia caucasica*), երկեցաղներից՝ կանաչ դոդոշ(*Bufo viridis*) կենդանատեսակները:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքի կենդանոտեսակներից՝ հայտնի են անադոնաշարավորներից՝ Գնայուկ բզեզներ(*Carabidae*), Թերթիկաբեղավորներ (*Scarabaeidae*), Սևամարմիններ (*Tenebrionidae*), Տերևակերներ(*Chrysomelidae*), Միմալեկմա ճպուռ (*Sympecma paedisca*), Սորեխ հայկական(*Gomphocerus armeniacus*), Բոուդենի ճերմակաթիթեռ(*Artogeia bowdeni*), Պոռչինսկու իշամեղու (*Bombus portshinskii* *Radoszkowsky*) և այլն:

Կարմիր գրքի կենդանատեսակներից է՝ Արագածոտնի մարզում հանդիպում են Միմալեկմա ճպուռ- *Sympecma paedisca* , Սմաքույսի մեղու- *Osmia cerinthides* F. Morawitz, հազվագյուտ տեսակները, մագուռ մեղու- *Archianthidium pubescens* Morawitz, Կարմրավուն մրջյունը- *Manica rubida*/ EN B 1a+B 2a/: Բազեանմանների կարգից՝ Գիշանգը- *Neophron percnopterus* Linnaeus/ EN A2bcde+3bcde+4bcde/ վտանգված տեսակները, Քաարարծիվ- *Aquila chrysaetos*/ VU D1/ խոցելի տեսակը, Բալբաս- *Falco c* *herrug* J. E. Gray, Հայաստանի համար անհետացող տեսակ է, որն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով, Փոքրասիական գետնասկյուռ- *Spermophilus xanthoprymnus* Bennet/ EN B2ab (ii, iii, iv) և այլն:



Միմալեկմա ճոճռան



Բալբաս

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ուստի ՀՀ Կարմիր գրանցված կենդանատեսակները և նրանց բնադրավայրերը բացակայում են:

10.7. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ պետական

սեփականություն համարվող եվ օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական տարածքի և Արագածոտնի մարզի Մասունիկ բնակավայրի համար սահմանվում են հուշարձանների ցանկերը: Հավելված 2:

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

Համաձայն ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի N 01/226 03 հուլիսի 2025թ. գրության՝ Ակադեմիական քաղաքին հատկացված տարածքում առկա են հետևյալ հանրապետական նշանակության հուշարձանները.

- Դամբարանադաշտ մթա. 2-1, բնակատեղիի արևմտյան մասում, երկաթուղու Միլիկյան կայարանից 0,5կմ հյուսիս:
- Դամբարան-1,մթա. 2-1հազ.երկաթգծից 30մ արևմուտք:
- Դամբարան-2,մթա.2-1հազ, երկաթգծից 50մ արևմուտք:
- Դամբարան-3,մթա.2-1հազ, երկաթգծից 50մ արևմուտք:
- Տարածքում առկա է նաև բնության մեկ հուշարձան՝ քարե պատերով ջրվեժ, որը կարելի է հմտությամբ ներառել կառուցապատման նախագծում:

Այժմ պեղումներ է իրականացվում ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Միլիկյան թաղամասում գտնվող բնակատեղիում՝ ըստ պեղումների հայտին կից պլան-սխեմայի (պետ. ցուցիչ՝ 1.1.2, պահպանական գոտու տարածքը՝ 1,6 հա):

Պեղումների արդյունքում բացահայտվել է քարակերտ ճարտարապետությամբ Երևանի, թերևս նաև Հայաստանի ու Հարավային Կովկասի հնագույն հուշարձաններից մեկը՝ Միլիկյան բնակատեղին: Մինչ այժմ պեղվել է ավելի քան 20՝ բոլորձն հատակագծով, զանգվածեղ քարերից կառուցված հիմնապատերով, 2-6 մ տրամագծով կացարաններ:

Պեղումների արդյունքում վանակատե գործիքներից և զենքերից զատ հայտնաբերվել են նաև վանակատի բեկոտված կտորներ, մանր ցլեպներ ու թեփուկներ, որոնք առաջացել են տեղում քարե գործիքներ պատրաստելու արդյունքում:


Քարե գործիքների պատրաստման ինդուստրիան (ներկա պահին հայտնաբերվել են շուրջ հարյուր աշխատանքային գործիքներ ու զենքեր, հարյուրավոր վանակատի բեկոտներ) բնորոշ է նախակերամիկական և կերամիկական նեոլիթի դարաշրջանին: Առանձնապես ուշագրավ է Տավրոսի լեռնաշղթայի մերձակայքում, «Էրզենի մադեն» կոչվող պղնձահանքերի մոտակայքում, Մեծ Հայքի Անգեղ գավառի «Չոյունյու թեփե» բնակատեղիում լայնորեն տարածված, մասնագիտական գրականության մեջ «չոյունյուի» տիպի նախակերամիկական գործիքի գյուտը, որը հիմնավորում է Միլիկյան բնակատեղիի նախակերամիկական նեոլիթում հիմնարկվելու մասին մեր տեսակետը:

Ճարտարապետական հորինվածքների ձևերը, քարե գործիքների տիպաբանությունը և սակավաթիվ /մի քանի բեկոր/ խեցեղենի կազմաբանությունը հիմք են ենթադրելու, որ այստեղ եղել է նախակերամիկական նեոլիթի հնավայր, որը հարատևել է նաև կերեմիկական նեոլիթի շրջափուլում:

Առանց չափազանցության կարելի է փաստել, որ գիտության համար կարևոր այս հնավայրը նոր խոսք է հայ հնագիտության համատեքստում և կարևոր նշանակություն ունի նաև Հին աշխարհի քաղաքակրթական համակարգի ակունքների բացահայտման համար:

Պահանջվում են հուշարձանի համակողմանի և պարբերաբար պեղումներ, որոնք կարող են

դառնալ միջազգային հնագիտական արշավախմբերի և ուսանողների ամառային դպրոցների հրապուրիչ վայր: Պեղումների ավարտից հետո անհրաժեշտ է պահպանել այս բացառիկ հուշարձանը:



ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

1 «Անանուն» սյունաձև քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, բազալտներ	Մբ. Սարգիս Եկեղեցու մոտ
2 «Անանուն» սյունաձև քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում բազալտներ	մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ

Արագածոտնի մարզում ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ առկա են. 23 բնության հուշարձաններ, որից 10 հատ՝ երկրաբանական, 4 հատ ջրաերկրաբանական և 4 հատ ջրագրական, 5 հատ բնապատմական հուշարձաններ:

№	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
	Երկրաբանական հուշարձաններ	
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» երոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին

10.	«Մեծ Արտենի» էքստրուդիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
11.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
12.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
13.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
14.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
15	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
16	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
17	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
18	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
	Բնապատմական հուշարձաններ	
19	«Մեծ Արտենի» էքստրուդիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
20	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
21	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
22	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
23	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

10.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

<u>Երևանի բուսաբանական այգի</u>		0.8 քկմ	1935
<u>Էրեբունի արգելոց</u>		1.2 քկմ	1981

Արագածոտնի մարզի տարածաշրջանում գտնվում է Արագածի ալպյան արգելավայրը, բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնագանգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

10.9. Սոցիալական գործոններ, սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները, բնակչություն և առողջապահական խնդիրներ.

ՌԷԳ հաշվետվությամբ ներկայացված տարածքի մոտ 90%-ը գտնվելու է Երևան քաղաքի վարչական սահմաններում, իսկ 10%-ը՝ Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրում: Համաձայն Երևան քաղաքի 2024թ. գլխավոր հատակագծի՝ Երևանի սահմանագիծը ճշգրտվել է Գլխավոր հատակագծի էլակետային տվյալների հավաքագրման ընթացքում, Կադաստրի տրամադրված նյութերից ճշգրտվել են վարչական շրջանների տարածքների մակերեսները, որով Երևան քաղաքի մակերեսը սահմանվել է 224.17 կմ²:

Ըստ 2024թ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի՝

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները են .

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the RA. %	0.7
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեկանի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	1 106.3 հազ. մարդ/ ths. Person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023 թ., % Share of city population in the total population of the RA 2023. %	37.0
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	3 318.1 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	907.6 հա/ ha

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

«Հայաստանի Հանրապետություն վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արտփիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Մեքաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Համաձայն Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ 2023թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.


- արդյունաբերություն՝ 40.9 %
- շինարարություն՝ 49.2 %
- մանրածախ առևտուր՝ 72.7 %
- ծառայություններ՝ 86.2 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է տեսանալուծությունում և

բուսաբուծությունում: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը: Համաձայն 2024թ. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ Երևան քաղաքում գործում է թվով 13430 օբյեկտ, որից առևտրի՝ 8125, հանրային սննդի՝ 2628, կենցաղային ծառայության՝ 2677, հեղուկ վառելիքի՝ 207, սեղմված բնական և հեղուկացված եռվթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետեր՝ 80, հյուրանոցային համալիր, 10 սպառողական և 14 գյուղատնտեսական արտադրանքի շուկա, 23 առևտրի կենտրոն՝ 202, հոգեհանգստի (հրաժեշտի) ծխակառարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման սրահ՝ 22:

Բնոտառողորմփոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք սպասելիվում են կապն արտաքին աշխարհի հետ:

Գծապատկեր 1. Երևանի վարչական շրջանների տարածքների տեսակարար կշիռը՝ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ



Քաղաքում գտնվում են բազմաթիվ դպրոցներ, գրադարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, Օպերայի և բալետի թատրոնը և այլ մշակութային օջախներ, մեթոդալիստներ: 2023թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող 152 դպրոցներ/141 հիմնական, 12 միջնակարգ/162 մանկապարտեզ, 5 հատ թանգարան, 3 հատ թատրոն, 19- գերատղարան, 26- երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ և այլն: Առկա են 19 տեղական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 31 առողջապահական կազմակերպություններ, որից 23-ը քաղաքապետարանի ենթակայության և այլն:

Համաձայն Երևան քաղաքի 2024-2028թթ. զարգացման ծրագրի՝ Երևանում առաջնահերթություն ունեն ծառայությունների զարգացման ոլորտը՝ հանրային սննդի կազմակերպումը, մշակույթը, հանգիստը, կրթությունը և այլն: Ամենափոքր բաժինը կազմում է գյուղատնտեսությունը, որը հիմնականում մասնագիտացված է

անասնապահության և բուսաբուծության մեջ: Զարգացման հեռանկարում նախատեսվում է ենթակառուցվածքների զարգացում, դպրոցների, նախակրթարանների, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի բարելավում, հիմնանորոգում, փողոցների, այգիների կահավորում, բարեկարգում, հին լուստոների փոխարինում նոր էներգաարդյունավետ ԼԵԴ լամպերով, կոշտ թափոնների համար եվրոպական չափորոշիչներին համապատասխան քաղաքային նոր աղբավայրի կառուցում :

Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ արտադրություններ: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ռոռգման ցանցի ընդլայնումը և բարեկարգումը:

Համաձայն զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6760 հա, որը ընդհանուր տարածքի 30%-ն է , 40%-ի փոխարեն: Կանաչապատման մակերեսից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում 906.8 հա: Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածքը կազմում է 8.3քմ, ինչը ցածր է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ցուցված նվազագույն արժեքից՝ 9 ք.մ.-ից, իսկ ցանկալի ցուցանիշը կազմում է 50 ք.մ: Աջափնյակ վարչական շրջանում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը կազմում է 356.459 հա: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական վիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, պաշտպանիչ կանաչ բուֆերային գոտիների ստեղծման և ընդլայնման անհրաժեշտություն, հասցնելով մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածքը 9քմ: Նախատեսվում է կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, էներգարդյունավետության, վերականգնվող էներգիայի կիրառմանն առնչվող միջոցառումներ՝ CO₂-ի արտանետումները օդային ավազան կրճատելու նպատակով: Այդ նպատակով Երևան քաղաքի գլխավոր հատակագծում՝ Երևան քաղաքի զարգացման միամյա և հնգամյա ծրագրերով նախատեսված են կանաչ տարածքների ընդլայնման աշխատանքներ:

Աջափնյակ վարչական շրջանի տարածքը կազմում է 2582 հա: Զբաղեցրած տարածքի մեծությամբ Աջափնյակը մայրաքաղաք Երևանի վարչական շրջաններից 4-րդն է, իսկ Երևանի վարչական շրջանների բնակչությամբ՝ 7-րդը: Աջափնյակում գտնվող կարևոր կառույցներից է Երևանի Հանրապետական հիվանդանոցը, որը Երևանի ամենամեծ հիվանդանոցն է: Աջափնյակ վարչական շրջանն իր հերթին բաժանվում է թաղամասերի՝ միկրոշրջանների՝ Վահագնի, Անաստասավան, Նորաշենի, Նազարբեկյանի, Լուկաշինի և Սիլիկյան թաղամասերի: Այս թաղամասերից Ակադեմիական քաղաքի տարածքին

արևելյան կողմից սահմանակից է Միլիկյան թաղամասը, որը հայտնի է նաև որպես «3-րդ գյուղ», իսկ նախկինում կոչվել է «Սպանդարյան»:

Արագածոտնի մարզ, Սասունիկ բնակավայր. Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, իսկ արևմուտքում պետական սահմանով՝ Թուրքիային: Համաձայն

Վիճակագրական Կոմիտեի կայք էջի՝ Արագածոտնի մարզը բաղեցնում է 2773քառ. կմ, մարզկենտրոնը՝ Աշտարակ քաղաքն է: 2024թ. տարեսկզբի դրությամբ ունի 8 համայնք, 3 քաղաք՝ Աշտարակ, Ապարան, Թալին և 118 գյուղեր: Բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում է 131.8. հազար մարդ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 218.597.2 հա, որից վարելահողերը՝ 54.299.9հա:

2023թ.-ին Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.2 %,
- գյուղատնտեսություն 9.9 %,
- շինարարություն 2.9 %,
- մանրածախ առևտուր 1.8 %,
- ծառայություններ 0.8 %:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և խմիչքների, ըմպելիքների թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան – Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը հատում է ՀՀ գլխավոր երկաթուղին: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Երևան քաղաքի հեռանկարային զարգացման շրջանակներում ճշտվել է քաղաքի հեռանկարային զարգացման ուղղությունները, բնակչության թվաքանակի փոփոխությունները: Որպես Երևան քաղաքի հատակագծային կառուցվածքի տարածական բաղկացուցիչներ ընդունվում են հատակագծային գոտիները, որոնք խմբավորվում են հիմնական հատակագծային հաղորդակցական ուղղությունների շուրջը: Դրանք են.

- Երևան-Սևան, Երևան-Արմավիր-Թալին,
- Երևան-Արտաշատ-Երասխ,
- Երևան-Աշտարակ-Ապարան հիմնական ուղղությունները,
- Երևան-Գառնի-Գեղարդ մշակութային-ռեկրեացիոն ուղղությունը:

Հատակագծային ուղղությունների առանցքներն են դառնում ագլոմերացիայի հիմնական և կենտրոնական քաղաքները կապող արագընթաց շարժման մայրուղիները:

8. Երևան քաղաքի տարածքի օգտագործման վերլուծությունը

Մասունիկ բնակավայրը գտնվում է Քասախ գետի ձախափնյա հարթավայրում՝ Աշտարակ

Գյուլից 3 կմ հարավ-արևելք գտնվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի «Մասունիկի դաշտ»

[illegible]

[illegible]

Համաձայն Առողջապահության Ազգային Ինստիտուտի 2025թ. տեղեկագրի՝ 2024թ-ին հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների թիվը(բժշկական կենտրոններ, պոլիկլինիկաներ, առողջության կենտրոններ, ծննդատներ, դիսպանսերներ) Երևան քաղաքում կազմում է 60, Արագածոտնի մարզում՝ 5: Երևան քաղաքում բժիշկների թվաքանակի բացարձակ արժեքը կազմում է 8961, միջին բուժանձնակազմը՝ 8931, Արագածոտնի մարզում բժիշկների թվաքանակի բացարձակ արժեքը կազմում է 268, միջին բուժանձնակազմը՝ 480:

2024թ. քնակչության (18 տարեկան և բարձր) շրջանում ընդհանուր հիվանդությունների(վարակիչ և մակաբուծական, նորագոյացուցություններ, հոգեկան խանգարումներ, աչքի և նրա հավելյալ հիվանդությունների հետ կապված, պարկինսոնի, ալցհեյմերի, շնչառական օրգանների, մաստղական համակարգի հետ կապված, վնասվածքների, թունավորումների և այլ հիվանդություններ) բացարձակ արժեքը կազմում է՝ Երևան քաղաքում 506702 մարդ, Արագածոտնի մարզում՝ 62097: Նույն ժամանակաշրջանի համար մանկական(0-14 տարեկան) հիվանդությունների բացարձակ արժեքը Երևան քաղաքում կազմում է՝ 108838 մարդ և Արագածոտնի մարզում՝ 18033:

Համաձայն 2024թ. Երևանի գլխավոր հատակագծի՝ Երևան քաղաքում բնակչության արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ են մատուցվում ավելի քան 110 առողջապահական կազմակերպությունների կողմից: Երևան քաղաքի բնակչության որակյալ բուժ. ծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հազեցվածությունը: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններից 15-ը գրեթե հազեցած են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, հիվանդանոցային ծառայություններից 2-ը հազեցած են, 3-ը՝ միջին հազեցվածության են: Շարունակական բնույթ ունեցող «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում բուժհաստատությունները հազեցվել են 778 անուն նոր բուժասարքավորումներով, այդ թվում՝ լաբորատոր ախտորոշիչ, գործիքային հետազոտությունների, ֆիզիոթերապևտիկ սարքավորումներ, բժշկական պարագաներ (վիրահատական սեղաններ, լամպ, գինեկոլոգիական աթոռներ և այլն) և այլ անհրաժեշտ սարքավորումներ ու պարագաներ:

Առողջապահական հիմնախնդիրներից են որոշ Կոմսյուտերային և մագնիսա-
ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային (ստնոգրաֆիայի և
մամոգրաֆիայի), կորոնոքրագրաֆիկ հետազոտությունները պետության կողմից

երաշխավորված դժվարամատչելի հետազոտությունների ցանկում հասանելի չեն հասարակության լայն շերտերի համար, ուստի անհրաժեշտ է.

- Բժշկական ծառայությունների որակի բարելավում, բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավում,
- Տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերագինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով, գույքի արդիականացում,
- Վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական և ոչ բժշկական ծառայությունների ծավալի ավելացում, վերջիններից ստացված մուտքերից աշխատակիցներին լրավճարների տրամադրում,
- Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում,
- Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում:

Անհրաժեշտ է բարելավել նաև սոցիալական ծառայությունների ոլորտը՝ խոցելի խմբերին առավել հասցեական և ժամանակին սոցիալական աջակցություն և սոցիալական ծառայություններ ստանալու նպատակով:

12. Հիմնադրությային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.

ՌԷԳ-ի շրջանականներում դիտարկվել է հիմնադրությային փաստաթղթի իրականացման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Այլընտրանք 1. Զրոյական տարբերակի դեպքում հիմնադրությային փաստաթղթի դրույթները չի իրականացվելու, ինչը ենթադրում է հետևյալ բացասական ազդեցությունները.

- Չի բարելավվելու Երևան քաղաքի ճանապարհների բեռնվածությունը, տրանսպորտային խցանումները, քանի որ չի բեռնաթափվելու քաղաքը:
- Հնարավոր չի լինելու ապահովել ուսանողների ուսուցման պայմանների, ուսուցման ընթացքում նորագույն հետազոտությունների, տեխնոլոգիաների կիրառման, ժամանակակից գիտելիքների ձեռք բերման հնարավորությունները, հետևաբար կրթական մակարդակի համապատասխանությունը միջազգային չափանիշներին:
- Կիսոլորտովի Երևան քաղաքի հեռանկարային զարգացման հնարավորությունները՝ դեպի ծայրամաս:
- Բաց կթողնվի Երևան քաղաքում գտնվող գրեթե ամայի տարածքի զարգացման ժամանակակից ինֆրաստրուկտուրայով, կանաչապատ տարածքի վերածվելու հնարավորությունը:
- Չի լինելու այլ մարզում նոր աշխատատեղերի ստեղծման, ուսուցման և կրթական ծրագրերին մասնակցելու հնարավորությունները:

- Չեն բացվի նոր աշխատատեղեր Աշտարակ համայնքում, որը կխոչընդոտի համայնքային բյուջե նոր մոտքերի ավելացմանը, համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

ԱՔ-ի կառուցման անհնարինությունը կապված է նաև ֆինանսական միջոցների բացակայության հետ, քանի որ ֆինանսական միջոցների ոչ բավարար քանակը կամ դրանց բացակայությունը կարող է հանգեցնել քաղաքի կառուցման որոշ ծրագրային դրույթների թերի՝ կամ ամբողջովին չկատարելուն, մասնավորապես.

- մետրոյի կառուցման անհնարինություն, որը կհանգեցնի տրանսպորտի ծանրաբեռնվածության ավելացմանը,
- բնակչության և ուսանողների թվաքանակի պլանային ցուցանիշից ավելացում, որը չի ապահովի ուսանողների ուսուցումը ԱՔ-ում:

ՀՀ կառավարությունը 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հանդիսանում է ԱՔ-ի կառուցման Ծրագրի պատասխանատուն է, որը 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, ուստի կառավարությունը պարտավորություն և պատասխանատվություն ունի ԱՔ-ի կառուցման նպատակով նախատեսված ֆինանսական միջոցների ապահովման, ծրագրով նախատեսված դրույթների իրականացման համար: Այդ նպատակով կառավարությունը պետք է մշակի ռազմավարական ծրագիր, հաշվի առնելով ԱՔ-ի կառուցման բոլոր հնարավոր բացասական շեղումները, դրանց լուծումները, ներառյալ ֆորս-մաժորային իրավիճակների դեպքում:

Այլընտրանք 2. Տարածքային այլընտրանք. Ակադեմիական քաղաքի կառուցման համար տարածքի ընտրությունը կատարվել է.

- Ընտրված տարածքները չեն առնչվում Երևան քաղաքի և Սասունիկ գյուղի սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, հիմնականում ամայի, անօգտագործելի, աղբակույտերով ծածկված, թույլ/գրեթե չկառուցապատված և բնակիչների կողմից չօգտագործվող տարածքներ են, մասնակի օգտագործվում են հանքեր:
- Նոր տարածքի ընտրությունը բխում է Երևան քաղաքի հեռանկարային զարգացման հնարավորությունից՝ ուղղված քաղաքի ծայրամասերը զարգացնելուն, բեռնաթափելով կենտրոնը:
- Երևան քաղաքից դուրս, այլ տարածքում, Ակադեմիական քաղաքի կառուցումը կառաջացնեի ուսանողների, համապատասխան դասախոսական կազմի, աշխատողների տեղաշարժի դժվարություն, գրեթե անհնարինություն, առաջացնելով նոր, զարգացած ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն, որը կպահանջեր ավելի մեծ ներդրումների նախատեսում:
- Ներգրավելով Սասունիկ բնակավայրի վարչական տարածքը, այն կնպաստի քաղաք-գյուղ փոխադարձ սոցիալ-տնտեսական կապվածությանը, վերջիններիս համատեղ ներդաշնակ զարգացմանը:
- Նշված տարածքն իր տեղադիրքով համապատասխանում է Ակադեմիական քաղաքի կառուցման պայմաններին և պահանջներին, որի համար հնարավոր

կղաճնա նաև մայրաքաղաքային և Երևան-Աշտարակ Մ1 մայրուղու օգտագործումը:

Այլընտրանք 3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլընտրանք. դիտարկվել է ՌԷԳ շրջանակներում հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունների իրականացում՝ ժամանակից տեխնիկական-տեխնոլոգիական լուծումներով, որը հնարավորություն կտա առավելագույնը զուգահեռել կրթությունը՝ նորարական, հետազոտական, փորձարարական մեթոդներով:

Այլընտրանք 4. Վառելիքի, Ջեռուցման, լուսավորության համակարգի այլընտրանք. տարածքի լուսավորության, շինություններում ջեռուցման և ջերմամատակարարման համակարգերի համար նախատեսել այլընտրանքային էներգիայի աղբյուրներ՝ էլեկտրաէներգիա, արևային վահանակներ, նվազագույնի հասցնելով բնական գազի օգտագործման ծավալները:

Ընտրված տարբերակի հիմնավորումը. Կատարվել են այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծություն շրջակա միջավայրի ազդեցությունների տեսանկյունից, որի արդյունքում ընտրված տարբերակն ունի բավականին առավելություններ:

Հիմնադրությային փաստաթղթով ներկայացված տարածքները բուսածածկից զուրկ չոր անապատային տարածքներ են, հիմնականում ծածկված շինարարական աղբով և այլ թափոններով: Տարածքն արդեն ենթարկվել են անտրոպոգեն ազդեցությունների: Երևան քաղաքում ներառված տարածքը նախկինում ինտենսիվ օգտագործման չի ենթարկվել, առկա են լքված հանքեր, երկաթգիծ, ճահճացած տարածք: Տարածքն ընտրվել է նաև, ելնելով Երևան քաղաքի և Աշտարակ համայնքի հեռանկարային զարգացման հնարավորություններից: Ներդրումային ծրագրի իրականացման դեպքում՝ հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունների շրջանակներում կկառուցվի Ակադեմիական նոր քաղաք:

Ծրագրի իրականացումը կնպաստի.

- Երևան քաղաքի Կենտրոնի բեռնաթափմանը:
- Բուհական կրթության որակի բարձրացմանը՝ միջազգային չափանիշներով, հնարավորություն տալով ընդգրկվել 500 միջազգային վարկանիշային ԲՈՒՀ-երի շարքում:
- Նոր և տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորությունների կիրառումը կնպաստի ուսանողների գիտական մակարդակի բարձրացմանը և գիտելիքների պրակտիկ կիրառմանը, մոտեցնելով նրանց ՀՀ տնտեսության կառավարմանը:
- Կբարձրացնի Հայաստանի Հանրապետության դերը միջազգային կրթական համակարգում, դարձնելով այն գրավիչ նաև արտասահմանյան ուսանողների ներգրավման համար:
- Երևան քաղաքի և կից գտնվող համայնքների համաչափ տարածական զարգացմանը, հողային տարածքների կանոնավոր զարգացմանը:
- Տարածքի և մոտակա բնակավայրերի բնակիչների միջև փոխադարձ ինտեգրման և համագործակցության զարգացմանը:
- Աշտարակ համայնքում և կից համայնքներում նոր աշխատատեղերի

ստեղծմանը:

- Համայնքի և կից գտնվող բնակավայրերի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը:
- Ամայի, աղբակույտերով լի չօգտագործվող տարածքը կվերածվի գեղեցիկ բարեկարգ տարածքի՝ խնամված կանաչ գոտիով, գրավիչ լանդշաֆտային փոփոխություններով:

Համեմատության արդյունքները ներկայացված են աղյուսակում	Կիրառվող քաղաքականություն՝ Այլընտրանք 1	Այլընտրանք 2	Այլընտրանք 3	Այլընտրանք 4	Ընտրված տարբերակը
	Որևէ պլան չի իրականացվել/գրոյական տարբերակ	Ծրագրի դրույթների իրականացումը այլ տարածքների վրա	Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլընտրանք:	Տարածքի ջեռուցումն , կենցաղադային և արտադրական կարիքների բավարարումը իրականացնել այլընտրանքային եղանակով նվազագույնի հասցնելով բնական գազի օգտագործումը:	
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ	-	-	-	-	+

	-Երևան քաղաքը չի բեռնաթափվի: -ՀՀ-ում չի ապահովվի կրթական մակարդակի համապատասխանությունը միջազգային չափանիշներին, հետևաբար Բուհական կրթության միջազգային հեղինակությունը չի ապահովվի: -Չի ստեղծվի ժամանակակից հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր: -Կիսոչընդոտվի Երևան քաղաքի հեռանկարային զարգացման հնարավորությունները՝ դեպի ծայրամաս: -Չի իրականացվի Երևան քաղաքում գտնվող գրեթե ամալի տարածքի զարգացումը ժամանակակից ինֆրաստրուկտուրայով, կանաչապատ տարածքի վերածվելու հնարավորությունը:	-Տարածքի հիմնական մասը ամալի է, որոշ մասերում տեղակայված են մեծ քանակությամբ աղբակույտեր, կան շահագործված և լքված հանքեր, չկան բնակելի տներ, բնակիչներին պատկանող հողամասեր: -Նպաստավոր դիրք ունի ենթակառուցվածքների զարգացման համար: -տարածքի ընտրությունը բխում է Երևան քաղաքի հեռանկարային զարգացման հնարավորությունից, որն ուղղված է զարգացնել քաղաքի ծայրամասերը, բեռնաթափելով կենտրոնը: -Երևանի նման խիտ բնակեցված քաղաքում նման այլ տարածքի ձեռքբերումը ուղղակի հնարավոր չէ: -Մարզերում ծրագրի իրականացումը ևս մեծ դժվարություններ կարող է ստեղծել ուսանողության և վարչական ռեսուրսի	-Տեխնիկական լուծումները հնարավորություն են տալիս առավելագույնը զուգահեռել կրթությունը՝ հետազոտական, փորձարարական մեթոդներով: Լուծումները հնարավորություն են տալիս պահպանել նաև սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող գործունեությունների սանիտարապաշտպանիչ գոտիները:	-Տաք ջրի սպասարկումը և ջերմամատակարարումը իրականացնել հիմնականում էլեկտրական, և արևային կայանների օգնությամբ:	տարբերակը կիրառելի տարբերակ է, առավել ևս եթե այն զուգահեռվի և ընդունվի նաև 3-րդ այլընտրանքը: Ծրագրի իրականացումը կնպաստի. -Երևան քաղաքի Կենտրոնի բեռնաթափմանը, տրանսպորտի քանակի և տեղաշարժի նվազմանը, հետևաբար օդային ավազան արտանետումների կրճատման: -Նոր տեխնիկա-տեխնոլոգիայի կիրառումը նոր ենթակառուցվածքների, մասնավորապես մետրոյի կառուցումը, կնպաստի օդային ավազան արտանետումների կրճատմանը:
--	--	--	--	--	--

		տեղափոխման առումով, նկատի ունենալով ենթակառուցվածքների բացակայությունը: -Օրագիրը ավելի մեծ ծախսեր և ներդրումներ կպահանջի:			
ՕՂ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒ- ԹՅՈՒՆ	-	-	+	+	+

	-Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը ՀՀ-ում իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ԶՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ. ԶՕ-522-Ն) ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով: -ՀՀ-ում, հատկապես մեծ քաղաքներում, լուրջ խնդիր է հանդիսանում օդի աղտոտվածությունը, որը կապված է տրանսպորտային միջոցների մեծ կուտակումների հետ: - Լքված կամ կիսաշահագործվող հանքերը, թափոնակույտերի առկայությունը նպաստում է Երևան քաղաքում մթնոլորտային օդում փոշու, քանակի և այլ նյութերով աղտոտվածության ավելացմանը:	-Նոր տարածքների օտարումը, կառուցապատումն իր հետ բերելու է նոր ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն՝ առավել բեռնավորված և բնակելի տարածքներին մոտ տարածքներում շինարարական աշխատանքների կատարում, ինչը կենթադրի մթնոլորտային օդի վրա ազդեցություններ: -Դրանք կատարվելու են փուլեր, - Կավելանա ճանապարհների վրա ավտոմեքենաների տեղաշարժը, որը կհանգեցնի օդային ավազան արտանետումների ավելացմանը:	-Տարբերակը հնարավորություն է տալիս ուսումնական պրոցեսը առավել զուգակցել զործնական, փորձարարական, լաբորատոր աշխատանքներով:	-Միայն կաթսայատներով ջերմամատակարարման իրականացումը և տաք ջրի սպասարկումը կնպաստի օդի աղտոտվածության զգալի ավելացմանը, ինչն իր հերթին կազդի նաև մարդու առողջության վրա: -Այլընտրանքային աղբյուրներից էներգիայի ստացումը ակադեմիական քաղաքում կապահովի սահմանային թույլատրելի նորմերից զգալի ցածր աղտոտվածություն:	Ֆինանսական տեսանկյունից ելնելով այս տարբերակն ավելի նախընտրելի է, քանի որ բոլորը կտեղակայվեն հարակից, մոտ տարածքներում, որոշակիորեն կավելանա մթնոլորտային աղտոտվածությունը շինարարության փուլում, և բոլոր միջոցառումները իրականացնելու և մաքրող սարքավորումները տեղադրելու պարագայում ազդեցությունները կլինեն նորմայի սահմաններում: Կլիմայի վրա ազդեցությունները արտանետումների կրճատման, մաքրող սարքավորումների ներդրման արդյունքում կլինեն նվազագույնը:
ԿԵՆՄԱԲԱԶՄԱԶ ԱՆՈՒԹՅՈՒՆ	-	0	+	+	+

	-Տարածքը գրեթե ամայի է, մասնակի կառուցապատված, բացակայում է կենսաբազմազանությունը: -Ուստի ծրագրի չիրականացման դեպքում քաղաքային կենսաբազմազանության զարգացում չի լինելու, տարածքը կշարունակի մնալ անբարեկարգ:	Տարածքը ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, որի պատճառով բացակայում է բուսատեսակները և կենդանատեսակները: - Տարածքը չի առնչվում բնակավայրերի հատուկ պահպանվող տարածքների, կանաչ գոտիների հետ:	-Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, հնարավորություն կստեղծի քաղաքային նոր միջավայրի ստեղծմանը հնարավոր նոր կանաչ տարածքների և պուրակների ձևավորմանը:	Այս տարբերակի ընտրությունը չի ենթադրում կենսաառևտրային վրա որևէ ազդեցություն:-	- Աղբակույտերով, լճված հանքերով, չբնակեցված տարածքներում գործունեությունների իրականացումը կենսաբազմազանության վրա նոր ազդեցություններ չի ենթադրում: -Կնպաստի Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի քաղաքային միջավայրի բարելավմանը: -Կնպաստի նոր քաղաքային կենսաբազմազանության ձևավորմանը և հետագա զարգացմանը: - Ամայի և չօգտագործվող տարածքը կվերածվի գեղեցիկ բարեկարգ տարածքի՝ խնամված կանաչ գոտիով, գրավիչ լանդշաֆտային փոփոխություններով:
ՀՈՂ, ԵՐԿՐԱԲԱ-ՆՈՒԹՅՈՒՆ	-	-/+	0/+	+	+

	- Հանքերի անկանոն շահագործումը կնպաստի հողային ռեսուրսների հետագա դեգրադացմանը, էռոզիոն պրոցեսների արագացմանը: -Տարածքում կգերիշխեն և կավելանան թափոնակույտերը, լցված վտանգավոր շինարարական և արտադրական թափոններով:	-Ներկայացված տարածքը հնարավորինս աղտոտված և աղբոտված է: -Հողերի օտարումը կկատարվի ՀՀ կառավարության հաստուկ ծրագրով, ճանաչելով տարածքը պետական գերակա շահ:	-նոր տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները ընտրված տարածքում հողի նոր աղտոտվածության օջախներ չեն առաջացնի:	Այլընտրանքային էներգիայի աղբյուրների, մասնավորապես արևային էներգիայի օգտագործման, արևային վահանակների տեղադրումը կնպաստի հողային ռեսուրսների նպատակային, խնայողական օգտագործմանը: Այս տարբերակի ընտրությունը չի ենթադրում հողի լրացուցիչ ծանրաբեռնվածություն կամ աղտոտվածություն:	- Կնպաստի Երևան քաղաքի և կից գտնվող համայնքների համաչափ տարածական զարգացմանը, հողային տարածքների կանոնավոր զարգացմանը: -Կհանգեցնի Հողային ռեսուրսների ճիշտ և կանոնակարգված կառավարմանը:
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱԶՐԵՐ	0	-	0/-	+	0/+:
	-Ջրերի ջրային ռեսուրսների աղտոտումը անօրինական աղբավայրերի թափոնների պատճառով խնդիր է բոլոր գետավազաններում: -Տարածքում առկա է Քասախ-Էջմիածին ջրանցքը:	-Կկառուցապատվեն նոր տարածքներ, որոնք կբերեն նոր ջրային ռեսուրսների ներգրավմանը: - Կարող են առաջանալ ստորերկրյա ջրային հոսքերի հնարավոր խաթարումներ : - կառուցապատման ընթացքում կարող են վնասվել տարածքում առկա ջրանցքը հետևաբար խաթարել ջրային հոսքը	-Ճանապարհների և ավտոմեքենաներով տեղաշարժի ավելացումը հնարավոր է բերի մակերևութային ջրերի աղտոտմանը՝ փոշու և ավտոմեքենաների արտանետումների արդյունքում: -Հնարավոր կդարձնի Քասախ-Էջմիածին ջրանցքի, Մերձավանի պատկանող ոռոգման փակ ցանցի և	-առաջավոր տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների կիրառումը կնպաստի ջրային ռեսուրսների տնտեսմանը, հարակից տարածքների ջրային ռեսուրսների աղտոտման նվազմանը, կապված օդի և հողի աղտոտվածության նվազեցման հետ:	Գործունեությունների կենտրոնացումը և մաքրման կայանների ներդրումը զերծ կպահի ջրային ավազանները լրացուցիչ աղտոտումից և աղբոտումից: Սակայն սա տեղի կունենա միայն եթե գործունեությունները իրականացվեն միջազգային լավագույն փորձի ԵՄ պահանջների համաձայն՝ կանխելով մակերևութային ու ստորգետնյա ջրային ռեսուրսների աղտոտումը:

			Մասունիկի ոռոգման ներտնտեսային ցանցի, նոր կառուցվող ջրանցքի վնասումը, ջրային ռեսուրսների աղտոտումը:		
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ	-	-	-	+	+
	-Բնակչության թիրախային խմբերի հիվանդացության վերլուծություններ չեն իրականացվում, -Բնակչության թիրախային խմբերում հիվանդացության և գործոնների միջև պատճառահետևանքային կապը հաստատող հետազոտություններ և/կամ մշտադիտարկումներ չեն իրականացվում:	-Ծրագրի իրականացումը կընդգրկի նոր տարածքներ, կենթադրի նոր ազդեցություններ, ինչն էլ շղթայի ավարտին զգալի ազդեցություն կարող է ունենալ մարդու առողջության վրա:	-Հիմնական ազդեցությունը ենթադրվում է շինարարության փուլում, արտանետումներ, աղմուկի մակարդակի բարձրացում, հնարավոր վիբրացիա, ինչը ցանկացած տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների պարագայում անխուսափելի է:	-Այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառումը, գազի ծախսի նվազեցումը էականորեն կնվազեցնի մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցմանը, և իր հերթին մարդու առողջության պահպանմանը:	-Ուսումնական նման համակարգի ներդրումը, բուհերի կենտրոնացումը և միջոցառումների նախատեսումը առավել արդյունավետ է և կնպաստի միջազգային չափանիշներով կրթական համակարգի ձևավորմանը և կայացմանը: - Ուսանողները կսովորեն ավելի բարեկեցից և մարդու առողջության համար ավելի նպաստավոր և մատչելի պայմաններում: -Բուհական կրթության որակի բարձրացմանը միջազգային չափանիշներով, հնարավորություն տալով ընդգրկվել 500 միջազգային վարկանիշային ԲՈՒՀ-երի շարքում: Նոր և տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորությունների կիրառումը կնպաստի ուսանողների գիտական մակարդակի բարձրացմանը և գիտելիքների պրակտիկ

					կիրառմանը, մոտեցնելով նրանց ՀՀ տնտեսության կառավարմանը: -Օրագրով նախատեսվող կառուցապատումը կատարել ատաղճորդվելով հանրային ատոդոլոյան և անվտանգոյան ապահովման պահանջներից, նախատեսվում են արտակարգ իրավիճակներին համապատասխան միջոցառումներ՝ ապաստարան թաքստոցներ:
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	-	-	+	+	+
	-Տարածքը նույն վիճակում թողնելը սոցիալական կամ տնտեսական որևէ դրական ազդեցություն չի կարող ենթադրել: -Չեն լինի լրացուցիչ ներդրումներ՝ ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը: -Երևան քաղաքը կմնա նույն ծանրաբեռնված վիճակում: -Հանրապետության կրթական համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում բնակչության միջազգային չափանիշներով կրթական համակարգ: Կիսյնդոտվի Աշտարակ համայնքի զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, համայնքի	Տարածքի ոչ նորմալ օգտագործումը, հիմնականում բացիթողի վիճակը, լքված հանքերի, շինադբով և այլ թափոններով կուտակումները կարող են առաջացնել հողային ռեսուրսների վտանգավոր աղտոտվածության, որը կարող է առաջ բերել մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ:	Շինարարության և շահագործման փուլերում կբացվեն երկարաժամկետ բազմաթիվ աշխատատեղեր, որոնցում կներգրավվի և մայրաքաղաքի և մարզերի բնակչությունը: Աշխատատեղերով պայմանավորված կբարձրանա բնակչության կենսամակարդակը, կբարելավվի սոցիալ տնտեսական վիճակը:	Այս տարբերակի ընդունումը ենթադրում է բնակչության համար մաքուր միջավայրի ձևավորում:	-Տարածքում նոր ենթակառուցվածքների, նոր աշխատատեղերի ստեղծում, համայնքում ներդրումների իրականացում: -Կնպաստի տարածքի և մոտակա բնակավայրերի բնակիչների միջև փոխադարձ ինտեգրման և համագործակցության զարգացմանը: -Աշտարակ համայնքում և կից համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծմանը: -Համայնքի և կից գտնվող բնակավայրերի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը

	սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը:				
Պատմամշակութային Ժառանգություն: /Միլիկյան բնակատեղի/	+/-	+/-	+	-	+
	Տարածքը նույն վիճակում թողնելը մի կողմից կարող է բացասական ազդեցություն ունենալ բնակատեղիի վրա, նկատի ունենալով շարունակական անփայլ և անխնամ վերաբերմունքը, աղբակույտերի ավելացումը, քարհավաքման գործընթացները: Մյուս կողմից վերահսկողության սահմանման և շարունակական պեղումների իրականացման պարագայում, հնագիտական շերտերը կամբողջացվեն և կպահպանվեն պատկան մարմինների հսկողությամբ:	Նույն գրոյական տարբերակի հիմնավորումն է:	Նոր տեխնիկա- տեխնոլոգիական լուծումների ներդրումները հնարավորություն կտա հանրությանը ծանոթանալու բնակատեղիի պատմությանը, մշակութային արժեքի ճանաչողական ուսումնասիրությանը, հնարավորություն տալով ՀՀ-ում գրոսաշրջության զարգացմանը:	Տարբերակի փոփոխությունները ազդեցություններ առաջացնի: նոր չեն	Շարունակական պեղումների իրականացման պարագայում, համապատասխան հսկողությամբ հնագիտական շերտերը պետք է ինտեգրել նախագծային լուծումներում, դարձնել միջազգայնորեն ճանաչելիություն ունեցող գրոսաշրջության վայր, չխաթարելով դրանց ամբողջականությունը և պահպանությունը:

Ներկայացված ռազմավարական այլընտրանքները համեմատվել են իրենց հնարավոր բնապահպանական և առողջապահական հետևանքների տեսանկյունից: Ակնկալվող փոփոխությունը մատնանշելու համար օգտագործվել են հետևյալ նշանները.

+ ավելի լավ

0 – նույնը

– ավելի վատ

+/- դրական և բացասական ազդեցություններ:

13. Հիմնադրությամբ փաստաթղթի նախագծի դրույթների գործողության իրականացման և չիրականացման դեպքերում շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, այդ թվում՝ անդրսահմանային.

Հիմնադրությամբ փաստաթուղթը միտված է Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրում Ակադեմիական քաղաքի հիմնադրմանը, որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական միջավայրի ապահովման եղանակ: Քաղաքի կառուցումը կհանգեցնի շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության հետ կապված ազդեցությունների առաջացմանը, որոնք կապված կլինեն.

- մթնոլորտային օդի աղտոտման՝ օդային ավազան արտանետումների միջոցով,
- հողերի աղտոտման՝ կոշտ կենցաղային թափոններով,
- արտադրական և կենցաղային թափոնների առաջացման, կառավարման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- աղմուկի և թրթռումների ավելացման,
- մարդու առողջության և անվտանգության:

ՌԷԳ հաշվետվության շրջանակներում շրջակա միջավայրի բաղադրիչների ազդեցությունների գնահատման համար հիմք են ծառայել Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, ոլորտին առնչվող կառավարության որոշումները, Առողջապահության նախարարի հրամանները և այլ նորմատիվային փաստաթղթերը:

13.1. Օդային ավազան.

Մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներից:

Հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունների իրականացման շրջանակներում, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում կլինեն օդային ավազան հնարավոր արտանետումներ.

- շինությունների քանդման, ապամոնտաժման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումներ,
- շինարարական տեխնիկայի գործողության արդյունքում արտանետվող վնասակար արտանետումներ,
- բաց հանքավայրերի տարածքներից և շինարարական այլ գործողություններից՝ փոշու տեսքով,
- Մեծածավալ շինարարության հետ կապված կվատթարանա երթևեկությունը նոր և գոյություն ունեցող ճանապարհներով:

ԱՔ-ի օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն կարող են ունենալ Երևան քաղաքում և կից տարածքներում գործող հանքերը, որոնցից Աջափնյակի հանքերը պատկանում են ոչ մետաղական հանքերի տեսակին: Հանքահումքային ռեսուրսների արդյունահանումը միշտ ուղեկցվում է զգալի տարածքների, բնական միջավայրի այլ բաղադրիչների խախտմամբ (հողեր, կենսաբազմազանություն, մակերեսային և ստորերկրյա ջրեր): Այդ իսկ պատճառով էլ

հանքահումքային ռեսուրսների օգտագործման մեջ կարևոր տեղ է գրավում հանքավայրերի ռեկուլտիվացիան (վերականգնումը): Համաձայն երկրաբանական ֆոնդի տեղեկատվության տարածքում գործող հանքավայրերի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքներ ստացել են որոշ ընկերություններ, իսկ որոշ հանքավայրերի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքներ չկան: Բացի հանքարդյունաբերությունից Ակադեմիական քաղաքի անմիջապես տարածքում առկա են գործող այլ ձեռնարկություններ:

Հնարավոր արտանետումները պետք է վերահսկվեն և կրճատվեն համապատասխան միջոցառումների կիրառմամբ:

Շահագործման փուլում օդային ավազան հնարավոր արտանետումները կլինեն նվազագույն՝ պայմանավորված այլընտրանքային էներգիայի աղբյուրների նախատեսմամբ: Հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործողությունների կատարման շրջանակներում նախատեսվում է ջեռուցման, ջերմամատակարարման համակարգերի կառուցում, որոնք նվազագույնի կհասցնեն գազի օգտագործումը, հետևաբար օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների քանակը: Նախատեսվում են արևային էներգիայի օգտագործում, արևային վահանակների կառուցում, որը հիմնականում կապահովի Ակադեմիական քաղաքի ջեռուցման և տաք ջրամատակարարման խնդիրների լուծումները:

Կլիմա. հիմնադրությային փաստաթղթով նախատեսվող գործողությունների շրջանակներում չեն նախատեսվում այնպիսի գործունեություններ (կաթսայատների կառուցում, արտադրություններ և այլն), որոնք կարող են ունենալ ջերմոցային գազերի արտանետումներ, հետևաբար քաղաքի կառուցումը արդիական տեխնոլոգիաներով չի հանգեցնի Կլիմայի փոփոխությունների՝ բացասական առումով:

13.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություններ կարող են ունենալ.

- շինարարական և արտադրական հոսքաջրերը,
- թափոնների ոչ բավարար կառավարումը,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների աշխատանքի արդյունքում յուղերի հնարավոր արտահոսքը,
- բաց հանքերի անխնամ և բացիթողի վիճակը:

«ԳԵՈՌԻՄԿ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ-ի կողմից կատարվել է ՌԷԳ շրջանակներում դիտարկվող տարածքի ուսումնասիրություն, համաձայն որի տարածքում առկա է սահմանափակ տարածված հողաբուսաշերտ՝ կավավազային կազմի, խճի պարունակությամբ: Նախատեսվող գործողությունների շրջանակներում պետք է առաջնորդվել բուսահողի օգտահանման, պահպանման ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի պահանջներով:

Տարածքի ուսումնասիրության արդյունքում սողանքների և էրոզիայի տարածքների բացահայտումը և ընդգծումը կնպաստի դրանց նվազեցման և վերացմանն ուղղված նպատակային գործողությունների իրականացմանը, ինչն էլ կնպաստի հողի որակի բարելավմանը:


13.3. Մակերևութային և ստորգետնյա ջրեր.

Մակերևութային և ստորջրյա ջրերի աղտոտումը պայմանավորված է մասնավորապես՝ արդադրական կեղտաջրերի, տարբեր բնույթի տնտեսություններից չմաքրված ջրերի, չարտոնված աղբավայրերի և գյուղատնտեսական ոլորտի (կենդանական թափոններ, թունաքիմիկատներ և քիմիական նյութեր) և նավթամթերքների արտանետումներով և թափոններով:

Երևան քաղաքում, ինչպես նաև Աջափնյակ համայնքում մաքրման կայանի, ինչպես նաև արտադրական տարածքներում լուրջ մաքրման կայանների բացակայության պատճառով տնտեսակենցաղային հոսքաջրերը առանց կենսաբանական մաքրման թափվում են Հրազդան գետը: Մակերևութային ջրերի աղտոտվածությանը նպաստում են անձրևաջրերի հավաքման համակարգի բացակայությունը, տնային տնտեսությունների սահմանափակ կոյուղու ծածկույթը հանգեցնում է շրջակա միջավայրի մշտական աղտոտման և ջրային ռեսուրսներից հիվանդությունների տարածման ռիսկերի:

ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը՝ գետերը: Առկա է Քասախ- Էջմիածին ջրանցքը, ինչպես նաև կառուցվող Նոր Դավա ջրանցքի շարունակությունը, Մերձավանին պատկանող ոռոգման փակ ցանցը և Սասունիկի ոռոգման ներտնտեսային ցանցը, որոնց վերաբերյալ համապատասխան պատկան մարմինների հետ կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Համաձայն կատարված երկրաբանական ուսումնասիրությունների՝ տեղամասում գրունտային ջրերը տեղակայված են 140 մետր խորության վրա: Ուստի մակերևութային և գրունտային ջրերն անմիջական ազդեցության չեն ենթարկվելու:



ԱՔ-ի տարածքում ջրահոսքերի և ջրահավաքների կառուցման ընթացքում պետք է հաշվի առնել վերջիններիս սանիտարական պահպանման գոտու սահմանները, ելնելով բնական, կլիմայական և հիդրոլոգիական պայմաններից, ինչպես նաև ապահովել բնակչության խմելու ջրի և կոյուղու ՀՀ-ում գործող սպասարկման նորմատիվային պահանջները:

Կեղտաջրեր. ՌԷԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունների իրականացման դեպքում անհրաժեշտ է կենտրոնացված կամ ըստ կառույցների մաքրման կայանների տեղադրում՝ մակերևութային և գրունտային ջրերի աղտոտման բացառման նպատակով: Մաքրման կայանից դուրս եկող հոսքաջրերի բնութագիրը՝ ԹԿՊ, ազոտական, քիմիական այլ նյութերի և միացությունների պարունակությունը հոսքաջրերում պետք է համապատասխանի ՀՀ-ում գործող ԹՄԱ-ի չափաքանակների նորմատիվային պահանջները: Մաքրման կայանից դուրս եկող

ջրահոսքերի օգտագործումը նպաստում է ջրային էկոհամակարգերի, ջրային ռեսուրսների վերօգտագործմանը, խնայողությանը, կայունության պատշաճ օգտագործմանը: Նպաստում է մակերևութային, ստորերկրյա ջրերի, հողային ռեսուրսների պաշտպանություն և աղտոտվածության նվազեցմանը:

13.4. Կենսաբազմազանություն.

Ծրագրով իրականացվող տարածքի բնական լանդշաֆտը չոր տափաստանային՝ հազեցած կիսաանապատների տարրերով: Տարածքի որոշ հատվածներ արոտավայրեր են, վարելահողեր, այլ հողատեսքեր: Ծրագրով նախատեսված տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, այժմ տարածքի մի մասը չի օգտագործվում, մի մասը կառուցապատված է, որոշ հատվածներ աղբոտված տարածքներ են:

Բուսական աշխարհ. Տարածքը երկար տարիներ գտնվում է անտրոպոգեն ազդեցությունների գոտում, շահագործվել են հանքավայրեր, հիմնականում բացակայում են ծառերը և ծառաթփային բուսականությունը: Համաձայն ԳԱԱ-ի Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տեղեկատվության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները: Տարածքում առկա են օշինդրա-էֆեմերային բուսատեսակները, կապար ցեղերի ներկայացուցիչները:

Կենդանական աշխարհ. տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները, բնադրավայրերը: Ծրագրով նախատեսված գործունեությունների շրջանակներում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր առկա կենդանատեսակներն իրենց տեղաշարժման հնարավորությամբ կտեղափոխվեն այլ առավել անվտանգ միջավայր:

Ծրագրով նախատեսված դրույթների իրականացման ընթացքում կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

13.5. Թափոններ. Հանրապետությունում թափոնների կառավարման բարելավումը ազգային բնապահպանական և տարածաշրջանային զարգացման մարմինների մակարդակով առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ընդհանուր առմամբ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

- Թափոնների առաջացման, վերամշակման և վերացման վերաբերյալ ընդհանուր հիմնավորված համակարգի բացակայություն:
- Փոքր անօրինական աղբավայրերի առկայություն և կանաչ տարածքների ու գետերի աղտոտում թափոններով:
- Արդյունաբերական, գյուղատնտեսական և կենդանական թափոնների հավաքման և մշակման տեխնոլոգիաների սահմանափակ կիրառում:
- Վտանգավոր թափոնների տեղակայման համար պոլիգոնների բացակայություն:

Ծրագրով նախատեսվող գործունեությունների շրջանակներում հնարավոր առաջացող թափոնատեսակներն են.

- Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ(ծածկագիր՝91200601 01 00 4),
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4),
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5),

- տարածքում առկա հանքանյութեր, տարատեսակ վտանգավոր թափոններ,
- նախատեսվող գործունեություններից առաջացող տարբեր վտանգավորության դասի այլ թափոնատեսակներ:

ՀՀ-ում դեռևս չի ուսումնասիրվել թափոնների անկայուն կառավարման վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա, սակայն ակնհայտ է, որ գոյություն ունեցող աղբավայրերը կարող են լուրջ վտանգ ներկայացնել ստորգետնյա ու մակերևութային ջրերի, հողի ու օդի աղտոտման համար: Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում իրականացվող գործունեությունների իրականացման փուլում, անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել թափոնների կառավարումը, որպեսզի ունենալ նվազագույն ազդեցություն, ինչպես նաև չնպաստել համայնքի աղբավայրերի լրացուցիչ ծանրաբեռնվածության ավելացմանը, որը կարող է վտանգել բնակչության առողջությանը: Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում դիտարկվում է ՌԷԳ փաստաթղթով նախատեսվող գործողությունների իրականացման ընթացքում/շինարարության և շահագործման փուլեր/ տարբեր դասի վտանգավոր թափոնների ճշգրիտ կառավարում՝ թափոնների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կանխարգելելու նպատակով: Թափոնների կառավարումը պետք է կատարել համաձայն՝ 2004թ. «Թափոնների մասին», 2011թ. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքները ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:

Կառուցապատողի կողմից պետք է կատարվի թափոնների փաստացի քանակների հաշվառում համաձայն՝ ՀՀ կառավարության 14.09.2006թ. N1343-Ն որոշման ապահանջների: Վտանգավոր թափոնների վնասազերծումը պետք է կատարել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

13.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի N 01/226 03 հուլիսի 2025թ. գրության՝ Ակադեմիական քաղաքին հատկացված տարածքում առկա են հետևյալ հանրապետական նշանակության հուշարձանները.

- «ԲՆԱԿԱՏԵՂԻ» մթա 2հազ, Սիլիկյան թաղամաս, երկաթուղու Սիլիկյան կայարանից 2,5-3կմ հյուսիս, «Դեմեր» վայրում:
- «ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇ» մթա. 2-1, բնակատեղիի արևմտյան մասում, երկաթուղու Սիլիկյան կայարանից 0,5կմ հյուսիս:
- «Դամբարան»-1, մթա. 2-1հազ. երկաթգծից 30մ արևմուտք:
- «Դամբարան»-2, մթա. 2-1հազ, երկաթգծից 50մ արևմուտք:
- «Դամբարան»-3, մթա. 2-1հազ, երկաթգծից 50մ արևմուտք:
- Տարածքում առկա է նաև բնության մեկ հուշարձան՝ քարե պատերով ջրվեժ, որը կարելի է հմտությամբ ներառել կառուցապատման նախագծում:

Ակադեմիական քաղաքի ծրագրի շրջանակներում նախատեսված շենքերի կառուցապատման տեղամասերում հուշարձանների հնարավոր առկայության դեպքում, անհրաժեշտ կլինի կատարել պեղումներ, դամբարանների տարածքը կարելի է կառուցապատել, եթե դրանք արժեքավոր ճարտարապետական կառույցներ չեն:

Ինչ վերաբերում է հայտնաբերված բնակատեղիին, այդ տարածքում անհրաժեշտ է բացառել կառուցապատումը, այն պետք է լիարժեք ուսումնասիրել, պահպանել և ինտեգրել ճարտարապետական լուծումներում:

ԱՎԱՂԵՍԻԱԿԱՆ ԶԱՂԱԹԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳՅՈՒ ՆԱԽԱԳԻԾ
 ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳՅՈՒՄ
 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
 ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ
 LOCATION OF PRESERVATION ZONES FOR HISTORICAL AND CULTURAL MONUMENTS



Ելնելով այն համեզմանքից, որ տարածքում հնագիտական հետազոտությունները և պեղումները շարունակվելու են նաև 2026 թ. և միգուցե նաև հետագա տարիներին, ապա հետքավոր է, որ քաղաքի տարածքում բացահայտված արժեքավոր հուշարձանների պահպանման և միջավայրի ու կառույցների հետ ինտեգրման համար անհրաժեշտ լինի որոշակի փոփոխություններ և լրամշակումներ կատարել նաև Ակադեմիական քաղաքի գլխավոր և մանրամասն հատակագծման նախագծերում:

Ծրագրում անհրաժեշտ է նաև փաստագրել, որ Ակադեմիական քաղաքի տարածքում փաստագրված արժեքավոր պատմամշակութային արժեքների հետագա պահպանման և նախատեսվող կառույցների հետ ինտեգրման համար նախապես պետք է կատարվի այդ հուշարձանների ամրակայման աշխատանքներ, որոնց առաջադրանքները, էսքիզային ու աշխատանքային նախագծերը և ամրակայման աշխատանքները պետք է իրականացնեն համապատասխան արտոնագրված և լիցենզավորված մասնագետների և կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով ԿԳՄՍ նախարարության հետ:

13.7 Արտակարգ իրավիճակներ, հաշվետվության շրջանակներում վեր են հանվել հետքավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացումը, որոնք կտպված են.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտառոտի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Ծրագրի իրականացման տարածքի համար «ԳԵՈՂԻՄԿ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ-ի կողմից կատարվել են ինժեներա-երկրաբանական հետազոտություն, համաձայն որի

տարածքում բացակայում են սողանքային երևույթները, քարաթափությունը: Տարածքը հիմնականում բարենպաստ է շինարարության համար:

Ծրագրի դրույթներով նախատեսվող գործունեությունների շրջանակներում պետք է հաշվի առնել կատարված ուսումնասիրությունների արդյունքները, եզրակացությունը՝ տարածքի տարբեր հատվածներում արագացումների արժեքները, շինարարության համար անբարենպաստ տեղամասերը, պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, կիրառել համապատասխան բնապահպանական միջոցառումներ:

13.8 Աղմուկ. թրթռում. քաղաքի բնակիչների վրա հատկապես անբարենպաստ ազդեցություն ունի աղմուկը, որն առաջացնում է ակուստիկ զրգոմ, վնասակար ազդեցություն թողնելով կենտրոնական նյարդային համակարգի վրա: Ծրագրով նախատեսվող տարածքը գտնվում է կից տրանսպորտային երթևեկելի գոտուն, իսկ բուն տարածքում առկա է աղմուկ առաջացնող գործունեություններ՝ հանքավայրեր: ԱՔ-ի կառուցապատման ընթացքում՝ շինարարության և շահագործման փուլերում պետք է հաշվի առնել ՀՀ-ում գործող աղմուկի և թրթռումների մասին սահմանված օրենսդրության պահանջները: Հատկապես շահագործման փուլում արտադրական շինություններում պետք է նախատեսել արդիական առաջադեմ տեխնոլոգիաներ, որոնց կիրառումը կնվազեցնի աղմուկի և թրթռումների մակարդակը:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Թրթռումների մակարդակը պահպանելու համար պետք է առաջնորդվել ՀՀ Առողջապահության նախարարի 2006թ. մայիսի 17-ի N533-Ն որոշման նորմերով:

Ծրագրի իրականացման ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում կլինի ծրագրով նախատեսված գործունեությունների իրականացման շինարարության փուլում՝ կապված շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվող գործունեությունների փուլերում համապատասխան միջոցառումների կիրառմամբ անհրաժեշտ է պահպանել աղմուկի և թրթռումների մակարդակը ՀՀ-ում գործող նորմերի պահանջներին համապատասխան:

13.9 Մարդու առողջություն և անվտանգություն. մարդու առողջության համար պոտենցիալ վտանգ կարող լինել խմելու ջրի որակի, այդ թվում խմելու և մակերեսային ջրամբարների ջրի իրավիճակը, սննդամթերքի որակի (աղտոտման), անբավարար հիգիենիկ պայմանների անբավարարությունը: Աղտոտվածությունը կարող է բերել տարբեր հիվանդությունների առաջացման, այդ թվում՝ վարակիչ և ոչ վարակիչ: Մարդու առողջության խնդիրները կապված են

լինելու.

- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Ծրագրի դրույթների իրականացումը, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսված գործունեությունները սերտ առնչվում են մարդու առողջության և անվտանգության հետ, իրենց իրականացումը կարող է ազդեցություններ և ռիսկեր պարունակել:

13.10 Սոցիալական գործոններ. Ակադեմիական քաղաքի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, Աջափնյակ և Դավթաշեն համայնքների արևմտյան եզրին, նաև ընդգրկում է Արագածոտնի մարզի Մասունիկ համայնքի արևելյան հատվածը՝ ընդհանուր առմամբ 682.9 հեկտար տարածք: Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվող գործողությունների որոշ տարածքները, որոնք ներառում են մասնավոր ընկերությունների, գյուղացիների կողմից օգտագործվող հողատարածքները, գերակա շահ են ճանաչվել 2024թ. օգոստոսի 22-ի ՀՀ կառավարության 1323-Ն որոշմամբ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ծրագրի շրջանակներում կնախատեսվեն փոխհատուցման հնարավորություններ մասնավոր հողատարածքների սեփականատերերի համար: Իսկ ենթակառուցվածքների փոփոխությունների դեպքում համապատասխան գերատեսչությունների հետ կկնքվեն պայմանագրեր՝ ըստ փուլերի վերջիններիս ապամոնտաժման, տեղափոխման և միջոցառումների նախատեսման նպատակով:

Կառուցվելու է հանրակացարանային կամ բնակելի թաղամաս՝ ուսանողների և դասախոսների համար, բազմաֆունկցիոնալ տրանսֆորմեր համերգասրահը (համերգասրահ, կինոթատրոն, թատրոն), տարբեր մարզաձևերի համար նախատեսված դահլիճներ՝ բուհական սպորտային ակումբների գործունեության, ինչպես նաև ակադեմիական քաղաքի բնակիչների և աշխատակիցների առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ կենսապայմանների կազմակերպման համար՝ մարզասրահներ, լողավազաններ: Կառուցվելու են բուժ հաստատություններ, առողջության կենտրոններ, երեխաների խնամքի և զարգացման կենտրոններ, առևտրի կետեր:

Ակադեմիական քաղաքում դասավանդման և ուսուցման համար ներգրավվելու են վարչական աշխատողներ, ուսանողներ, դասախոսներ և գիտնականներ :

Կրթական գործընթացը կազմակերպվելու համար նախատեսված օգտատերերի ընդհանուր քանակը կազմում է 112768 մարդ, որից ուսանողներ՝ 70937 մարդ:

Նախատեսվում է բնակելի ֆոնդի ստեղծում: Ակադեմիական քաղաքի տարածքում նախատեսված են հանրակացարաններ մոտ 19100 ուսանողների համար ու 300 բնակարան դասախոսների, գիտահետազոտողների ու վարչական աշխատակազմի համար: Հաշվի առնելով, որ կլաստերների աշխատակիցների մի մասը ցանկություն կունենա ձեռք բերել սեփականության իրավունքով բնակարաններ, անհրաժեշտ կլինի նաև աշխատակիցների համար կազմակերպել տեղամասերին մերձակա տարածքներում հիփոթեքային վարկավորման հատուկ պայմաններ: Կլաստերների գոյությունը անխուսափելիորեն հանգեցնելու է նաև հարակից համայնքային տարածքների

զարգացմանը և տնտեսական գործունեության նոր տեսակների ծավալմանը: Հարևանությամբ գտնվող համայնքային կամ մասնավոր սեփականության հողերի վրա անկանոն շինարարությունից խուսափելու նպատակով ձևավորվելու է նաև ավելի ծավալուն տարածքի զարգացման պլան, որը կկարգավորի մերձակայքում շինարարության հարկայնությունը, դիզայնը, ինչպես նաև գործունեության տեսակները: Կկազմակերպվեն նոր ենթակառուցվածքներ՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի, աղբահանության համակարգեր, ճանապարհային ցանց:

Ենթակառուցվածքների՝ երկաթգիծ, էլեկտրահաղորդման գծերի տեղափոխման աշխատանքները կկատարվեն փոխադարձ համաձայնությամբ՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Մասնավոր անձանց, բնակիչներին պատկանող հողատարածքները կդիտարկվեն պետական գերակա շահ, որոնց փոխհատուցումը կկատարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նախատեսված Ակադեմիական քաղաքի կառուցումը կնպաստի.

- Երևան քաղաքի Կենտրոնի ճանապարհների բեռնաթափմանը, երթևեկության շարժի կրճատմանը:
- Միջազգային չափանիշներով բուհական համակարգի ստեղծմանը:
- Կրթության որակի բարձրացմանը, հնարավորություն տալով ընդգրկվել 500 միջազգային վարկանիշային ԲՈՒՀ-երի շարքում:
- Նոր և տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորությունների կիրառում, որը հնարավորություն կտա ուսանողների գիտելիքների կիրառական ներդրմանը պրակտիկայում, մոտեցնելով նրանց ՀՀ տնտեսության կառավարմանը:
- Կբարձրացնի Հայաստանի Հանրապետության դերը միջազգային կրթական համակարգում, դարձնելով այն գրավիչ նաև արտասահմանյան ուսանողների ներգրավման համար:
- Երևան քաղաքի և կից գտնվող համայնքների համաչափ տարածական զարգացմանը, հողային տարածքների կանոնավոր օգտագործմանը:
- Տարածքի և մոտակա բնակավայրերի բնակիչների միջև փոխադարձ ինտեգրմանը և համագործակցության զարգացմանը:
- Կից համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Համայնքի և կից գտնվող բնակավայրերի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված գրության՝ Ակադեմիական քաղաքի կառուցապատման տարածքն առնչություն չունի Սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող հիմնադրույթային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ:

13.11 Լանդշաֆտ.Բարեկարգում. նախատեսվող տարածքը կառաջացնի լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Բայց գրեթե ամառի և չօգտագործվող տարածքը կվերածվի գեղեցիկ բարեկարգ տարածքի՝ խնամված կանաչ գոտիով, գրավիչ լանդշաֆտային

փոփոխություններով:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվող գործողությունների շրջանակներում շինությունների կառուցումը վիզուալ սահմանափակումներ չի առաջացնի , այլ համահունչ կինոեզրվի շրջակա տարածքի կառուցապատմանը:

Ծրագրով նախատեսված տարածքը կբարեկարգվի. կկանաչապատվի:

13.12 Կանաչապատման ծրագիր. Ծրագրով նախատեսվում է տարածքի կանաչապատման աշխատանքներ: Աջափնյակ համայնքի սահմանափակ օգտագործման կանաչ տնկարկների վիճակը համամեմատաբար բարվոք է: Բնակչության ներկայիս թվաքանակի պայմաններում Աջափնյակ համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսների համեմատական բնութագիրը:

Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով բնակչության
ապահովվածության դեֆիցիտը

N	Համայնքի անվանումը	2004 թ *		2020 թ			
		հա	մ²/մարդ	հա	մ²/մարդ	այդ թվում համայնքային նշանակության	
						հա	մ²/մա- րդ
1	Աջափնյակ	158,4	14,88	224,5	15,1	88,7	6,0

* մակերեսը՝ հա, բնակչության ապահովվածությունը՝ մ²/մարդ

ՌԷԳ գործողությունների շրջանակներում նախատեսվում է տարածքի կանաչապատում, որը պետք է տպահովի Ակադեմիական քաղաքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմատիվային ցուցանիշը մեկ շնչի հաշվով: Կանաչապատման ցուցանիշները պետք է համապատասխանեն՝ 22 կառավարության 08.02.2018թ. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 108- Ն որոշման պահանջներին: Համաձայն որոշման III գլխի 10-րդ կետի՝ ընդհանուր բնակավայրի և բնակելի տարածքների համար ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքների մակերեսի նորմերն ընդունվում է աղյուսակ 4 ներկայացվող պահանջներով.

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱԶԱԳԱՏՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՆՈՐՄԵՐԸ**

Ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքներ	Կանաչապատ տարածքների մակերեսը (քառ. մ/մարդ)			
	մեծ, խոշոր և խոշորագույն քաղաքներ	միջին քաղաքներ	փոքր քաղաքներ	գյուղական բնակավայրեր
Ընդհանուր բնակավայրի համար	10	6-8	8(10)*	12
Բնակելի շրջանի համար	6	6	-	-

* 20 հազար մարդուց պակաս բնակչությամբ փոքր քաղաքների համար

Ակադեմիական քաղաքի համար ընդհանուր օգտագործման կանաչապատման նորմը 1 մարդու համար պետք է սահմանել՝ Աջափնյակ վարչական շրջանի համար՝ 10մ² և ավելի, Մասուհիկ բնակավայրի համար՝ 12մ²: Հիմնադրույթային փաստաթղթով ներկայացված նախատեսվող գործունեությունների իրականացման փուլերում տեղադրվող և կազմել կանաչապատման հատակագիծ՝ ըստ կառուցապատման փուլերի և ներկայացնել Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը:

Ա.Էկոլոգիական և լանդշաֆտային ծագավորություն.

Ակադեմիական քաղաքի Էկոլոգիական և լանդշաֆտային ծագավորությունը նախատեսվում է երկու հիմնական սկզբունքով՝ կլիմայի ներսում և կլիմայից դուրս:

Կլիմայի ներսում կանաչապատումը նախատեսվում է կլիմայի ներքին բակերի և տարածքների կանաչապատում բացառապես տեղական բուսատեսակներով, որոնք ընտրվել են տեղական տնկարանից՝ բուսաբանական այգու տրամադրած մանրամասն ցանկի հիման վրա: Այս մոտեցումը ապահովում է բուսատեսակների բարձր հարմարվողականությունը տեղական կլիմայական պայմաններին, նվազեցնում է խնամքի և ռոտման պահանջները և աջակցում է քաղաքի կենսաբազմազանության ավելացմանը:

Ոռոգման համակարգում օգտագործվում է վերամշակված/մոխրագույն/, մաքրման կայաններից և անձրևաջրերից ամռաօգտ ջուր, ինչը թույլ է տալիս բազմակի օգտագործել տարբեր աղբյուրներից ստացված ջուրը, նվազեցնել այլ աղբյուրներից ջրային ռեսուրսների սպառումը, պահպանելով ջրային ռեսուրսների կայունությունը:

Կլիմայի շուրջ. կանաչապատումը Կլիմայի շրջակայքում նախատեսվում է Կլիմայի արտաքին տարածքներում կառուցել «Օազիս» միկրոկլիմայական միավորներ՝ արտվելապես ջուր խնայող բուսատեսակներով: Այս միավորները ծառայում են որպես բնական ստվեր և օդի խոնավության պահպանման կետեր, ստեղծելով բարենպաստ միկրոկլիմա թե՛ մարդկանց, թե՛ կենդանի էկոհամակարգի համար: Նույն տարածքում ձևավորվում է ժայռոտ գոտի՝ լիթոֆիտային միջավայր, որտեղ օգտագործվում են ժայռային և սակավաջրեր պահանջող բույսեր՝ պահպանելով բնության բնօրինակ ռելիեֆը և ստեղծելով էկոլոգիապես կայուն, բնական տեսարաններով հարուստ տարածք:

Ռազմավարության շրջանակներում առաջին հերթին կատարվում է հողի բարելավում՝ հողային կառուցվածքի և սննդանյութերի հավասարակշռությունը վերականգնելու համար, ինչը թույլ է

տալիս խթանել հետագա բուսածածկի առողջ աճը: Միջոցառումների մի մասն ուղղված է գոլորշիացման նվազեցմանը, ինչը նպաստում է ջրային ռեսուրսի պահպանմանը և շրջակա միջավայրի կայունությանը: Անձրևաջրերը ուղղորդվում և կուտակվում են հատուկ համակարգերով, ինչը թույլ է տալիս նվազեցնել հեղեղումների վտանգը և ապահովել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Նախատեսվում է առաջին հերթին տնկել այնպիսի բուսատեսակներ, որոնք կստեղծեն բարենպաստ պայմաններ հետագա տնկվող բույսերի համար՝ ապահովելով ստվեր, խոնավություն և հողի ամրություն: Այս մոտեցումը թույլ է տալիս հասնել երկարաժամկետ էկոլոգիական կայունության և կանաչ տարածքների առողջ զարգացման: Այս ռազմավարությունը համատեղում է էկոլոգիական կայունությունը, ջրային ռեսուրսների խնայողությունը և բնական լանդշաֆտի պահպանությունը՝ ստեղծելով առողջ և ներդաշնակ բնակավայր:

Էկոլոգիական և լանդշաֆտային ռազմավարություն



Կլաստերների ներսում



Լանդշաֆտային շրջանի մեջ մտնող տնտեսական օրենքային գոտիների միջև տարածական հարաբերությունները: Ներքին տարածական հարաբերությունները



Ներկա իրավիճակ



Կլաստերների շուրջ



«Շաղկապ» (միջուկային միավորներ՝ ջրի խնայող բույսերով) + ժայռոտ գետի լիթոֆիտային միջավայր



Շրջապատող միջավայր

Ջրի բարելավում



Գերազանցման նվազեցում, առանցքային մակերեսային խոսքի ուղղորդում և կոտակում



Առաջին հերթին տնկվող բուսատեսակներ

Բ: Լանդշաֆտային էկոլոգիական տիպաբանություն.

Քաղաքի կանաչ գոտիները, ըստ լանդշաֆտային էկոլոգիական տիպաբանության, բաժանվում են հետևյալ հիմնական գոտիների՝ Սպորտային Այգի, Կանաչ Անցումներ, Էկո-հարթավայրեր, Հանգստի Այգի, Ժայռային Մաս, Կենտրոնական Առանցքի Պլազա, Կլաստերների ներքին բակեր և Արկածային գոտի:

1. Սպորտային այգի .

Սպորտային այգին նախատեսված է տարբեր տարիքային խմբերի համար և ստեղծում է առողջ կենսակերպ խթանող միջավայր: Այգում կարող են տեղակայվել բացօթյա մարզագույք, խաղահրապարակներ, վազքի և հեծանիվի արահետներ, ինչպես նաև փոքր ֆուտբոլի կամ բասկետբոլի դաշտ: Այգու հագեցած կանաչապատումը ձևավորում է առողջ և հանգիստ միջավայր մարզվելու համար: Տարածքում նախատեսվում են ծառապատ ուղիներ, խնամված լանդշաֆտային ծառերի ու թփերի զանգվածներ, ինչպես նաև բնական խոտածածկով բաց հարթություններ: Կանաչապատումն ապահովում է թե՛ արևից պաշտպանություն և մաքուր օդ, թե՛ աղմուկի նվազեցում ու միկրոկլիմայի բարելավում: Բուսածածկի միջով անցնող վազքուղու և հեծանիվի արահետները թույլ են տալիս այցելուներին մարզվել ավելի հաճելի ու առողջ միջավայրում: Լանդշաֆտային լուծումները ներառում են նաև հանգստի գոտիներ, որտեղ նստարանները տեղակայված են ծառերի ստվերում՝ ձևավորելով ամբողջական, կանաչ և կենսունակ սպորտային այգի:

2. Կանաչ անցումներ.

Կանաչ անցումներն ապահովում են տարբեր կլաստերների միջև բնական և հարմարավետ կապ՝ ստեղծելով շարունակական կանաչ միջավայր: Այս տարածքներում նախատեսվում է օգտագործել էնդեմիկ սաղարթավոր ծառեր և թփեր, որոնք լավագույնս հարմարված են տեղական կլիմային և նպաստում են կենսաբազմազանության պահպանմանը: Կանաչապատված միջանցքները ոչ միայն գոլություն և մաքուր օդ են ապահովում, այլև ստեղծում են էկոլոգիապես կայուն և էսթետիկորեն հաճելի լանդշաֆտ: Անցումներով անցնում են վազքուղու և հեծանիվի արահետներ, որոնք թույլ են տալիս անվտանգ և հաճելի շարժվել կլաստերներից կլաստեր: Այս լուծումները նպաստում են առողջ կենսակերպի խթանմանը և ապահովում են քաղաքի կանաչ ենթակառուցվածքների շարունակական զարգացումը

3. Էկո-հարթավայրեր.

Էկո-հարթավայրերը նախատեսվում են Ակադեմիական Քաղաքի կասետների շուրջ, որպես կանաչ օղակ՝ ստեղծելով բնական, կայուն և կենսաբազմազան միջավայրեր համայնքի համար: Դրանք հիմնականում տեղադրվում են ոչ շատ զառիթափ տարածքներում, ինչը նվազեցնում է հողի էրոզիան ու հեշտացնում է տարածքների օգտագործումն ու սպասարկումը: Կանաչապատումն իրականացվում է տեղական, քիչ ջուր և խնամք պահանջող բուսատեսակներով, որոնք բնականաբար հարմարված են տվյալ կլիմային և ապահովում են էկոլոգիական

հավասարակշռություն: Տարածքում նախատեսվում են քայլարշավային արահետներ, որոնք հնարավորություն են տալիս այցելուներին շրջել բնության մեջ՝ առանց լանդշաֆտը վնասելու: Էկո-հարթավայրերը նպաստում են մաքուր օդի, հանգստի և առողջ կենսակերպի ձևավորմանը՝ միաժամանակ նվազեցնելով քաղաքային կանաչ տարածքների պահպանման ծախսերը:

4. Հանգստի այգի.

Հանգստի այգին գտնվում է քաղաքի հյուսիս-արևելյան հատվածում և անմիջապես հարում է ուսանողական կացարաններին՝ դառնալով նրանց համար հասանելի հանգստի և առօրյա զբոսանքի վայր: Այգին նախատեսված է թե՛ ակտիվ, թե՛ պասիվ հանգստի համար, առաջարկելով քայլելու, ընթերցելու, վարժանքներ անելու և պարզապես բնության մեջ ժամանակ անցկացնելու հնարավորություններ: Կանաչապատումն իրականացվում է տեղական բուսատեսակներով, որոնք հարմար են կլիմային և ապահովում են տարածքի բնական բնույթը: Այգու միջով անցնող արահետները հնարավորություն են տալիս հարմարավետ տեղաշարժվել և միացնել այգու տարբեր գոտիները: Նախագծով հնարավոր է ներառել փոքր ջրային մակերևույթներ՝ լճակներ, քաղաքային լանդշատին բնորոշ ջրային մակերևույթներ, որոնք կբարձրացնեն տարածքի գեղագիտական արժեքը և կնպաստեն միկրոկլիմայի բարելավմանը: Այգու ձևավորման ընթացքում պահպանվում և օգտագործվում է բնական ռելիեֆը՝ ձևավորելով հարթավայրերի, մեղմ լանջերի և զառիթափերի համադրությամբ բնական ու ներդաշնակ միջավայր:

5. Ժայռային մաս.

Ժայռային այգին նախատեսվում է քաղաքի արևելյան մասում, որտեղ գերակշռում են բնական ժայռային ռելիեֆը, զառիթափ լանջերը և անցնում է բարձրավոլտ էլեկտրական գծերի սանիտարական գոտին: Այգու նախագծումը հիմնված է տարածքի բնածին լանդշաֆտի պահպանման վրա՝ նվազագույն միջամտությամբ և անվտանգ շահագործմամբ: Այստեղ կկազմակերպվեն ապահով քայլարշավային արահետներ, որոնք կունենան հստակ սահմաններ՝ անվտանգ տեղաշարժ ապահովելու համար: Կանաչապատումն իրականացվելու է տեղական, քիչ ջուր և խնամք պահանջող բուսատեսակներով, որոնք հարմար են ժայռային միջավայրին և նման են էկո-հարթավայրերում կիրառվող բուսատեսակներին: Տարածքում նախատեսվում են նաև դիտահարթակներ և հանգստի փոքր հարթակներ, որտեղ այցելուները կարող են վայելել բաց լանդշաֆտային տեսարանները:

6. Կենտրոնական առանցքի պլազա.

Կենտրոնական առանցքի պլազան հանդիսանում է քաղաքի կանաչ ողնաշարը և երկայնական քաղաքային այգի, որն ապահովում է բոլոր կլաստերների միջև շարունակական և հարմարավետ կապ: Այն ձևավորվում է որպես ակտիվ հանրային տարածք, որտեղ կանաչապատված միջավայրը կարևոր դեր ունի: Ընտրված են տեղական սաղարթավոր բուսատեսակներ, որոնք ապահովում են առատ ստվեր և առավելագույն արդյունավետությամբ մաքրում են օդը՝ բարելավելով շրջակա միջավայրի որակը: Տարածքում նախատեսվում են սիզամարգեր, որտեղ հնարավոր է հանգստանալ կամ անցկացնել ազատ ժամանակը: Այս առանցքը ձևավորում է քաղաքի ամբողջական կանաչ համակենտրոնը՝ միավորելով բնությունը, զբոսանքը և հանրային կյանքը:

7. Կլաստերների ներքին բակեր.

Կլաստերների ներքին բակերը ձևավորվում են որպես փոքր քաղաքային այգիներ՝ յուրաքանչյուր կլաստերի կենտրոնում ստեղծելով հարմարավետ հանգստի և ժամանցի տարածքներ: Այստեղ նախատեսվում են նստարաններ, բացօթյա հանգստի գոտիներ և անհրաժեշտության դեպքում փոքր ջրային մակերևույթներ, որոնք նպաստում են տարածքի միկրոկլիմայի բերելավմանը: Կանաչապատումն իրականացվում է նույն մոտեցմամբ, ինչպես կենտրոնական առանցքի պլազայում՝ օգտագործելով ստվերատու և օդը մաքրող ծառատեսակներ: Այս բակային այգիները նպաստում են համայնքային կյանքի ակտիվացմանը՝ ստեղծելով հանդիպման, շփման և հանգստի բնական միջավայր: Դրանք միաժամանակ ապահովում են շենքերի միջև կանաչ հավասարակշռող տարածքներ, որոնք բարելավում են միկրոկլիման և բարձրացնում բնակելի միջավայրի որակը:

8. Արկածային գոտի

Արկածային գոտին ձևավորվում է նախկին քարի և խճի հանքի տարածքում՝ ռեկուլտիվացիայի միջոցով վերականգնելով բնական լանդշաֆտը և ստեղծելով անվտանգ ու հետաքրքիր զբոսաշրջային վայր: Նախագիծը նախատեսում է մինիմալ միջամտություն՝ պահպանելով տեղանքի բնօրինակ ձևերը և ռելիեֆը: Տարածքում ստեղծվում են ապահով արահետներ, որոնք թույլ են տալիս այցելուներին տեղաշարժվել անվտանգ և հարմար ձևով՝ խուսափելով վտանգավոր հատվածներից: Արկածային գոտին կարող է ներառել տարբեր ֆիզիկական և բնապահպանական ակտիվություններ, ինչպես նաև դիտարաններ՝ զետնի և ժայռերի տեսարանները վայելելու համար: Այս մոտեցումը համատեղում է բնության պահպանությունը, էկոլոգիական կայունությունը և ակտիվ հանգստի հնարավորությունները:

Լանդշաֆտային Էկոլոգիական Տիպաբանություն



14. Անդրսահմանային ազդեցություն.

ՌԷԳ շրջանակներում իրականացվող նախատեսվող գործողությունները չունեն անդրսահմանային ազդեցություն, քանի որ ծրագրի իրականացման տարածքը սահմանակից չէ հարևան պետությունների տարածքներին, և ազդեցությունները հիմնականում լինելու են շինարարության փուլում, չեն տարածվի մեծ հեռավորությունների վրա, և չեն կարող հասնել հարևան երկրների տարածքներ:

15. Շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրության փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրության փաստաթուղթը մշակելիս.

Աղյուսակում ներկայացված են բնապահպանական և առողջապահական նպատակները և դրանց կապը ներդրումային ծրագրի նպատակներին և նկատառումներին, որոնք ներառված են հիմնադրության փաստաթղթում:

Վերլուծության արդյունքում առաջարկվել են միջոցառումներ ծրագրի առաջարկվող առաջնահերթություններում:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրության փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվա ծքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնալույտեր ից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքն երի ստեղծում:	
0. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ						
Հետևել քաղաքաշինությանը, առողջապահությանը, շրջակա միջավայրի պահպանությանը և այլ ոլորտներին վերաբերող ազգային կանոնակարգերին	+	+	+	+	+	ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շիննորմեր: Շինարարության և շահագործման փուլերում ապահովել ՀՀ իրավական նորմատիվ փաստաթղթերի պահանջները:
Սահմանել կառավարման, համակարգման և ոլորտային վերահսկողության իրականացման գործում ներգրավված պետական մարմինների և այլ	+	+	+	+	+	Պետական կառավարման մարմիններ Տեղական ինքնակառավարման մարմիններ, հանրություն: Տարբեր ոլորտների տեսչական մարմիններ

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնալույտերից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
Հաստատությունների պարտականությունները						
Միջոցառումներն իրականացնել այնպես, որ կանխվեն և նվազեցվեն մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը	+	+	+	+	+	ՌԷԳ-ում նախատեսված շրջակա միջավայրի վրա ազդեցության կանխարգելմանն ուղղված միջոցառումների պարտադիր իրականացում:
1. ՕԴԻ ՈՐԱԿ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵՐՄՈՑԱՑԻՆ ԳԱԶԵՐ						
Կրճատել և վերահսկել նախատեսվող օբյեկտների զազերի արտանետումները մթնոլորտ (օր.՝ շինարարության փուլում արտանետումները, այդ թվում ջերմոցային զազերի արտանետումները)	-/+	+	-/+	+	+	Ձեռնարկողը պարտավոր է իրականացնել մոնիթորինգ և կատարել նախատեսված բոլոր միջոցառումները: հանրային իրազեկման միջոցով բարձրացնել հանրության գիտակցությունը, վերահսկելու միջոցառումների կատարումը, որոնք ուղղված են թափոնների կառավարման գործընթացների և օդի որակի, կլիմայի փոփոխության վրա դրանց

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնալույտերից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
						ազդեցության, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների կանխմանը:
Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը թափոնների կառավարման և օդի որակի, կլիմայի փոփոխության վրա դրա ազդեցության, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ	+	+	+	+	+	Պարբերաբար կազմակերպել ստուգայցեր, շահագրգիռ հանրությանը տարածքի շրջակա միջավայրին ծանոթացնելու և հետաքրքրող հարցերը լուսաբանելու նպատակով:
2. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՑԱ ՋՐԵՐ						
Գործողությունների բացասական ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա:	-	-/0	-/0	+	+	Ապահովել նախատեսվող օբյեկտների վերաբերյալ նախատեսված պահանջները՝ ջրի աղտոտումը կանխելու համար:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնակույտերից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
Տարածքում ապահովել մշտադիտարկման համակարգը:	+	+	+	+	+	Նախատեսել համապատասխան հզորության մաքրման կայան ջրային ռեսուրսները աղտոտումից զերծ պահելու նպատակով: Ապահովել ջրային ռեսուրսների վրա օբյեկտների ազդեցության մոնիթորինգի միջոցառումների կատարումը և դրանով իսկ նպաստել ջրային ռեսուրսների պահպանմանը:
3. ՀՈՂ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԱՓՈՆՆԵՐ						
Նախկինում կառուցապատված տարածքների քանդում: Տարածքների մաքրում գոյություն ունեցող թափոնակույտերից և աղբակույտերից, շինարարական և կենցաղային աղբից:	-/+	-/0	-/0	-/+	+	Նախատեսվել միջոցառումներ տարածքի շուրջ երկրաբանական պայմանների (հողօգտագործում, ռոտզում) մոնիթորինգի համակարգի ստեղծման համար:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրությունային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում	
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվա ծքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնալույտեր ից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքն երի ստեղծում:		
	Գործունեության ընթացքում առաջացող թափոնների /օր.գոմարը, ձկնային տնտեսության թափոններ և այլն/ վերամշակում կամ հեռացում համապատասխան տարածքներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ:	0/+	-/0	0	+		+
	Տարածքի բնապահպանական մոնիթորինգի կազմակերպում (ներառյալ երկրաբանական ռիսկերը, օրինակ՝ սողանքները)	+	0	0	+		+
4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ							
Հարակից տարածքների և ձևավորվող	+	0/+	0	+	+	Նախատեսել վտանգավոր նյութերի արտանետումների կրճատմանը՝ շրջակա միջավայրի աղտոտումը	

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնափոխություններից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
Կենսաբազմազանության և նոր էկոհամակարգերի ստեղծումը, պահպանությունը						Կենսաբազմազանությանն օժանդակող (հող, ջուր, օդ և այլն) նոր տեխնոլոգիաների մեջ ներդրումների կատարում, (բ) հողում և ջրում վտանգավոր քիմիական նյութերի կուտակման կանխարգելում և (գ) լանդշաֆտի դեզրադացիայի կանխարգելում: Իրականացնել նոր էկոհամակարգերի ձևավորում և պահպանություն:
Կանխել կամ նվազեցնել կենսաբազմազանության վրա ճնշումը և նպաստել դրա կայուն օգտագործմանը	-	+/-	+/-	0	0	
5. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ						
Պաշտպանել հարակից տարածքներում բնակվող բնակչության առողջությունը՝ օդի առողջությունը՝ օդ արտանետումներից, աղմուկից և այլն:	-	0/-	-	+	+	Ծրագրի գործողություններում ներառվելու է հետևյալ սկզբունքները. - Սահմանել և պահպանել սանիտարական գոտիները - Ապահովել տարածքի սանիտարահիգիենիկ պայմանները

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնակույտերից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
Պահպանել սանիտարապաշտպանիչ գոտիների պահանջները, յուրաքանչյուր օբյեկտի համար:	+	+	+	+	+	Նախատեսել կենդանիների հիվանդությունների հայտնաբերմանն ուղղված հետազոտական գործողություններ, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումներ:
6. Մոցիալական						
Որակյալ բարձրագույն կրթություն: Ժամանակակից հետազոտական և նորարական գործունեությունը երաշխավորող միջավայրի ստեղծում: Կրթության և հետազոտությունների զուգահեռում: Քաղաքի բեռնաթափում	+	+	+	+	+	Աշխատատեղերի բացում, սոցիալական միջավայրի բարելավում: ՌԷԳ-ում նախատեսված շրջակա միջավայրի վրա ազդեցության կանխարգելմանն ուղղված միջոցառումների պարտադիր իրականացում:

Բնապահպանական և առողջապահական նպատակներ	Հիմնադրույթային փաստաթղթի նպատակները					Առաջարկվող միջոցառումներ ծրագրի նախատեսվող առաջնահերթություններում
	Կառուցապատման աշխատանքների իրականացում:	Ագրոհամալիրի իրականացում	Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնափոխություններից և այլ արտադրական թափոններից:	Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	
Պատմամշակութային ժառանգության պահպանություն	-	-	-	0	0	
Ամբողջ տարածքի, այդ թվում հարավային հատվածի համար հուշարձանների բացահայտում, անվտանգության երաշխիքների ստեղծում, և նախագծային լուծումներում և շինարարության փուլերում:						Միլիկյան թաղամասում հայտնաբերված բնակատեղիի շարունակական ուսումնասիրություններ, նախագծային լուծումներում ինտեգրում, վերահսկողության և պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացում:

+ ավելի լավ

0 – նույնը

– ավելի վատ

+/- դրական և բացասական կապ

16. Հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը.

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Օրագրի ՌԷԳ հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

16.1 Օդային ավազան. օդային ավազան փոշու արտանետումներից պահպանելու նպատակով նախատեսել.

- ✓ օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- ✓ ցանկապատել շինարարական հրապարակը,
- ✓ շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- ✓ շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ,
- ✓ շինարարության ընթացքում շենքերը և շինությունները պետք է ծածկել համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով,
- ✓ 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ,
- ✓ արտադրական նշանակության շենքերում ժամանակակից ֆիլտրերի կիրառում՝ օդային ավազան արտանետումների քանակական և որակական ցուցանիշները մեղմելու նպատակով,
- ✓ օդային ավազան արտանետումները կանխարգելել նպատակով նպատակով կիրառել բարձր արդյունավետության գոծիչներ,
- ✓ Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (ՍՕՊ) ժամանակահատվածում (քամու արագություն, փոթորիկ) աշխատանքների վերահսկում, անհրաժեշտության դեպքում

դադարեցում:

Շահագործման փուլ.

Կլիմա. կլիմայի վրա ջերմոցային գազերի ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- ✓ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը նպաստող արտադրությունների, ջեռուցման համակարգերի կիրառում,
- ✓ ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծում, կիրառում:

16.2. Ջրային ռեսուրսներ. ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ ենթառողողումներից, ջրակալումներից ու ջրածածկումներից կառուցվածքները պաշտպանելու նպատակով այն տեղամասերում, որտեղ ստորերկրյա ջրերի մակարդակը բարձր է նախատեսել համապատասխան պաշտպանական միջոցառումներ,
- ✓ ԱՔ-ի տարածքում ջրահոսքերի և ջրահավաքների կառուցման ընթացքում հաշվի առնել վերջիններիս սանիտարական պահպանման գոտու սահմանները, ելնելով բնական, կլիմայական և հիդրոլոգիական պայմաններից,
- ✓ կառուցապատման ժամանակ պատկան մարմինների հետ համատեղ նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ տարածքում առկա Քասախ-Էջմիածին ջրանցքի, Մերձավանին պատկանող ոռոգման փակ ցանցի և Սասունիկի ոռոգման ներտնտեսային ցանցի, ինչպես նաև Հայֆիլմից մինչև գերեզմանների տարածք՝ Նոր Դավա ջրանցքի պահպանմանն ուղղված,
- ✓ նախագծային փաստաթղթերում նախատեսել անձրևաջրերի հոսքի ուղղորդման և կուտակման լուծումները :

Կեղտաջրեր.

- ✓ Համապատասխան հզորության մաքրման կայանի կառուցում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հոսքը կանխելու նպատակով,
 - ✓ Մաքրման կայանների հզորությունն ընտրվելու է, ելնելով տվյալ կառույցի ծանրաբեռնվածությունից, ջրային ռեսուրսների օգտագործման ծավալից:
- Շահագործման փուլ.
- ✓ Բացառել արտադրական և կենցաղային նպատակներով օգտագործվող առանց մաքրման հոսքաջրերի բաց թողումը շրջակա միջավայր,
 - ✓ տեղումներից առաջացող ջրային հոսքերը համապատասխան տեխնոլոգիական լուծումներով օգտագործել ոռոգման և ընթացիկ կարիքների համար,
 - ✓ Մաքրման կայանում կեղտաջրերի մաքրման արդյունքում կայանից դուրս եկած մաքրված հոսքաջրերն ուղղորդված օգտագործվել կանաչապատա տարածքների ոռոգման նպատակով:

16.3. Հողային ռեսուրսներ. հողային ռեսուրսների պահպանման նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ հանքավայրերի տարածքների, ռեկուլտիվացիան իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համապատասխանեցնելով բնակելի և հասարակական գոտու պահանջներին:

- ✓ հողի բերրի շերտը հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,
 - ✓ բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկել միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:
 - ✓ նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճերից,
 - ✓ հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավորել առանձին,
 - ✓ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,
 - ✓ նախագծային լուծումներում նախատեսել շինարարական հոսքաջրերի հողային ռեսուրսների մեջ ներթափանցումը, բացառումը,
 - ✓ հակասելավային, հակահեղեղային պաշտպանական միջոցառումների կիրառում,
 - ✓ բարդ ռելիեֆային տեղամասերում էրոզիա առաջացնող գործոնների չեզոքացման, կանխարգելիչ պաշտպանական միջոցառումների կիրառում,
- Շահագործման փուլ.
- ✓ նախագծային լուծումներում նախատեսել մաքրման կայանի տեղադրում՝ հողային ռեսուրսները կեղտաջրերով աղտոտելուց խուսափելու համար:

16.4. Կենսաբազմազանություն. գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար անհրաժեշտ է.

- ✓ Մինչև հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունների շինարարական աշխատանքները, կատարել տարածքների ուսումնասիրություն՝ ուղղված ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների բնադրավայրերի հայտնաբերմանը,
 - ✓ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, պատասխանատու Կապալառու կազմակերպությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,
 - ✓ Նախատեսվող գործունեությունների իրականացման ընթացքում հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,
 - ✓ Ճահճային տարածքներում գործողությունների իրականացման դեպքում անհրաժեշտ է վերջինիս ռեկուլտիվացիան իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տարածքը համապատասխանեցնելով բնակելի և հասարակական գոտու պահանջներին:
- Շահագործման փուլ.
- ✓ ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանակնազնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:

16.5. Թափոն. թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է.

- ✓ կատարել տարածքում առկա թափոնների տեսակավորում, տարանջատում դասակարգում, առաջնորդվելով ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների պահանջներով,
- ✓ թափոնների տեղափոխումը կատարել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից,
- ✓ նախատեսել վտանգավոր թափոնների վնասազերծում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, քանի որ ՀՀ-ում բացակայում են վտանգավոր թափոնների տեղակայման պոլիգոնները,
- ✓ շինարարության ընթացքում թափոնների տեղափոխումը կատարել, բացառելով վերջինիս մեծածավալ բեռնվածքը և երկարատև երթուղով տեղափոխումը,
- ✓ տարածքում վերահսկողական մեխանիզմների ներդրում՝ ինտենսիվորեն և շարունակական շինադրով լցված բեռնատարների մուտքը տարածք արգելելու նպատակով,
- ✓ կենցաղային աղբի համար տեսակավորման աղբամանների նախատեսում:

Շահագործման փուլ.

- ✓ թափոնների կառավարումը կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ✓ թափոնների տեղափոխումը և վնասազերծումը նախատեսել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից,
- ✓ նախատեսել վտանգավոր թափոնների տեսակավորումը, պահպանման եղանակները՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,
- ✓ տեսակավորման աղբամանների տեղադրում, որը կնպաստի կենցաղային աղբի ճիշտ կառավարմանը, աղբավայրերի բեռնաթափմանը և շրջակա միջավայրի պահպանմանը,
- ✓ յուրաքանչյուր տարածքում տեղադրվող աղբահավաք տարողությունների քանակը պետք է բխի մարդկանց ծանրաբեռնվածությունից,
- ✓ անհրաժեշտ է ապահովել աղբահավաք տարողությունների, կոնտեյներների ժամանակին լվացումը, ախտահանումը:

16.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ. ՌԷԳ շրջանակներում նախատեսվող գործողությունների տարածքներում պատմամշակութային և բնության հուշարձանները պահպանելու. վնասակար ազդեցություններ կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է.

- կատարել հուշարձանների ֆիզիկական գույքագրում, գնահատում և պահպանական գոտու կարգավորում,
- կառուցապատման ընթացքում տարածքում առկա «Քարե պատերով ջրվեժ» բնության հուշարձանի ինտեգրում նախագծային լուծումներում,
- դամբարանների տարածքը կարելի է կառուցապատել, եթե դրանք արժեքավոր ճարտարապետական կառույցներ չեն,
- նախնական տեղագնման արդյունքում բացահայտված Ծրագրի կառուցապատման առաջին՝ հյուսիսային հատվածում գտնվող հնավայրերը և պոտենցիալ պեղման գոտիները, անհրաժեշտ է պեղումների միջոցով հետազոտել 2026թ. և հնագիտական արժեքները համապատասխան հանձնաժողովների եզրակացությամբ հանձնել նախագծողներին և կառուցապատողներին,

- տարածքում գտնված բնակատեղիի հատվածում անհրաժեշտ է բացառել կառուցապատումը, կարելի է այն ինտեգրել ճարտարապետական լուծումներում,
- նախագծային լուծումները կատարել հնագետի հետ համաձայնեցմամբ՝ հնագիտական միավորների ամբողջականությունն ապահովելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում ստանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրական եզրակացությունը,
- շինարարական աշխատանքները կատարել միայն համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից թույլտվության տրամադրման և համապատասխան մասնագետի հսկողության դեպքում,
- տարածքում կատարվում են քարահավաքման աշխատանքներ, ինչը լրջորեն կարող է վտանգել հնավայրի պեղված կառույցների քարերը, անհրաժեշտ է ներդնել վերահսկման մեխանիզմներ:

Բացի հայտնաբերված հնագիտական շերտերից շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են նաև այլ հնագիտական շերտերի հայտնաբերում, որի դեպքում պետք է առաջնորդվել Պատահական գտածոյի ընթացակարգով, որը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները, տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը:
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից:
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

Շահագործման փուլ.

- հնագիտական արժեքներով հայտնաբերված տարածքների ինտեգրման ապահովում՝ ուսուցման ծրագրերին:

16.7. Արտակարգ իրավիճակներ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է.

- ✓ պահպանել շինարարության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, առաջնորդվելով ՀՀՇՆ Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմերի ((ՀՀՇՆ 20.04, 2020 թ.) պահանջներով,
- ✓ նախագծային լուծումներում ապահովել բնակչության տարահանումը վտանգավոր գոտիներից,
- ✓ ապահովել տարածքների ինժեներական պաշտպանության միջոցառումներ՝ վտանգավոր բնական երևույթներից.
- ✓ շինություններում ապահովել օդափոխման և միկրոկլիմայի պահպանման, հրդեհաշիջման ժամանակակից համակարգեր:

Շահագործման փուլ.

- ✓ արտակարգ իրավիճակների դեպքում ապահովել բնակչության ազդարարումը և տեղեկացումը, բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում՝ թաքստոց, ապաստարան,
- ✓ հատակագծային լուծումներում ապահովել ԱԻ և ՔՊ կառավարման կետերի առկայությունը,
- ✓ կառուցապատման ընթացքում ապահովել շենքերը էվակուացիոն ելքերով՝ մարդկանց և կենդանիների համար, տարածքում փակցնել պաստառներ կամ ցուցանակներ:

16.8. Աղմուկ և թրթռում. աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով.

- ✓ ՌԷԳ փաստաթղթով նախատեսվող գործունեությունների շրջանակներում կիրառել ձայնակլանիչ նյութեր և կոնստրուկցիաներ,
- ✓ կառուցապատման ընթացքում կիրառել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- ✓ տեխնիկայի և մեքենաների համար կիրառել համապատասխան խլացուցիչներ,
- ✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլ.

- ✓ Շենքերի և արտադրական տարածքներում նախատեսել ժամանակակից տեխնոլոգիաներ և սարքավորումներ, որոնց աղմուկի և թրթռման մակարդակները կլինեն նվազագույն,
- ✓ վերահսկել աղմուկի և վիբրացիայի նորմերը, առաջնորդվելով ՀՀ օրենսդրության պահանջներից:

16.9. Մարդու առողջություն և անվտանգություն. Մարդու առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է

- ✓ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջների պահպանում,
- ✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- ✓ տեխնոլոգիական կլաստերի կազմակերպման ժամանակ ապահովել ծրագրի դրույթներով նախատեսված գործունեությունների՝ ագրոհամալիրի սանիտարապաշտպանիչ գոտիները: Շահագործման փուլ.
- ✓ անհրաժեշտության դեպքում ագրոհամալիրում կիրառել հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումներ,
- ✓ ագրոհամալիրի կենդանիների բուծումը, կենդանիների կերակրումը, անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը և այլ ծառայությունները կատարել ՀՀ գործող անասնաբուժական նորմերի պահպանմամբ,
- ✓ կենդանական ծագման արտադրանքի տնօրինումը (հավաքումը, պահումը, փոխադրումը, իրացումը, վերամշակումը, ոչնչացումը) և (կամ) պահեստավորել այնպես, որ երաշխավորվի արտադրանքի ամբողջական անվտանգությունը, կանխվեն մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող վտանգի առկայությունը և շրջակա միջավայրի վարակման

հնարավորությունը:

16.10 Սոցիալական գործոններ.

Սոցիալական գործոնների ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել.

- ✓ բնակիչների կողմից օգտագործվող օտարման ենթակա տարածքների հաշվառում՝ դրանց ՀՀ օրենսդրության շրջանակներում լուծում տալու, փոխհատուցումը որոշելու նպատակով,
- ✓ գործող և լքված հանքերի կոնսերվացումը կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման, սահմանափակման, արգելման պահանջները,
- ✓ մասնավոր կամ իրավաբանական անձանց գույքի հաշվառում և փոխհատուցման պայմանագրերի կազմում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան,
- ✓ գոյություն ունեցող ենթակառուցվածքների ապամոնտաժում, տեղափոխում համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ, փոխադարձ համաձայնությամբ՝ պետական ծրագրով սահմանված պայմանագրերի հիման վրա:

Շահագործման փուլ.

- Ապահովել ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշման պահանջները:
- Առաջնորդվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-ից 19-րդ հոդվածներով սահմանված դրույթներով և պահանջներով, հատուկ ուշադրություն դարձնելով օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերին, Ակադեմիական քաղաքի ողջ տարածքը, մասնաշենքերի մուտքերը և բոլոր սենքերը հարմարեցնել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ և միջավայր:

16.11 Լանդշաֆտ, բարեկարգում.կանաչապատում.

Լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- ✓ հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- ✓ բացառել ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային փոփոխությունները:

Բարեկարգում, կանաչապատում. տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- ✓ բարեկարգել կառուցապատումից դուրս ազատ տարածքները,
- ✓ ուսանողության և բնակիչների համար համապատասխան կահավորանքով հանգստի գոտիների կազմակերպում:

Կանաչապատում.

- ✓ Ապահովել տարածքի կանաչապատումը կանաչապատման ռազմավարությանը, հատակագծին համապատասխան,
- ✓ կանաչապատել տարածքը բուսաբանական այգու կողմից տրամադրված ցանկին համապատասխան ծառատեսակներով,
- ✓ լանդշաֆտային բույսերի ապահովում տեղական տնկարաններից,
- ✓ խոտածածկ հատվածներում ջուր խնայող բույսերով ապահովում:
Շահագործման փուլ.
- ✓ անձրևաջրերի հոսքի ուղղորդում և կուտակում՝ կանաչապատ տարածքի ռոտզման նպատակով,
- ✓ գորշ ջրով ռոտզման համակարգի կիրառում,
- ✓ Չկաչող ծառերի և բույսերի փոխարինում նորով:

17. Հիմնադրության փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետևախազային վերլուծության ծրագիրը.

17.1 Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է: Մոնիթորինգի (մշտադիտարկումներ) գործընթացն ուղղված է շրջակա միջավայրի՝ մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների, ինչպես նաև մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանը կամ մեղմանը: Այդ նպատակով Նախաձեռնողն իր լիազորությունների շրջանակում ՌԷԳ հաշվետվությամբ ամրագրված հիմնադրության փաստաթղթի դրույթների գործողության ընթացքում և դրանից հետո իրականացնում է օրենքով նախատեսված շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ)՝ հիմնադրության փաստաթղթի դրույթների գործողության և դրա հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների վերաբերյալ:

Քանի որ հիմնադրության փաստաթղթով նախատեսվում է քաղաքաշինության ոլորտի զարգացում, ուստի մոնիթորինգի հիմնական ուղղությունը լինելու է շինարարության և շահագործման փուլերում օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման հավանականությունը, գործողությունների արդյունքում մարդու առողջության և անվտանգության վրա ազդեցությունների կանխարգելմանն ուղղված ուղղությունների մշակումը: Մոնիթորինգը պետք է ներառի՝

- մոնիթորինգի գործողությունները, վայրը,
- մոնիթորինգի իրականացման ժամկետները և հաճախականությունը,
- մոնիթորինգի գործողությունների պատասխանատուն,
- մոնիթորինգի արդյունքների ներկայացման եղանակը և ձևաչափը,
- մոնիթորինգի ընթացիկ վիճակը և հնարավոր խոչընդոտները:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ տվյալ ոլորտի նորմատիվային փաստաթղթերով սահմանված նորմերի խստիվ պահպանման նպատակով:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:
- Ակադեմիական քաղաքի կառուցման տարածքում մինչև նախագծային լուծումների ավարտը և կառուցապատման աշխատանքները սկսելը ներդնել վերահսկողական մեխանիզմներ՝ տարածքում կատարվող քարահավաքման

աշխատանքների պատճառով պեղված կառույցների քարերը չվտանգելու նպատակով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ճիշտ կիրառման արդյունքում ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

17.2. Հետնախագծային վերլուծություն. Մշտադիտարկման արդյունքների և հիմնադրությային փաստաթղթի, ՌԷԳ հաշվետվության տվյալների համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա նախաձեռնողի կողմից կազմվում է հետնախագծային վերլուծության ծրագիր համաձայն՝ ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման 5-րդ կետի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի, այդ թվում մարդու առողջության վրա չնախատեսված ազդեցությունների ի հայտ գալու դեպքում ձեռնարկողը նախատեսում և իրականացնում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ: Տարին մեկ անգամ մշտադիտարկման արդյունքները հրապարակել ձեռնարկողի էլեկտրոնային կայքում:

- Յուրաքանչյուր տարվա մինչև մարտի առաջին տասնօրյակը մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության արդյունքները հրապարակվում են նախաձեռնողի կայքում (առկայության դեպքում) կամ տրամադրվում են լիազոր մարմնին՝ վերջինիս կայքում տեղադրելու նպատակով:
- Նախատեսված մոնիթորինգի արդյունքում բացահայտված շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վրա չնախատեսված ազդեցություններ ի հայտ գալու դեպքում նախաձեռնողը նախատեսում և իրականացնում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ, սահմանելով իրականացման ժամկետներ:
 - Միջոցառումները հրապարակվում են նախաձեռնողի կայքում (առկայության դեպքում) կամ տրամադրվում են լիազոր մարմնին՝ վերջինիս կայքում տեղադրելու նպատակով:

18. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է. ✓ օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, ✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ ստրուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, ✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ ստրուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, ✓ ցանկապատել շինարարական հրապարակը, ✓ շինարարական աղբը տեղափոխել դրանց	ԿԳՍՄ	Համայնք Համապատասխան գերատեսչություններ ի տեսչական մարմիններ

		հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, ✓ շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ, ✓ շինարարության ընթացքում շենքերը և շինությունները պետք է ծածկել համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով, ✓ 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, ✓ արտադրական նշանակության շենքերում ժամանակակից ֆիլտրերի կիրառում՝ օդային ավազան արտանետումների քանկական և որակական ցուցանիշները մեղմելու նպատակով, ✓ օդային ավազան արտանետումները կանխարգելել նպատակով նպատակով կիրառել բարձր արդյունավետության գոիչներ, ✓ Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (ԱՕՊ) ժամանակահատվածում (քամու արագություն, փոթորիկ) աշխատանքների վերահսկում, անհրաժեշտության դեպքում դադարեցում: Շահագործման փուլ. Կլիմա. կլիմայի վրա ջերմոցային գազերի		
--	--	--	--	--

		ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է. ✓ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը նպաստող արտադրությունների, ջեռուցման համակարգերի կիրառում, ✓ ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծում, կիրառում:		
2	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. ✓ հանքավայրերի տարածքների, ռեկուլտիվացիան իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համապատասխանեցնելով բնակելի և հասարակական գոտու պահանջներին: ✓ հողի բերրի շերտի հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, ✓ բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: ✓ նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից, ✓ հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավել առանձին, ✓ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչություններ ի տեսչական մարմիններ

		հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, ✓ նախագծային լուծումներում նախատեսել շինարարական հոսքաջրերի հողային ռեսուրսների մեջ ներթափանցումը, բացառումը, ✓ հակասելավային, հակահեղեղային պաշտպանական միջոցառումների կիրառում, ✓ բարդ ռելիեֆային տեղամասերում էռոզիա առաջացնող գործոնների չեզոքացման, կանխարգելիչ պաշտպանական միջոցառումների կիրառում, Շահագործման փուլ. ✓ նախագծային լուծումներում նախատեսել մաքրման կայանի տեղադրում՝ հողային ռեսուրսները կեղտաջրերով աղտոտելուց խուսափելու համար, ✓ հողերի բարելավման միջոցով գոլորշացման նվազում:		
3	Ջրային ռեսուրսներ.	Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. ✓ ենթառողողումներից, ջրակալումներից ու ջրածածկումներից կառուցվածքները պաշտպանելու նպատակով այն տեղամասերում, որտեղ ստորերկրյա ջրերի մակարդակը բարձր է նախատեսել համապատասխան պաշտպանական միջոցառումներ, ✓ մաքրման կայանի կառուցում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հոսքը կանխելու նպատակով, ✓ մաքրված հոսքաջրերի ուղղորդված	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		օգտագործում՝ ռոռզման նպատակով, համապատասխան միջոցառումներ տարածքում առկա Քասախ-Էջմիածին ջրանցքի, Մերձավանին պատկանող ռոռզման փակ ցանցի և Սասունիկի ռոռզման ներտնտեսային ցանցի, ինչպես նաև Հայֆիլմից մինչև գերեզմանների տարածք՝ Նոր Դավմա ջրանցքի պահպանմանն ուղղված: ✓ տեղումներից առաջացող ջրային հոսքերը համապատասխան տեխնոլոգիական լուծումներով օգտագործել ռոռզման և ընթացիկ կարիքների համար, ✓ նախագծային փաստաթղթերում նախատեսել անձրևաջրերի հոսքի ուղղորդման և կուտակման լուծումները : Կեղտաջրեր. ✓ Համապատասխան հզորության մաքրման կայանի կառուցում հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հոսքը կանխելու նպատակով, ✓ մաքրման կայանների հզորությունն ընտրվելու է, ելնելով տվյալ կառույցի ծանրաբեռնվածությունից, ջրային ռեսուրսների օգտագործման ծավալից: Շահագործման փուլ. ✓ բացառել արտադրական և կենցաղային նպատակներով օգտագործվող առանց մաքրման հոսքաջրերի բաց թողումը շրջակա միջավայր, ✓ Մաքրման կայանում կեղտաջրերի մաքրման արդյունքում կայանից դուրս եկած մաքրված հոսքաջրերն ուղղորդված օգտագործվել		
--	--	--	--	--

		կանաչապատա տարածքների ոռոգման նպատակով:		
4.	Կենսաբազմազանություն.	Գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար անհրաժեշտ է. ✓ Մինչև հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունների շինարարական աշխատանքները, կատարել տարածքների ուսումնասիրություն՝ ուղղված ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդատեսակների բնադրավայրերի հայտնաբերմանը, ✓ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, պատասխանատու Կապալառու կազմակերպությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, ✓ Նախատեսվող գործունեությունների իրականացման ընթացքում հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով, ✓ Ճահճացած տարածքներում գործողությունների իրականացման դեպքում անհրաժեշտ է վերջինիս ռեկուլտիվացիան	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով ռեկուլտիվացիայից հետո, որպես բնակելի շրջանների վերապրոֆիլավորման գոտու համապատասխանությունը: Շահագործման փուլ. ✓ ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանակնագնակների վրա հակաթոշնային արգելափակոցների տեղակայում՝ թոշունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:		
5.	Թափոններ.	Գործունեության իրականացման հետևանքով թափոնների հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար նախատեսվում է. ✓ կատարել տարածքում առկա թափոնների տեսակավորում, տարանջատում դասակարգում, առաջնորդվելով ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների պահանջներով, ✓ թափոնների տեղափոխումը կատարել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից, ✓ նախատեսել վտանգավոր	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		թափոնների/քիմիական և այլ/ վնասագերծում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, քանի որ ՀՀ-ում բացակայում են վտանգավոր թափոնների տեղակայման պոլիգոնները, ✓ շինարարության ընթացքում թափոնների տեղափոխումը կատարել, բացառելով մեծածավալ քանակի և երկարատև երթուղով տեղափոխումը, ✓ կենցաղային աղբի համար տեսակավորման աղբամանների նախատեսում: Շահագործման փուլ. ✓ թափոնների կառավարումը կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ✓ թափոնների տեղափոխումը և չեզոքացումը նախատեսել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից, ✓ կենցաղային աղբի համար տեսակավորման աղբամանների նախատեսում, ✓ նախատեսել վտանգավոր թափոնների տեսակավորումը, պահպանման եղանակները՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ✓ տեսակավորման աղբամանների տեղադրում, որը կնպաստի կենցաղային աղբի ճիշտ կառավարմանը, աղբավայրերի բեռնաթափմանը և շրջակա միջավայրի պահպանմանը, ✓ յուրաքանչյուր տարածքում տեղադրվող		
--	--	--	--	--

		աղբահավաք տարողությունների քանակը պետք է բխի մարդկանց ծանրաբեռնվածությունից, ✓ անհրաժեշտ է ապահովել աղբահավաք տարողությունների, կոնտեյներների ժամանակին լվացումը, ախտահանումը:		
6.	Արտակարգ իրավիճակներ.	Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. ✓ պահպանել շինարարության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, առաջնորդվելով ՀՀՇՆ Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմերի ((ՀՀՇՆ 20.04, 2020 թ.) պահանջներով, ✓ նախագծային լուծումներում ապահովել բնակչության տարահանումը վտանգավոր գոտիներից, ✓ ապահովել տարածքների ինժեներական պաշտպանության միջոցառումներ՝ վտանգավոր բնական երևույթներից. ✓ շինություններում ապահովել օդափոխման և միկրոկլիմայի պահպանման, հրդեհաշիջման ժամանակակից համակարգեր: Շահագործման փուլ. ✓ արտակարգ իրավիճակների դեպքում ապահովել բնակչության ազդարարումը և տեղեկացումը, բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում՝ թաքստոց, ապաստարան, ✓ հատակագծային լուծումներում ապահովել ԱԻ և ՔՊ կառավարման կետերի	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		առկայությունը, ✓ կառուցապատման ընթացքում ապահովել շենքերը եվակուացիոն ելքերով՝ մարդկանց և կենդանիների համար, տարածքում փակցնել պաստառներ կամ ցուցանակներ:		
7.	Աղմուկ և թրթռում	Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. ✓ ՌԷԳ փաստաթղթով նախատեսվող գործունեությունների շրջանակներում կիրառել ձայնակլանիչ նյութեր և կոնստրուկցիաներ, ✓ կառուցապատման ընթացքում կիրառել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, ✓ տեխնիկայի և մեքենաների համար կիրառել համապատասխան խլացուցիչներ, ✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը: Շահագործման փուլ. ✓ Շենքերի և արտադրական տարածքներում նախատեսել ժամանակակից տեխնոլոգիաներ և սարքավորումներ, որոնց աղմուկի և թրթռման մակարդակները կլինեն նվազագույն, ✓ վերահսկել աղմուկի և վիբրացիայի նորմերը, առաջնորդվելով ՀՀ օրենսդրության պահանջներից:	ԿԳՍՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ
8.	Պատմամշակութային հուշարձաններ	ՌԷԳ շրջանակներում նախատեսվող գործողությունների տարածքներում Պատմամշակութային և բնության հուշարձանները պահպանելու. վնասակար ազդեցություններ	ԿԳՍՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		կանխարգելելու նպատակով նախատեսվում է. ✓ կատարել հուշարձանների ֆիզիկական գույքագրում, գնահատում և պահպանական գոտու կարգավորում: ✓ կառուցապատման ընթացքում տարածքում առկա «Քարե պատերով ջրվեժ» բնության հուշարձանի ինտեգրում նախագծային լուծումներում, ✓ դամբարանների տարածքը կարելի է կառուցապատել, եթե դրանք արժեքավոր ճարտարապետական կառույցներ չեն, ✓ նախնական տեղագնման արդյունքում բացահայտված Ծրագրի կառուցապատման առաջին՝ հյուսիսային հատվածում գտնվող հնավայրերը և պոտենցիալ պեղման գոտիները, անհրաժեշտ է պեղումների միջոցով հետազոտել 2026 թ. և հնագիտական արժեքները քաղելուց հետո դրանք, համապատասխան հանձնաժողովների եզրակացությամբ հանձնել նախագծողներին և կառուցապատողներին, ✓ տարածքում գտնված բնակատեղիի հատվածում անհրաժեշտ է խուսափել կառուցապատումից, կարելի է այն ինտեգրել ճարտարապետական լուծումներում, ✓ նախագծային լուծումները կատարել հնագետի հետ համաձայնեցմամբ՝ հնագիտական միավորների ամբողջականությունն ապահովելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում ստանալ ՀՀ ԿԳՄՄ նախարարության դրական եզրակացությունը, ✓ շինարարական աշխատանքները կատարել		
--	--	---	--	--

		միայն համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից թույլտվության տրամադրման և համապատասխան մասնագետի հսկողության դեպքում, ✓ տարածքում կատարվում են քարահավաքման աշխատանքներ, ինչը լրջորեն կարող է վտանգել հնավայրի պեղված կառույցների քարերը, անհրաժեշտ է ներդնել վերահսկման մեխանիզմներ: Բացի հայտնաբերված հնագիտական շերտերից շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են նաև այլ հնագիտական շերտերի հայտնաբերում, որի դեպքում պետք է առաջնորդվել Պատահական գտածոյի ընթացակարգով, որը ներառում է. ✓ Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները: ✓ Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը: ✓ Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից: ✓ Հայտնաբերված իրերի հետ կապված հետազա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը: Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)		
--	--	--	--	--

		կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շահագործման փուլ. • հնագիտական արժեքներով հայտնաբերված արածքների ինտեգրման ապահովում՝ ուսուցման ազդերին:		
9.	Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.	Մարդու առողջությունն, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է. ✓ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջների պահպանում, ✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, ✓ տեխնոլոգիական կլաստերի կազմակերպման ժամանակ ապահովել ծրագրի դրույթներով նախատեսված գործունեությունների՝ ագրոհամալիրի սանիտարապաշտպանիչ գոտիները: Շահագործման փուլ. ✓ անհրաժեշտության դեպքում ագրո	ԿԳՄՄ	Համյանք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		համալիրում կիրառել հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումներ, ✓ ագրոհամալիրում կենդանիների բուծումը, կենդանիների կերակրումը, անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը և այլ ծառայությունները կատարել ՀՀ գործող անասնաբուժական նորմերի պահպանմամբ, ՌԷԳ հաշվետվության շրջանակներում ներկայացվող սոցիալական գործոնների ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել. ✓ կենդանական ծագման արտադրանքի տնօրինումը (հավաքումը, պահումը, փոխադրումը, իրացումը, վերամշակումը, ոչնչացումը) և (կամ) պահեստավորվում է այնպես, որ երաշխավորվի վերջնական արտադրանքի ամբողջական անվտանգությունը, կանխվեն մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող վտանգի առկայությունը և շրջակա միջավայրի վարակման հնարավորությունը:		
10.	Սոցիալական գործոններ.	✓ բնակիչների կողմից օգտագործվող օտարման ենթակա տարածքների հաշվառում՝ դրանց ՀՀ օրենսդրության շրջանակներում լուծում տալու, փոխհատուցման գումարի չափը որոշելու նպատակով,	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		✓ գործող և լքված հանքերի կոնսերվացումը կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման, սահմանափակման, արգելման պահանջները, ✓ մասնավոր կամ իրավաբանական անձանց գույքի հաշվառում և փոխհատուցման պայմանագրերի կազմում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ✓ գոյություն ունեցող ենթակառուցվածքների ապամոնտաժում, տեղափոխում համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ, փոխադարձ համաձայնությամբ՝ պետական ծրագրով սահմանված պայմանագրերի հիման վրա: Շահագործման փուլ. ➤ Ապահովել ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշման պահանջները: ➤ Առաջնորդվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-ից 19-րդ հոդվածներով սահմանված դրույթներով և պահանջներով,		
--	--	---	--	--

		հատուկ ուշադրություն դարձնելով օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերին, Ակադեմիական քաղաքի ողջ տարածքը, մասնաշենքերի մուտքերը և բոլոր սենքերը հարմարեցնել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ և միջավայր:		
11.	Բարեկարգում, լանդշաֆտ.կանաչապատում.	Լանշաֆտի պահպանման համար նախատեսվում է. ✓ հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները: ✓ բացառել ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային փոփոխությունները, Բարեկարգում, կանաչապատում. տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է. ✓ բարեկարգել կառուցապատումից դուրս ազատ տարածքները, ✓ ուսանողության համար տարածքներում ազատ ժաներին համապատասխան կահավորանքով հանգստի գոտու կազմակերպում:	ԿԳՄՄ	Համայնք Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

		Կանաչապատում. հնարավորին կանաչապատել տարածքը, ծառերով, խոտածածկ հատվածներով: ✓ Ապահովել տարածքի կանաչապատումը կանաչապատման ռազմավարությանը համապատասխան, ✓ կանաչապատել տարածքը բուսաբանական այգու կողմից տրամադրված ցանկին համապատասխան ծառերով, ✓ լանդշաֆտային բույսերի ապահովում տեղական տնկարաններից, ✓ խոտածածկ հատվածներով, ջուր խնայող բույսերով ապահովում: Շահագործման փուլ. ✓ անձրևաջրերի հոսքի ուղղորդում և կուտակում՝ կանաչապատ տարածքի ռոտզման նպատակով, ✓ գորշ ջրով ռոտզման համակարգի կիրառում, ✓ Չկաչող ծառերի և բուսերի փոպարինում նորով:		
--	--	--	--	--

19. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան

ՌԷԳ շրջանակներում նախատեսվող գործողությունների արդյունքում կատարվող մշտադիտարկում	Մոնիթորինգի վայրը, պարբերականությունը (Ժամանակամիջոցը),	Մոնիթորինգի եղանակը, ձևը	Ծրագրի դրույթներին համապատասխան Մոնիթորինգի Պատասխանատու, Վերահսկող
---	---	--------------------------	---

Շինարարության փուլ			
1. Պատմամշակութային հուշարձաններ և հնագիտական շերտեր:	Ծրագրի շրջանակներում նախատեսված տարածքում և հարակից տարածքում մասնագիտական հսկողության սահմանում, հուշարձանների և հնագիտական շերտերի պահպանման նպատակով: Նախագծային և ամբողջ կառուցապատման փուլերում:	Տեսողական և սարքավորումների միջոցով ամենօրյա վերահսկողություն, համապատասխան մասնագետի/հնագետ/ ներգրավում:	ԿԳՄՄ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
2. Օդային ավազան արտանետումների մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխագազեր)	Ծրագրի շրջանակներում նախատեսված տարածք: Պարբերաբար՝ ստուգումներ, անհրաժեշտության դեպքում սահմանել ամենօրյա վերահսկում:	Օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման, առցանց հարթակի առկայության վերահսկում՝ համապատասխան մասնագետի կողմից այցեր:	ԿԳՄՄ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
3. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով	Ծրագրի շրջանակներում նախատեսված և հարակից տարածք: Պարբերաբար:	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում հողի անալիզ՝ համապատասխան լաբորատորիայում: Բուսահողի պահպանման և կիրառման	ԿԳՄՄ, Համայնք

		միջոցառումների վերահսկում:	
4. Կենսաբազմազանություն ուսումնասիրություններ՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների հայտնաբերման նպատակով :	Ծրագրի շրջանակներում նախատեսված և հարակից տարածքներ: Մինչև ծրագրով նախատեսված դրույթների իրականացումը:	Մասնագիտական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետի կամ գերատեսչության ներգրավում:	ԿԳՄՄ
5. Մարդու առողջություն և անվտանգություն	-Ծրագրով նախատեսված դրույթների իրականացման ընթացքում՝ ամենօրյա: -Համապատասխան սան.գոտիների պահպանման վերահսկում պարբերաբար: -Համապատասխան որոշումով՝ հետագա թաղումների արգելման վերահսկողություն՝ հարակից Գերեզմանոցի սան գոտու պահպանման նպատակով, ելնելով մարդու առողջության և անվտանգության պահպանման անհրաժեշտությունից՝ ամենօրյա:	Համապատասխան մասնագետների այցելություններ:	ԿԳՄՄ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին Համապատասխան գերատեսչություն

6. Սոցիալական գործոններ	Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների կիրառման վերահսկում պարբերաբար:	Համապատասխան պայմանգրերի առկայություն: Հանրության կողմից բողոքների արձագանքում:	ԿԳՄՄ Համայնք
7. Կանաչապատում, Բարեկարգում	Ծրագրով նախատեսված բարեկարգման և կանաչապատման դրույթների կատարման վերահսկում: Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ:	ԿԳՄՄ Համայնք
Շահագործման փուլ.			
1. Օդային ավազան	Ակադեմիական քաղաքի տարածքում՝ Օդի որակի վերահսկում՝ կայուն արտանետման աղբյուրներից ծխագազերի արտահոսքերը սահմանված նորմերի շրջանակներում պահպանելու նպատակով: Պարբերաբար	Չափումներ իրականացնող սարքերի տեղադրում՝ օդի որակի մոնիթորինգ իրականացնելու նպատակով:	Պատասխանատու Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
2. Զրային և հողային ռեսուրսներ	Ակադեմիական քաղաքի տարածքում Կենսաբանական մաքրման կայանների առկայության, վերջիններիս աշխատանքի վերահսկում՝ հողային և ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով:	Տեսողական ուսումնասիրություններ:	Պատասխանատու Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին

	Պարբերաբար:		
3. Մարդու առողջություն և անվտանգություն	Ակադեմիական քաղաքի տարածքում գործող արտադրությունների ՀՀ-ում առկա նորմատիվային փաստաթղթերի համապատասխանության պահպանում: Պարբերաբար	Համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրություններ:	Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
4. Կանաչապատ տարածք	Ակադեմիական քաղաքի տարածքում: Պարբերաբար	Ծառերի կաշոդականության ուսումնասիրություններ՝ համապատասխան մասնագետի կողմից: Չկաշոդ ծառերի հաշվառում, դրանց նոր ծառատեսակներով փոխարինման վերահսկում:	Համայնք Պատասխանատու
5. Պատմամշակութային հուշարձաններ և հնագիտական շերտեր:	Ակադեմիական քաղաքի տարածում: Պարբերաբար	Արտաքին երևույթներից և վնասվածքներից պահպանում:	ԿԳՄՄ Համայնք

20. Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում իրականացվող գործունեությունների ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (գնահատման -, +, 0 ցուցանիշներով) ամփոփ աղյուսակ:

Հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունները	Օդային ավազան	Ջրային ռեսուրսներ	Կենսաբազմա զանություն	Հողային ռեսուրսներ	Մոցիալական ոլորտ	Պատմամշ ակութային հուշարձան ներ, հնագիտակ ան շերտեր	Մարդու առողջություն և անվտանգություն
1. Հանքավայրերի ռեկուլտիվացիա, տարածքի մաքրում կենցաղային, շինարարական թափոնափայտերից և այլ արտադրական թափոններից:	+	0/+	0/+	+	+	-	+
2. Կառուցապատման աշխատանքների իրականացում:	-	0	0/-	0/-	+	+/-	-/0
3. Ագրո համալիրներն այլն:	-	-/0	0/+	-/0	+	-	+/-
4. Երկաթուղու կառուցում, երկաթուղային կայանի և մետրոյի կայանի կառուցում, գործարկում: Երկաթուղային կայարանի տեղափոխում: Ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում:	0/-	0	0	-	+	0/-	+
5. Մաքրման կայանի տեղադրում	+	+	+	+	+	0	+
6. Հանգստի գոտիների և կանաչ տարածքների ստեղծում:	+	+	+	+	+	+	+

21. Գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները:

Գնահատումները կատարվել են հիմք ընդունելով Ակադեմիական քաղաքի կառուցման տարածաշրջանին առնչվող առկա ելակետային տվյալները, քաղաքի կառուցման ծրագրային փաստաթուղթը, կատարված ուսումնասիրությունները, հետազոտությունները, միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության պահանջները: Քաղաքաշինության զարգացման ծրագրի ՌԷԳ-ի իրականացումը կլուծի մի շարք խնդիրներ՝ կնպաստի ինստիտուցիոնալ և իրավական ոլորտներին վերաբերող նպատակների վերլուծությանը և բացահայտմանը:

Մասնավորապես

- Վեր հանվեցին զարգացման ծրագրի հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, և առաջարկվեցին լուծումներ՝ դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված:
- ՌԷԳ գործընթացում վեր հանված առաջարկությունները և միջոցառումները հնարավոր կլինի իրականացնել ծրագրային փաստաթղթի ներդրման ընթացքում, և նպաստել դրանց աստիճանական լուծմանը:
- ՌԷԳ գործընթացում վեր հանված առաջարկությունները և միջոցառումները կներառվեն հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ հաշվետվություններում և կկիրառվեն նախատեսվող գործունեություններն իրականացնելիս:
- Գործընթացի ամենավաղ փուլերում համայնքը և համայնքի ավագանին ներգրավված է ծրագրի նախապատրաստման գործընթացում, և հնարավորինս հաշվի առնվել հանրության կարծիքը:

Խնդիրները և խոչընդոտները. Տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները:

ՌԷԳ հաշվետվության շրջանակներում կատարված հարցումների շրջանակներում բացակայում է.

- տարածքում առկա հանքերի վերաբերյալ՝ լքված, գործող, պաշարների առկայության, համապատասխան գերատեսչության կողմից անհրաժեշտ տեղեկատվությունը:
- Տարածքում անտառային գոտիների, կենսաբազմազանության առումով խոցելի տարածքների, վտանգավոր և այլ թափոնատեսակների առկայության, դրանց բնութագրերի, լուծումների վերաբերյալ համապատասխան գերատեսչության տեղեկատվությունը:
- Հանրապետության առողջապահական ոլորտում բնակչության թիրախային խմբերի հիվանդացության պատճառահետևանքային կապը հաստատող հետազոտություններ և/կամ մշտադիտարկումներ չեն իրականացվում, ինչը մարդու առողջության վրա ազդեցությունների գնահատման առումով

համապարփակ չի ներկայացվում:

- Գործընթացին շահագրգիռ կառույցների, բնակչության և հանրության պասիվություն, արձագանքների բացակայություն:

22. Հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.

Հաշվետվությունը կազմելիս հաշվի են առնվել ԱԲ-ի վերաբերյալ հիմնադրությային փաստաթուղթը, Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, համապատասխան գերատեսչություններից ստացված տեղեկատվությունները, տարբեր ժամանակներում իրականացված համապատասխան ուսումնասիրությունները, քարտեզագրական նյութերը, մասնագիտական կառույցների կողմից տրամադրված տեղեկատվությունը, տարածքին և ոլորտներին առնչվող համապատասխան գրականությունը, ինտերնետային կայքերը:

23. Տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ շահագրգիռ հանրությունն իրավունք ունի մասնակցելու ՇՄԱԳ-ի, ՌԷԳ-ի և փորձաքննության գործընթացներին, իսկ ՀՀ կառավարության 21.12.2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ՌԷԳ շրջանակի որոշման փուլի ընթացքում իրականացվում է հանրային իրազեկում՝ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով: Վերը նշված կարգի համաձայն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Ակադեմիական քաղաք» ՀՄԴ-ի պատվերով, «ՆՍԹ Արքիթեքչուր Ստուդիո» ՍՊԸ-ի կողմից մշակվող Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի հիմնադրությային փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման շրջանակի որոշման փուլի ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել է հանրային իրազեկում՝ քաղաքապետարանի պաշտոնական կայքի և օրենքով սահմանված տեղեկատվության տարածման այլ միջոցներով (մամուլ, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային նշանակության շենքերի ցուցատախտակներ):

Համայնքներին և հանրությանը ներկայացվել է Երևան համայնքի և Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում ակադեմիական քաղաքի կառուցման ներդրումային ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը՝ էլեկտրոնային

տարբերակով: Համայնքներին և համապատասխան առնչվող գերատեսչություններին ներկայացվել է նախատեսվող ներդրումների, վերջինիս դրույթների իրականացման նպատակը: Շահագրգիռ հանրության կողմից որևէ առաջարկություն, դիտողություն կամ կարծիք չի ներկայացվել:


24. ՌԷԳ հաշվետվության շրջանակներում կատարվող առաջարկություններ

- ՌԷԳ հաշվետվության շրջանակներում դիտարկել է Ակադեմիական քաղաքի նախատեսվող գործունեությունների կառուցման փուլերում պահպանել գործունեությունների հետ առնչվող սանիտարապաշտպանիչ գոտիները, առաջնորդվելով ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ-ի պահանջները:
- Շինարարության և շահագործման ընթացքում ղեկավարվել հանրային առողջության ապահովման օրենսդրության պահանջներով և դրույթներով:
- Նախատեսվող գործունեությունների իրականացման փուլում անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 06 հրամանի հավելվածով սահմանված գործունեության տեսակներին, մասնավորապես՝ ագրոհամալիրի սանիտարական գոտիներին առնչվող համապատասխան չափորոշիչները:
- Հարակից տարածքում առկա գերեզմանոցից պահպանել համապատասխան հեռավորության՝ 300մ սանիտարապաշտպանիչ գոտին:
- Համապատասխան որոշման ընդունում՝ տարածքին հարակից գերեզմանոցը փակ համարելու վերաբերյալ:
- «Երկաթուղային գծի յուրաքանչյուր կողմում երկաթուղու պաշտպանական գոտու արտաքին սահմանագծի հեռավորությունը երկաթուղային գծի առանցքից սահմանել 50 մետրից ոչ պակաս՝ համաձայն «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի:
- Անհրաժեշտության դեպքում, տարածքի մասնակի հատվածները ցանկապատել և ցանկապատի ամբողջ երկայնքով կանաչապատել՝ ծառերով:
- ԿԳՄՍ-ի համատեղ և համաձայնեցված պահպանել տարածքում առկա հուշարձանների և հնագիտական շերտերը, դրանց պահպանման գոտիները կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել տեղափոխման աշխատանքներ:
- Տարածքի կանաչապատումն իրականացնել մասնագիտական կառույցների հետ համատեղ:
- Տարածքի աղբահեռացումը կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ:


- Ջեռուցման և տաք ջրամատակարարման աղբյուր հիմնականում օգտագործել այլընտրանքային էներգիայի աղբյուրները՝ հնարավորինս նվազեցնելով գազի ծախսը:
- Ապահովել համապատասխան հզորության կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում՝ իրականացնել մեխանիկական, կենսաբանական մաքրում:
- Մաքրված կեղտաջրերը օգտագործել տարածքում՝ ռոռզման նպատակներով:
- Տարածքի կանաչապատումն իրականացնել տեղական բուսատեսակներով:
- Տարածքի կանաչապատումն իրականացնել այնպես որպեսզի ապահովվի Ակադեմիական քաղաքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նորմատիվային ցուցանիշը մեկ շնչի հաշվով:
- Նախագծային լուծումներում պարտադիր հաշվի առնել համապատասխան լիազոր մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները և լուծումներն իրականացնել իրենց հետ համաձայնեցված:
- Հաշվի առնելով Երևան քաղաքի բարձր սեյսմիկ գոտում գտնվելը, բոլոր ռիսկերը, որոնք կապված են խոշոր համալսարանական համալիրի կենտրոնացված կառուցման, ենթակառուցվածքների, օրինակ լաբորատորիաների վնասման վտանգի հետ, նախատեսել ավելի խիստ սեյսմակայուն նորմեր ու արտակարգ իրավիճակների պլան, ներառելով մեծաքանակ ուսանողների անվտանգության ապահովվելուն ուղղված միոցառումները:
- Ներկայացված առաջարկությունները և միջոցառումների կառավարման պլանով նախատեսված միջոցառումները անհրաժեշտ է հաշվի առնել հիմնադրույթային փաստաթղթում, ինչպես նաև դրա շրջանակներում նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ հաշվետվություններում:
- Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը մշակի ռազմավարական ծրագիր, հաշվի առնելով ԱԲ-ի կառուցման բոլոր հնարավոր բացասական շեղումները՝ ֆինանսական միջոցների բացակայության դեպքում, ներկայացնի դրանց լուծումները, ներառյալ ֆորս-մաժորային իրավիճակների դեպքում:
- Համաձայն ԿԳՄՄ նախարարության պահանջի՝ Ակադեմիական քաղաքի տարածքում փաստագրված արժեքավոր պատմամշակութային արժեքների հետագա պահպանման և նախատեսվող կառույցների հետ ինտեգրման համար նախապես պետք է կատարվի այդ հուշարձանների ամրակայման աշխատանքներ, որոնց առաջադրանքները, էսքիզային ու աշխատանքային նախագծերը և ամրակայման աշխատանքները պետք է իրականացնեն համապատասխան արտոնագրված և լիցենզավորված մասնագետների և կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով ԿԳՄՄ նախարարության հետ:
- Հիմնադրույթային փաստաթղթով ներկայացված նախատեսվող գործունեությունների իրականացման փուլերում անհրաժեշտ է կազմել կանաչապատման հատակագիծ՝ ըստ կառուցապատման փուլերի, ապահովելով ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջները, և ներկայացնել Երևանի քաղապետարանի համաձայնեցմանը:

Գրականության ցանկ.

1. Երևան քաղաքի 2024թ. հաստատված գլխավոր հատակագիծ;
2. Աշտարակ համայնքի 2022-26թթ. հնգամյա զարգացման ծրագիր:
3. ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:
4. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /<https://armstat.am/>:
5. ՀՀ ՇՄՆ «ՀԻՌՈՐՈՒԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք:
- 6.«Աղմուկն աշխատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ:
- 7.Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
- 8.ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
9. Առողջապահության Ազգային Ինստիտուտի 2025թ. տեղեկագիր:
- 10.ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ:
11. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամաններ:
12. Առողջապահության Ազգային Ինստիտուտի 2023թ. տեղեկագիր:
- 13.ՀՀՇՆ 30-01-2023 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ:
- 14.«ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը՝



Կադաստրի կողմից Ակադեմիական քաղաքի սահմանագծի ուղղված հատակագիծ



Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի և Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի
պատմամշակութային հուշարձանները.

1.1 ԱԶԱՓՆՅԱԿ թաղամաս

Հուշարցանի համարը	Հուշարցանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարցանախումբը, հուշարցանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն ²
1	2	3	4	5	6	7	8
1			ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2 հազ. կես	Աջափնյակի հին գերեզմանոցում	<	1
2			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2 հազ.	Սիլիկյան թաղամա- սում, Երկաթուղու «Սիլիկյան» կայարա- նից 2.5-3 կմ հս, «Դեմեր» վայրում	<	2
	2.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղիի ամ մասում, «Սիլիկյան» կայարանից 0.5 կմ հս	<	2.1: Ենթակայու- թյամբ ներկայացված է 3 հուշարցան (2.1.1-2.1.3)
3			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՋՈՀԿԱԾ ԱԶԱՓՆՅԱԿՑԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ	1998 թ.	Սեբաստիայի և Միրաքյան փող. միջնամասում	S	4
4			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ	1982 թ.	Հ. Շիրազի փող. 25, ԴՕՍԱԱՖ-ի միացյալ տեխնիկական դպրոցի բակում	S	5

² Սույն ցուցակի ծանոթագրության սյունակում (թիվ 8) տրվում են 4-րդ սյունակում ներկայացված հուշարցանների և ենթահուշարցանների համարները պետական ցուցակի (կրճատ՝ պետ. ցուցակ) համացայն: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն հուշարցանի առանցին հատկանիշների (տեղ, վիճակ, բնութագրական օբյեկտների առկայություն և այլն) վերաբերյալ: Ցուցակը օտարման ոչ ենթակա այլ ենթահուշարցանների (խաչքար, տապանաքար և այլն) անվանումներով չծանրաբեռնելու նպատակով ծանոթագրության մեջ ներկայացվում են նաև դրանց քանակական տվյալները և պետական ցուցակի ենթահամարները:

5		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԵՐԶՆԿՅԱՆԻ	1985 թ.	Արզումանյան փող. 8, թիվ 118 դպրոցի առջև	S	6
6		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ՍԵՔԱՍՏԱՑԻ ԶՈՀԵՐԻՆ	1970 թ.	Գ. Զոհրապ և Ա. Սարգսյան փող. խաչմերուկ	S	7
7		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՊԵՅՈ ՅԱՎՈՐՈՎԻ	1966 թ.	Արզումանյան փող. 22, թիվ 131 համանուն դպրոցի առջև	S	8
8		ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 3-2 հազ.	Մարգարյան փող. 2, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի առջև	Հ	9
9		ՔԱՆԴԱԿ «ԱՆՈՒՇ ԵՎ ՍԱՐՈ»	1973 թ.	Հովհ. Թումանյանի անվ. զբոսայգի	S	10
10		ՔԱՆԴԱԿ «ԱՐՈՒՍ»	1968 թ.	Մարգարյան փող. 2, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի առջև	S	11
11		ՔԱՆԴԱԿ «ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈ»	1986 թ.	Հովհ. Թումանյանի անվ. մանկական զբոսայգում	S	12
12		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԱԶԱՓՆՅԱԿ - 1»	Ք.ա. 14-12 դդ, Ք.հ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի պարս- պի մոտ, գետից 80 մ վերև	Հ	13
13		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԱԶԱՓՆՅԱԿ - 2»	Ք.ա. 14-13 դդ, Ք.հ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի փորցակայանի մոտ	Հ	14
14		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԱԶԱՓՆՅԱԿ - 3»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին, ֆիզիկայի ինստիտու- տի փորցակայանի մոտ	Հ	15
15		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԱԶԱՓՆՅԱԿ - 4»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին, Դավթաշենի կամրջից 0.5 կմ հս, կիրճի 3-րդ դարավանդին	Հ	16

1.105 ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻԿ գյուղ¹

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հվ-ամ, «Ճլճլան աղբյուր» տեղամաս տանող ճանապարհի աջ կողմում, ժայռոտ հրվանդանի վրա	<	1
2			ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2.5 կմ հվ-աե, «Կաքավի ցոր» վայրում	<	2
3			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 2.4 կմ հվ-աե, «Դիտվան» վայրում	S	4
4			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 3 կմ հվ-աե, «Շամիրամի դաշտ» վայրում	S	3
5			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	ուշ միջնադար	գյուղից 2.6 կմ հվ-աե, «Կիրակոսի հող» վայրում	S	5
6			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ՍԱՍՈՒՆԻԿ	7- 20 դդ.	գյուղից 1 կմ ամ, Ավան-Լեռնարոտ ճանապարհամի մոտ	<	6: Ենթակայությանը ներկայացված է ևս 4 հուշարցան (6.1.1.1-6.1.1.2, 6.2-6.3)
	6.1		Գերեզմանոց	7-20 դդ.		S	6.1.1
	6.2		Եկեղեցի	7 դ.	գյուղատեղիի աե մասում, բարցունքի վրա	<	6.1
7			ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Թալիշի առվի վերև» վայրում	<	8
8			ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5 կմ հս-ամ	<	10
9			ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-ամ, «Արվա Չխուր» վայրում	<	7
10			ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 3 կմ հս, «Գազով արտեր» վայրում	<	9

¹ Գյուղի հուշարցանները տեղորոշված են մախկին Սասունիկ գյուղի նկատմամբ (ինչպես մարզի պետ. ցուցակում):

11		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՆՏ	Ք.ա. 2-1 հազ.	Սասունիկ-Լեռնարոտ ճանապարհին	<	11
12		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՆՏ	Ք.ա. հազ.	1 գյուղից 1 կմ հվ-ամ, «Ճլճլան աղբյուր» տանող դաշտում	<	13
13		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՆՏ	Ք.ա. հազ.	1 գյուղից 1.9 կմ հվ-ան, «Շողոմազյան» վայրում	<	12
14		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՆՏ	Ք.ա. հազ.	1 գյուղից 2.2 կմ հվ-ան, «Կաքավի ցոր» վայրում	<	14
15		ԵԿԵՂԵՑԻ	12-13 դդ.	գյուղից 1 կմ ամ, Անդրանիկ Գալոյանի հողամասի մոտ	S	15
16		ՏԱՊԱՆԱՔԱՐ ՎԱՐԴԱՆԻ	14-15 դդ.	գյուղից 1 կմ ամ, Հռիփսիկ Գևորգյանի հողամասի մոտ	<	16

Յնդվանքում ենք, որ ԲԲ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Անարժեքական քաղաք» ԲԼԴ-ի ցանցերով, «ԼԱՍԻ Արդիտե-ր» Արդիտի, ԼԴԵ-ի կողմից, մշակվում է Անարժեքական քաղաքի գլխավոր հասակազորի նախագիծը՝ «Հասարակի Հանրահանգրվան կրթության մեջ»-ն 2030 թվականի զարգացման ուղևանքի նախագիծը, հասարակության մասին արեղի հավելանքի ԲԶ-դի կետի 4-րդ մեղանքում, որ արդեն համախմբվում է Անարժեքական քաղաքի ԲԲ տեսլական քաղաքի և ԲԲ Արդիտերի մարզի Անարժեքական քաղաքի վարչական տարածքում ընդգրկված տարածքի համար ՁԻժի ինքնակառավարման կողմից մշակված հայրենակառավարման նախագիծը՝ ինքնի վրա կառված

«Լոգոս» ՄԴԵԿ իրականացրեց «Անարդիմական քաղաք» հանգստավայրային նախագծի զննարկող հասնակազմի ռազմավարական նյութական ցանկառման (ՌԵԳ) համաձայն «Ռազմա-Ֆինանսի վրա ազդեցության գնահատման և փորձարկման» մասին» օրենքով [21.08.2014 ՅՈ-110-Լ, խմբ. 09.05.20 ՅՈ-150-Լ] և ԳԲ կառավարության 21.12.2023թ. «Ռազմավարական նյութական ցանկառման կարգի և ռազմավարական նյութական ցանկառման հաշվետվությանը մեղադրվող րախանները հանրա-տեղա մեղքի» N 2024-Լ որոշմանը մասնակցած կարգի, հիմնվածվում է ՌԵԳ չորս-մեկի որոշման վրա: Զահագրվող հանրությունն իրավունք ունի մասնակցելու ՌԵԳ-ի և փորձարկման ցանկառման գործընթացներին, իսկ տեղեկատվություն կարող է ստանալ դիմելով Երեսմի քաղաքապետին [հասցի՝ Երեսմ, Արդշիրի վրդ, 1, կամ դաշտումային խաղերի |www.yerevan.am|:

165